Հ. Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱԼՏԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ ԴԻԼՈՅԱՆ. ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ ԿԱՄ MEMENTO VIVERE

ԵՐԵՎԱՆ 2020



9(47.925)
Հ-42
հշ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ
КАФЕДРА ИСТОРИИ АРМЕНИИ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY
CHAIR OF THE HISTORY OF ARMENIA

А.Ж. АРУТЮНЯН
H. G. HARUTYUNYAN

ПРОФЕССОР ВАЛЬТЕР АРТАШЕСОВИЧ ДИЛОЯН. ИСТОРИОГРАФИЧЕСКИЙ ОЧЕРК ИЛИ MEMENTO VIVERE

PROFESSOR VALTER ARTASHESOVICH DILOYAN. HISTORIOGRAPHIC SKETCH OR MEMENTO VIVERE

ԼԻՄՈՒՇ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

YEREVAN - 2020

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Հ. Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱԼՏԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ ԴԻԼՈՅԱՆ. ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ ԿԱՄ MEMENTO VIVERE

ԵՐԵՎԱՆ - 2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 422

Հրատարակվում է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ.՝ Է. Գ. Մինասյան
Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ.՝ Հ. Ժ. Հովհաննիսյան
պ.գ.թ., դոց.՝ Վ. Ս. Պետրոսյան
բանասիր. գ. թ., դոց.՝ Ա. Վ. Սաֆարյան

Հարությունյան Հ. Ժ.
Հ 422 ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱԼՏԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ ԴԻԼՈՅԱՆ. ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ ԿԱՄ MEMENTO VIVERE/ Հ. Ժ. Հարությունյան.- Եր.: Լիմուշ, 2020.- 142 էջ:

6227

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ.՝ Վ. Ա. Դիլոյանի հրատարակած մենագրությունները և բազմաթիվ ու բազմաբովանդակ հոդվածները հույժ կարևոր նշանակություն ունեցան ինչպես հայագիտության, այնպես էլ հատկապես XIXդ. հայ-ռուսական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության ասպարեզներում: Պատմագիտության այս երկու բնագավառներում նրա գիտական ժառանգությունը տվեց բազում խնդիրների և մինչ այդ չհանգուցալուծված հարցերի պատասխանները: Դրանք նաև պարարտ հող նախապատրաստեցին ուսումնասիրողների հետագա սերունդների համար՝ վերածվելով կարևոր ու յուրատեսակ ուղենիշի:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-64-337-3

© Հարությունյան Հ.Ժ., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն կամ հեղինակի կողմից.....6
Վ.Ա. Բայբուրդյան – Տաղանդավոր պատմաբանը և բարձր մտավորականը.....10
Օ.Ե. Պետրունինա - Научное значение трудов В.А. Дилояна.....13

ԳԼՈՒԽ I
ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱԼՏԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ ԴԻԼՈՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1950-1980-ԱԿԱՆ ԹԹ.

Ա. Կյանքը և գիտա-մանկավարժական գործունեությունը (համառոտ ակնարկ).....15
Բ. Ճանապարհ դեպի գիտության բարձունքները.....18
1) Լազարյանների պատմությունն ու գործունեությունը Վ.Ա. Դիլոյանի հայեցակարգում.....18
2) Վ.Ա. Դիլոյանը և հայոց պատմության XIX դարի հիմնահարցերը.....34
Գ. Վ.Ա. Դիլոյանի «Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները» մենագրությունը որպես գաղափարական անցումային շրջափուլի ուսումնասիրություն.....42

ԳԼՈՒԽ II
Վ.Ա. ԴԻԼՈՅԱՆԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ա. Վ.Ա. Դիլոյանը և հայոց պատմության նորովի պարբերացման հիմնահարցը.....78
Բ. Վ.Ա. Դիլոյանը և հայոց պատմության XVI-XIX դարի հիմնահարցերի նորովի մեկնաբանությունները.....84
1) XVIդ. հայ ազատագրական շարժումների լուսաբանումը.....84
2) XVIIդ. երկրորդ կեսի – XVIIIդ. սկզբների հայ ազատագրական պայքարի լուսաբանումը.....89
3) Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացնելու խնդիրը Վ.Ա. Դիլոյանի պատմահայեցողության մեջ.....103
4) Արևելյան Հայաստանը Ռուսաստանյան կայսրության կազմում գտնվելու հիմնահարցը Վ.Ա. Դիլոյանի պատմահայեցողության մեջ (իրավա-քաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը).....108
5) Վ.Ա. Դիլոյանը որպես թարգմանիչ և խմբագիր.....114
Վերջաբան.....118
ЗАКЛЮЧЕНИЕ.....120
SUMMARY.....122
Վ.Ա. Դիլոյանի հրատարակած աշխատությունների ժամանակագրական ցանկ.....124
Գրականություն Վ.Ա. Դիլոյան կյանքի և հրատարակած աշխատությունների մասին.....137
Հապավումներ.....138
Содержание.....139
Contents.....141

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԿԱՄ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Գիր սիրե, ղալամ սիրե, դավթար սիրե:
(Սայաթ-Նովա, Արի, ինձ անգաճ կալ...)

Այսպես սիրում էր կրկնել Վ.Ա. Դիլոյանը, իսկ հաճախ, որպես վերջաբան իր կողմից ավելացնում էր ՄԱՐԴ սիրե արտահայտությունը, քանզի ինքն այդպիսին էր և ցանկանում էր որպեսզի մյուսները ևս ունենան նույնպիսի պահվածք:

Մեծ և անուրանալի է երկարատև տարիներ ԵՊՀ-ի «Համաշխարհային պատմության» ամբիոնի վարիչի պաշտոնն զբաղեցրած պ.գ.դ., պրոֆ. Վ.Ա. Դիլոյանի դերը պատմագիտական մտքի առաջընթացի և զարգացման բնագավառներում՝ խորհրդային և հետխորհրդային Հայաստանում: Նրա համար կարևոր էր ինչպես Բուհ-ում դասավանդման պրոցեսի իրականացումը, որի առանցքն էր հանդիսանում կադրերի ճիշտ ու անսխալ ընտրությունը և փոխարինող սերնդի պատրաստումը, այնպես էլ զուտ գիտությամբ զբաղվելը: Նա հմտորեն կենսագործում էր այս երկուսն էլ և, այդ պատճառով էլ, խորը և անջնջելի հետք թողեց իր գործունեությամբ հայ պատմագրության մեջ: Այս ամենին պետք է ավելացնել նրա չափից ավելի համեստ կեցվածքը, որը նրա համար վերածվել էր նշանաբանի և այդպես էլ դաստիարակում էր իր բոլոր աշակերտներին:

Այս տարի լրանում է Վ.Ա. Դիլոյանի ծննդյան 90 և մահվան 15-ամյակները: Տողերիս հեղինակի առաջին ծանոթությունն այս նշանավոր մարդու հետ տեղի ունեցավ 1980թ., երբ հանդիսանում էի ԵՊՀ՝ Պատմության ֆակուլտետի, նույն բաժնի երկրորդ կուրսի

ուսանող, չնայած որ նրան գիտեի արդեն 1979թ: Փաստորեն արդեն անցել է ուղիղ 40 տարի, որ ճանաչել եմ նրան:

Հանդիսանալով խորհրդահայ պատմագրության երկրորդ սերնդի նշանավոր ներկայացուցիչներից մեկը (ավագ կամ առաջին սերնդից հիշատակության են արժանի ԽՍՀՄ ակադ. Հ.Հ. Մանանդյանը, Լեոն, ակադ. Հ.Ա. Օրբելին և մյուսները) Վ.Ա. Դիլոյանը եռանդորեն շարունակեց նրանց սկսած գործը, հատկապես իր նշանավոր ուսուցչի՝ Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի, որի նկատմամբ նա տածում էր մեծ հարգանք և հիշում որպես մեծագույն և անսպառ գիտելիքների տեր հետազոտողի: Հետևելով իր ուսուցչին նա ևս, հայ և համաշխարհային պատմությունների, հատկապես Միջին և Նոր ժամանակաշրջանների հայտնի և բանիմաց մասնագետներից մեկն էր ոչ միայն Հայաստանի, այլև ԽՍՀՄ-ի տարածքներում: Նա միաժամանակ հանդիսանում էր նաև օտար լեզուների ՄԵԾ վարպետ և հայերենին հավասար տիրապետում էր ռուսերենին և, առանց չափազանցության անգլերենին:

10 տարի առաջ, երբ ԵՊՀ Պատմության ֆակուլտետում նշվում էր Վ.Ա. Դիլոյանի 80-ամյակը (2010թ. աշնանը), ակադ. Վ.Բ. Բարխուդարյանն իր ելույթում իրավացիորեն նշեց, որ իրենց սերնդի ամենամեծ սխալներից էր այն, որ Վ.Ա. Դիլոյանը չդարձավ ակադեմիկոս կամ գոնե ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ: Նրա խոսքը լրացրեց փ.գ.դ., պրոֆ., նախկինում ԵՊՀ Փիլիսոփայության ֆակուլտետի դեկան և Փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ՝ Հ.Ղ. Միրզոյանը (նա ևս ցավոք արդեն մեր կողքին չէ և վախճանվել է 2019թ. օգոստոսին): Վերջինս նշեց. «Ինչպիսին մարդու ձեռագիրն է, այնպիսին էլ նրա բնավորությունը»: Նրա ձեռագրում տառերն վերածվում էին իսկական մարգարիտների:

Ահա այսպիսին էր իմ և շատ-շատերի ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ Վալտեր Արտաշեսի Դիլոյանը:

Ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունն հայտնել Վ.Ա. Դիլոյանի ընտանիքի անդամներին, որոնք այս գրքույկի ստեղծման ընթացքում մեծապես աջակցեցին տողերիս հեղինակին, առաջին հերթին հուշելով մեզ անհայտ փաստեր, կապված նրա կյանքի և գիտական գործունեության հետ: Խոսքս վերավերում է նրա որդուն՝ Միխայիլ Դիլոյանին, աղջկան՝ Լիլիա Դիլոյանին, ինչպես նաև զարմիկին (քրոջ որդուն)՝ Աշոտ Ռաֆայելի Գալստյանին: Դժբախտաբար, երբ մենք ձեռնարկեցինք այս աշխատության շարադրանքը, ապա այլևս կենդանի չէր նաև Վ.Ա. Դիլոյանի կինը՝ Ալեքսանդրա Միխայիլի Մազուրովան (1929-2012թթ.), որը անխոս, կարող էր իր «հուշումներով« մեծապես աջակցել մեր շարադրանքին (նրանց համատեղ կյանքը տևեց ավելի քան 50 տարի):

Առաջանում է մեկ տրամաբանական հարց. ինչպե՞ս «ծնվեց» այս գիրքը: Մեր առջև նպատակ էին դրել կազմելու Վ.Ա. Դիլոյանի կենսամատենագիտությունը, սակայն դա, և ոչ մի կերպ չստացվեց: Նրա հետաքրքրությունների շրջանակն այնքան լայն էր, որ անհնարին էր ներկայացնել մեկ կենսամատենագիտության սահմաններում: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ցանկանում եմ նշել նաև հետևյալ. Վ.Ա. Դիլոյանին և նրա նման վառ անհատականություններին ես՝ ինքս ինձ անվանել եմ ԼՈՒԳԱԼ, բայց երբեք այս բառը չեմ արտաբերել: Հնագույն Շումերում և Աքքադում այսպես էին անվանում ամենանշանավոր և աչքի ընկած գործիչներին, որը նշանակում է «մեծ մարդ»: Նա կարող էր լինել և՛ թագավոր, և՛ քաղաքական գործիչ, և՛ զորավար, իսկ առավել լայն իմաստով՝ ժողովրդի առաջնորդ:

Միայն 1999թ. նա պարգևատրվեց «Մովսես Խորենացի» մեդալով: Պարգև, որ չափից ավելի ուշացած էր ?

Ամբիոնում նա շարունակել է աշխատել մինչև իր կյանքի վերջը: Մահացել է 2005թ. մայիսի 12-ին Երևանում և թաղված է Էջմիածնի քաղաքային հին գերեզմանատանը:

Այժմ մեր կողքին չեն նաև Վ.Ա. Դիլոյանի մերձավոր ընկերները: Բարեբախտաբար մեր կողքին է նրա լավագույն ընկերներից մեկը, իրանագիտության հայկական դպրոցի նահապետներից՝ Վահան Առաքելի Բայբուրդյանը, որը և սիրահոժար համաձայնվեց իր կողմից գրել առաջաբան՝ նվիրված Վ.Ա. Դիլոյանին:

Վ.Ա. Բայբուրդյան – Տաղանդավոր պատմաբանը և բարձր մտավորականը.

Վալտեր Դիլոյանին ես ճանաչել եմ դեռևս ուսանողական տարիներից, երբ ինքը Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ավարտական կուրսի ուսանող էր, իսկ ես բանասիրական ֆակուլտետի արևելյան (իրանական) բաժնի երկրորդ կուրսի ուսանող: Մեր փոխադարձ համակրանքը, որը խարսխվում էր կյանքի հիմնարար արժեքների նկատմամբ նույնականության կամ մոտիկ լինելու սկզբունքների վրա, շուտով վերածվեց ամուր ընկերության: Իսկ տարիների ընթացքում մեր ընկերությունը վերածվեց իսկական եղբայրական հարաբերությունների: Խոստովանում եմ, որ իմ այդ վաղեմի ընկերը կյանքիս ճանապարհին հանդիպած ամենահետաքրքիր մարդկանցից մեկն է եղել:

Վ. Դիլոյանը բնությունից շռայլորեն օժտված անհատականություն էր, բազմաշնորհ և խոհեմ մարդ, տաղանդավոր պատմաբան, օժտված վերլուծական մտքի անսպառ հնարավորություններով: Նրա կերպարի ու նկարագրի մեջ ներդաշնակ կերպով համադրվում էր գիտնականն ու բարձր մտավորականը: Նրա մտքի ու գրչի արգասիքն է հանդիսանում հայ ժողովրդի պատմության տարբեր հանգուցային հարցերին նվիրված բարձրարժեք աշխատությունները, որոնք նրան բերեցին մեծ ճանաչում: Հիրավի, տաղանդավոր գրչով գրված նրա ուսումնասիրությունները իր մտքի խորհախորուդ թռիչքների ցայտուն վկայությունն են: Որպես պատմաբան օժտված էր նորարական տաղանդով, թափանցող մտքով, տրամաբանական կուռ մտածողությամբ: Նրա աշխատությունները, համարյա առանց բացառության, շարադրված են նյութի խորը և համակողմանի իմացությամբ և, գեղեցիկ ու անբասիր հայերենով:

Մենք մեզ իրավունք են վերապահում ասելու, որ, անկասկած պրոֆեսոր Վ. Դիլոյանը հայ պատմագիտության երախտավորների շարքում ունի իր արժանի և մշտամնա տեղը: Իր վաստակով նա գիտական հասարակայնության շրջանում ձեռք է բերել հարգված անձնավորության վարկ:

Պրոֆ. Վ. Դիլոյանը բազմազան հետաքրքրություններ ու ծրագրեր հետապնդող մարդ էր: Իր գիտական գործունեությունը հաջողությամբ համադրում էր դասախոսական աշխատանքի հետ: Նրա փայլուն դասախոսությունները դեռ երկար կհիշվեն սովորող երիտասարդության կողմից:

Դժբախտաբար, կյանքի թելը կտրվելու պատճառով տաղանդավոր գիտնականին չհաջողվեց իր ավարտին հասցնել իր մտահղացած կոթողային աշխատությունը, որը նվիրված էր լինելու հայ ժողովրդի մեծ երախտավորներից մեկի՝ Ներսես Աշտարակեցու կյանքին ու գործին:

Պրոֆ. Վ. Դիլոյանը նաև տաղանդավոր թարգմանիչ էր: Փայլուն տիրապետելով օտար լեզուների, նա թարգմանել և գիտական շրջաններին ու ընթերցող լայն հասարակայնությանն է ներկայացրել պատմագիտական բնույթի մի շարք արժեքավոր գործեր:

Երջանկահիշատակ իմ սիրելի ընկերոջը բնորոշ էր նաև ջերմ հայրենասիրությունը: Նա իր ողջ կյանքում մշտապես ապրել է հայրենիքի հոգսերով: Նրա կրծքի տակ բաբախում էր իսկական ու ճշմարիտ հայրենասերի սիրտը: Հայրենիքի լավն ու վատը մշտապես հուզում էր նրան: Նա պատրաստ էր հայրենիքի խորանին դնել այն բոլոր լավը, ինչ ուներ իր մեջ: Նրա համար Հայաստանն ու հայոց պետականությունը ներշնչման անսպառ աղբյուր էր:

Տարիների հեռվից հիշում եմ, թե պրոֆ. Վ. Դիլոյանը ինչպիսի ցնծությամբ դիմավորեց 1991թ. մեր անկախության հռչակումը և հայոց անկախ պետականության վերականգնումը: Առհասարակ, նրա համար հայրենիքը վերին սրբություն էր, իսկ

նրան ծառայելը՝ պարտականություններից գերագույնը: Այդպիսին էր նրա հավատ հանգանակը: Չէր սիրում աղմկոտ ու կեղծ «հայրենասերներին»: Նրա հայրենասիրությունը ազնիվ ու կայուն էր, հավատը հայ ժողովրդի ապագայի նկատմամբ՝ անսասան: Հավատարմությունը հայ ժողովրդի իղձերին ու պետական շահերին կարմիր թելի պես անցնում է նրա աշխատությունների և առհասարակ ողջ գործունեության միջով:

Որպես մարդ Վալտեր Դիլոյանը վերին աստիճանի համեստ էր, դյուրահաղորդ, անբռնազբոսիկ, անկեղծ, ազնիվ նկարագրի տեր, անդավաճան ընկեր: Հեռու էր կյանքի ճղճիմ կողմերից, ազգային նեղմտությունից: Իր ողջ կյանքի ընթացքում նա ոչ մի քայլ չընկրկեց իր դավանած սկզբունքներից ու համոզմունքներից, ոխերիմ թշնամի էր կոնֆորմիզմին և հարմարվողականությանը:

Վալտեր Դիլոյանը նաև կյանքի մարդ էր, սիրում էր ընկերական ջերմ շրջապատում ուրախ խնջույքները, գնահատում էր մարդկային հարաբերություններում հավատարմությունը: Միևնույն ժամանակ նրան բնորոշ էր խորը լրջությունը: Մեծ հարգանք ուներ ազնիվ և կայուն մարդկանց հանդեպ, մերժում և չէր ընդունում մակերսային մարդկանց:

Տաղանդավոր գիտնականի առաքինի կերպարը, նրա թողած անկորչելի հիշատակը այսօր էլ կենդանի է իրեն ճանաչողների և ընկերների հիշողության մեջ: Հարուստ նկարագրով այդ անհատականությունը, անկասկած իր մշտամնա տեղն ունի հայ երախտավորների շարքում:

Վ.Ա. Բայբուրդյան **– պ.գ.դ., պրոֆ., ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն.**

О.Е. ПЕТРУНИНА **- В.А Дилоян «Исследователь вопросов освобождения Армении».**

В 2021 году греки, которые первыми из многих покорённых османскими султанами народов обрели независимость, отмечают двухсотлетний юбилей начала героической борьбы за освобождение. Вера в грядущее свержение османского владычества никогда не умирала в греческом народе, но только к 1820-м годам сложились подходящие для этого условия: готовность греческой элиты организовать крупномасштабное восстание, с одной стороны, и способность христианских государств Европы оказать им действенную помощь в борьбе против слабеющей империи, с другой. Поднятое членами тайного общества «Филики этерия» на Пелопоннесе восстание греки сумели превратить в затяжную войну и нанести несколько серьёзных поражений турецкой регулярной армии. Это привлекло внимание к греческому вопросу европейских держав. Их дипломатическое, а затем и военное вмешательство сделало возможным появление независимого греческого государства - первого национального государства на Балканах. Вот последние слова Дж. Г. Байрона о Греции:

Что мне твои все почести и слава,
Народ-младенец, прежде или впредь,
Хоть за них отдать я мог бы право,
Все, кроме лавров, - мог бы умереть?
В тебя влюблен я страстно! Так пленяя,
Влечет бедняжку-птичку взор змеи, -
И вот спустилась пташка, расправляя
Навстречу смерти крылышки свои…
Всесильны ль чары, слаб ли я пред ними, -
Но побежден я чарами твоими!..

На пути освободительной борьбы, подобно грекам, имели определенные успехи и армяне, которые, однако, боролись как с Османской Турцией, так и с шахским Ираном, поскольку еще в XVI-XVIIвв. Армения была поделена между этими государствами.

Огромную помощь армяне получали от России уже начиная со времен Петра I. Однако планам России относительно освобождения Армении всячески мешали западные державы. Если с огромными трудностями России удалось освободить восточную часть Армении, находившуюся в составе Ирана, то борьба с Турцией протекала в более ожесточенных условиях. По этой причине в XIXв. результате четырех русско-турецких войн России только в 1878 году удалось освободить от турецкого ига лишь малую часть Армении.

Небольшая часть Армении была отвоевана от Ирана в 1828 году, а юг Греции приобрел самостоятельность в 1829 году. Далее процесс объединения греческих земель продолжился, а Армении из-за амбиций Запада так и не удалось объединиться.

Именно этим событиям посвящены труды известного историка Вальтера Арташесовича Дилояна. В.А. Дилоян получил образование и сложился как историк в советскую эпоху. В это время он написал большое количество статей и книг о русско-армянских отношениях, борьбе армянского народа за независимость, защитил кандидатскую и докторскую диссертации, стал профессором, возглавил кафедру. В последующие годы продолжал активно и плодотворно работать. О вкладе ученого в науку свидетельствуют многочисленные обращения к его трудам следующих поколений исследователей: работы В.А. Дилояна, широко известные не только в родной Армении, но и в других странах, не теряют своей актуальности.

О.Е. ПЕТРУНИНА **– д.и.н., проф., кафедра Новой и новейшей истории МГУ.**

ԳԼՈՒԽ I

Ա. ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱԼՏԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ ԴԻԼՈՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1950-1980-ԱԿԱՆ ԹԹ.

1) Կյանքը և գիտա-մանկավարժական գործունեությունը (համառոտ ակնարկ).

Վալտեր Արտաշեսի Դիլոյանը ծնվել է 1930թ. հունիսի 6-ին Նոր Բայազետ (այժմ գավառ) քաղաքում: 1947թ. ավարտելով Էջմիածին քաղաքի թիվ № 1 դպրոցը նույն տարում նա ընդունվել է ԵՊՀ-ի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որը ավտովթարի պատճառով ավարտել է մեկ տարի ուշացումով՝ 1953թ., գերազանցության դիպլոմով: 1953-1954թթ. նա ուսանել է Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանին առընթեր հասարակական գիտությունների դասախոսների պատրաստման դասընթացներում: 1955-1960թթ. ԽՍՀՄ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության գործուղմամբ աշխատել է ԽՍՀՄ ԳԼԱՎԼԻՏ-ում (ГЛАВЛИТ - Главное управление по делам литературы и издательств): Այդ ընթացքում նա ուսանել է նաև ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արտադրությունից չկտրված ասպիրանտուրայում, նշանավոր ակադեմիկոս, պատմաբան, պետական և հասարակա-կուսակցական գործիչ, փիլիսոփայական և պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի (1887-1972թթ.) ղեկավարությամբ: Գերմանական երեք համալսարաններում (Ենայի, Հալլեյի և Մյունխենի) ուսանած Ա.Գ. Հովհաննիսյանը և՛ իր աշակերտների, և՛ ընդհանրապես բոլոր շփվողների վրա

որպես դրոշմ թողնում էր մեծագույն տպավորություն, որը մեծապես ազդեց նաև Վ.Ա. Դիլոյանի վրա: Խոսքը վերաբերում է ինչպես Դիլոյան գիտնականին, այնպես էլ Դիլոյան մարդուն: Այս երկու դրսևորումներն էլ նրա մոտ անսահման էին և, անհնարին է նախապատվությունը տալ դրանցից որևէ մեկին: Նա հաճախակի էր սիրում ասել, թե որ դեպքում ինչպես կվերաբերի իր իմաստուն ուսուցիչը, չխոսելով այն մասին, որ համարյա անգիր տիրապետում էր նրա գիտական ժառանգությանը: Նրա ղեկավարությամբ էլ 1962թ. Վ.Ա. Դիլոյանը պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը: Ընդամենը 14 տարի անց՝ 1976թ. մարտի 26-ին Վ.Ա. Դիլոյանը պաշտպանում է նաև դոկտորական աշխատանքը: 1977թ. Վ.Ա. Դիլոյանին շնորհվել է պրոֆեսորի կոչումը:

Հայաստան վերադառնալուց հետո նա 1962թ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, սկզբում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող:

1971թ. նա անցել է գիտա-մանկավարժական աշխատանքի և այդ թվականից մինչև 1979թ. հանդիսացել է Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի՝ Ընդհանուր պատմության ամբիոնի վարիչը: Այնուհետև նա հրավիրվել է ԵՊՀ և 1979-1998թթ. եղել է նույն Բուհ-ի Ընդհանուր պատմության ամբիոնի վարիչը: Նա նաև երկարատև տարիներ Հայաստանում և ԽՍՀՄ-ում մեծ հեղինակություն վայելող «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրական հանձնաժողովի անդամներից էր:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 7 թեկնածուական ատենախոսություններ, իսկ թե քանի ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս է հանդիսացել, խիստ դժվար է հիշել, քանզի դրանց թիվը բավականին մեծ է:

Վ.Ա. Դիլոյանի գործունեությունը չէր սահմանափակվում միայն մանկավարժությամբ, այլև նա նաև հանրապետության

ամենաբազմավաստակ գիտնականներից էր, թեև նրան չշնորհվեց գիտության վաստակավոր գործչի կամ էլ վաստակավոր մանկավարժի կոչումը, որոնցից գոնե մեկին՝ նա, իսկապես արժանի էր: Վ.Ա. Դիլոյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները, և ոչ թե եզակիով՝ շրջանակը, չափազանց լայն էր: Սրա խոսուն վկաներն են հանդիսանում նրա հրատարակությունները, որոնք առնչվում են հայոց և համաշխարհային պատմությունների Միջին և Նոր դարերի տարբեր հիմնահարցերին:

Վ.Ա. Դիլոյանը գիտության աշխարհ մուտք գործեց, ինչպես ձնհալից հետո գարնան սկզբներին վարարած գետը: Սակայն, եթե այն մի քանի օրերից հայտնվում է կրկին իր բնական հունի մեջ, ապա Վ.Ա. Դիլոյանի մոտ տեղի ունեցավ հակառակը: Հետագա 40-ից ավելի տարիների ընթացքում դրա տարածման շրջանակներն գնալով ընդլայնվեցին և նա դարձավ, ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային պատմության լավագույն գիտակներից մեկը, ինչպես Հայաստանում, այնպես էլ, առանց չափազանցության ողջ ԽՍՀՄ-ում: Ըստ էության, նրա համար համարյա նշանակություն չուներ թե երկու այս պատմություններից որ դարաշրջանի մասին է խոսք գնում: Նա փայլուն տիրապետում էր և ուներ անսպառ գիտելիքներ սկսած ամենահին ժամանակներից մինչև իր կյանքի ավարտն տեղի ունեցած դեպքերի մասին: Նա մշտապես հետևում էր մամուլին և, հայտնի էր, որ մեր հանրապետությունում Վ.Ա. Դիլոյանը ՍՈՅՈՒԶՊԵՉԱՏԻՆ ամենաշատ գումար մուծած բաժանորդն է ճանաչվել: Սրան գալիս էր ավելանալու, որ նա ուներ չափից ավելի վերլուծական (անալիտիկ) միտք և միանգամից բոլոր հարցադրումներին տալիս էր օբյեկտիվ և սպառիչ պատասխաններ: Բայց սրանով ևս չէին սահմանափակվում նրա ընդունակությունները: Նրան ի վերուստ տրված էր նաև լսածը կամ իմացածը արագորեն վերլուծելու և, բնականաբար ճիշտ հետևություններ կատարելու շնորհ:

622

Կատարած աշխատանքի համար 1999թ. նա պարգևատրվեց «Մովսես Խորենացի» մեդալով:

Բ. ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ.

1) Լազարյանների պատմությունն ու գործունեությունը Վ.Ա. Դիլոյանի հայեցակարգում.

Երբ խոսք է գնում Վ.Ա. Դիլոյանի գիտական ժառանգության վերաբերյալ, ապա այն կարելի է տարանջատել հայագիտության բազմաթիվ ոլորտների, որի մասին է հուշում թեկուզ և Հայկական երկու հանրագիտարաններում նրա կողմից գրված բազմաթիվ հոդվածների ցանկերը: Ժամանակագրական տեսանկյունից դրանք հիմնականում վերաբերում են հայոց պատմության նոր դարաշրջանի երկրորդ հատվածին (XVIII-XIXդդ.): Գիտական գործունեության ամենավաղ էտապում նա զբաղվեց Լազարյանների (երբեմն նաև Ղազարյաններ, Աղազարյաններ, Եղիազարյաններ) դերի ուսումնասիրությամբ և այն իր ամփոփ արտացոլումն գտավ հրատարակված մենագրությունում [1]: Հեղինակն իր այս գործում անդրադառնում է նրանց իրականացրած աշխատանքների բոլոր կարևոր ասպարեզներին, բայց հատկապես տնտեսականին: Քննարկումն սկսվում է առաջին Լազարյաններից, այսինքն՝ XVIIIդ. երկրորդ կեսից: Այս խնդրին է վերաբերում ամբողջովին վերոհիշյալ մենագրության առաջին գլուխը: Նա հիմնավորապես ապացուցում է, որ առանց տնտեսական հզորության կամ նրա պատվանդանի առկայության անհնարին է իրականացնել քաղաքական-հասարակական գործունեություն:

[1] Տես՝ Դիլոյան Վ.Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966:

Տնտեսություն կամ տնտեսական հասկացությունն խիստ բազմիմաստ է և բովանդակալից: Եթե խոսք է գնում գյուղատնտեսության մասին, ապա այն մեծ եկամուտ կամ դրամագլուխ կարող է ապահովել միայն առանձին դեպքերում: Ճիշտ է, Վ.Ա. Դիլոյանը քննարկում է նաև գյուղատնտեսության զարգացման մեջ նրանց ունեցած դերին, խոսում է կատարված ներդրումների վերաբերյալ՝ սկսած փայտածխի մշակումից մինչև հողագործություն, անասնապահություն, այգեգործություն, անտառամշակում և այլն, բայց հիմնական ուշադրությունն հատկացվում է հենց ծանր արդյունաբերության մեջ Լազարյանների ունեցած դերակատարության գնահատակին [2]:

Այս խնդրի արծարծումն ու ուսմնասիրությունը խիստ բազմաշերտ և բազմաբովանդակ է: Համառոտ կանգ առնելով հայ-ռուսական հարաբերությունների քննարկմանը, որոնք գոյություն են ունեցել մինչև հեղինակին հետաքրքրող ժամանակաշրջանը (XVIIIդ. երկրորդ կեսերը) նա այնուհետև անդրադառնում է ցարական Ռուսաստանում արդեն ձևավորված հայկական հիմնական կամ կարևոր գաղթօջախների նկարագրությանը (Աստրախան, Ս. Պետերբուրգ, Մոսկվա և այլն): Կարևոր էր նաև Լազարյանների դերակատարության խնդրի բացահայտումն ու վերլուծությունը, թե նրանք ինչպիսի կարևոր գործեր կատարեցին հայկական նորաստեղծ գաղթօջախների ներքին կյանքում: Խոսքը վերաբերում է ոչ միայն խնդրի սոցիալ-տնտեսական, այլև քաղաքական և մշակութային բնագավառներին:

Միայն Լազարյանների շնորհիվ էր, որ իր երկրորդ շնչառությունն ձեռք բերեց Ֆրյանովոյի մետաքսի կոմբինատը [3]: Իրենց տնտեսական դիրքերի հետագա ամրպնդման նպատակով

[2] Ավելի մանրամասն տես՝ նշվ. աշխ., էջ 102 և հաջ:

[3] Նույն տեղում՝ էջ 44: Լազարյաններին հանգամանալից և մանրամասն անդրադարձել է նաև Հ.Ժ. Հովհաննիսյանը: Տես՝ Հովհաննիսյան Հ.Ժ., Հայագիտությունը Ռուսաստանում, Երևան, 2004, էջ 70 և հաջ:

Լազարյանները վարձակալեցին (կապալով վերցրին) ռուս մեծահարուստ Ա.Ս. Ստրոգանովի գործարանները, ապա նաև Չերմոսի: Հեղինակը բացահայտում է, որ նախապես չունենալով մեծ միջոցներ և հնարավորություններ նրանք հարկադրված էին անցնելու կապիտալի նախնական կուտակման դժվարին ճանապարհով, մինչ կունենային իրենց սեփական դրամագլուխը: Ահա միայն սրանից հետո էր, որ սկսեցին հիմնել իրենց սեփական գործարանները՝ Կիզելի և Պոլյազնինոյի [4]: Նա նկարագրում է բոլոր այն բարդություններն ու դժվարությունները, որոնց հանդիպել են այս հայասեր ընտանիքի անդամներն այդ գործարանները հիմնելու ճանապարհին, իսկ ընդհանրապես, իրենց իրականացրած տնտեսական գործունեության ողջ ընթացքում:

Միանգաման պարզ է, որ դա «քարքարոտ, փշերով ու տատասկներով լի» ուղի էր: Պարզ է, որ ձեռնարկատերերի մեծ մասին հաճելի չէր օտար այս միջավայրում նորելուկ հայկական գերդաստանի անդամների՝ ասպարեզում հայտնվելը: Որքան էլ ռուս միապետներն, սկսած գոնե Պետրոս (Պյոտր, 1682-1725թթ.) I-ի ժամանակներից վարում էին հայամետ քաղաքականություն, բայց տեղի ազնվականությունն չէր ցանկանում երկրի տնտեսական պատվանդանին իրենցից զատ տեսնել ուրիշներին և նրանց-բոլորին, ոչ թե միայն հայերին, համարում էին homo novus: Պետրոս I-ի հայամետ քաղաքականությունը շարունակեց նաև Եկատերինա II կայսրուհին (1762-1796թթ.) և սա ժամանակագրական առումով համընկնում է վերևում քննարկվող Լազարյանների ծավալած տնտեսական այս քաղաքականության ամենասկզբի հետ:

---

[4] Տես՝ Դիլոյան Վ.Ա., նշվ. աշխ., էջ 86 և հաջ., Նույնի՝ Լազարյանների լեռնարդյունաբերական ձեռնարկությունների պատմությունից (XVIII դար), Տեղեկագիր, 1962, № 9, էջ 33-48., Նույնի՝ Էջեր Ռուսաստանում հայ վաճառականների կապիտալի պատմությունից, ՊԲՀ, 1962, № 4, էջ 69-82:

Եթե նրանց համար չափազանց ծանր և դժվարին էր տնտեսական գործունեության ծավալման և ընդլայման ուղին, ապա միանգամայն այլ կերպ էր դիտարկվում հայ ազգային-ազատագրական շարժումներին աջակցելու Լազարյանների մղումներն՝ ռուս հասարակության բոլոր խավերի կողմից: Դրան մեծապես աջակցում էին նաև ռուսական արքունիքի ներկայացուցիչներն՝ ամենաուշը գոնե սկսած Պետրոս I-ից: Ցարական կառավարությունն իր առջև արտաքին քաղաքականության ասպարեզում դրել էր մեկ կարևոր հիմնախնդիր՝ թուրքերից ազատագրել մերձսևծովյան բոլոր տարածքներն ու հնարավորության դեպքում այն վերածել ռուսական «լճի»: Այս խնդրի իրականացումն արդեն կախված էր համապատասխան զորքի առկայության և միջազգային ասպարեզում մեծ տերությունների (առաջին հերթին Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրո-Հունգարիայի) ցուցաբերվելիք վերաբերմունքից, քանզի վերջիններս ոչ միայն Ռուսաստանի մրցակիցներն էին այդ տարածաշրջանում, այլև ամեն կերպ խանգարում էին նրա առաջխաղացմանը: 1783թ. վերջնականապես Ռուսաստանին միացվեց Ղրիմ թերակղզին, որից հետո էլ նրանց ներթափանցումն դեպի Անդրկովկաս տեղի էր ունենում երկրաչափական պրոգրեսին համապատասխան: Ներթափանցման կապակցությամբ անուրանալի էր Լազարյանների ունեցած դերակատարությունն Արևելյան Հայաստանը՝ պարսկական դարավոր լծից ազատագրելու խնդրում: Ռուսական բանակում էին ծառայում և ապագայում էլ ծառայելու էին բազմաթիվ Լազարյաններ (Հ.Ա. Լազարև (1735-1801թթ.), Ե.Հ. Լազարյան (1788-1870-ական թթ.) և այլոք), որոնք կողմ էին, այսպես կոչված չարյաց փոքրագույնին: Նրանք հասկանում էին, որ համայն հայությունն՝ և՛ արևելահայերը, և՛ հատկապես արևմտահայությունն, արդեն կանգնած են ամենաքիչը ֆիզիկական ոչնչացման նախաշեմին:

Այսպիսով, ցարիզմի արևելյան քաղաքականությունը, որի բաղկացուցիչ մասերից էր նաև Կովկասյանը (մեր կարծիքով տվյալ դեպքում ավելի ճիշտ կլինի որակել Անդրկովկասյան, իսկ ավելի ստույգ Հայկական) մեծապես և անմիջականորեն առնչվում և աղերսվում է Լազարյանների գործունեության և անվան հետ: Այս տեսադաշտից անհարիր է խոսել միայն Հովսեփ Արղությանի մասին և շրջանցել, ինչպես օրինակ Հովհաննես Լազարյանին, որը կայսրուհու գլխավոր ոսկերիչն էր: Ունենալով հնարավորություն նրա հետ անմիջական շփումների, նա պետք է կայրուհուն տրամադրեր, որ Հայաստանը պետք է ազատագրել օտարների լծից: Նրա գործունեությունը շատ բարձր է գնահատել նաև հետագայում Ռուսաստանում գտնված Հովսեփ Էմինը (1726-1809թթ.): Այս առթիվ Վ.Ա. Դիլոյանը նշում է. «Հովսեփ Էմինն ռուսական կայսրությունում բնակած այդքան հայերից իր միակ ընկեր համարում էր Հովհ. Լազարյանին» [5]: Մի կողմից զբաղված լինելով իրենց հայրենի երկրի ազատագրման խնդիրներով, հակառակ ծայրից միաժամանակ բուն ռուսական կայսրության տարածքում նրանք կատարում էին հայահավաք գործունեություն: Դրա ամենակարևոր դրսևորումներից էր «.. վերացնել հայկական եկեղեցիների կառուցումն արգելող կայսերական հրամանագրերը, որը շուրջ երեսուն տարի արդեն մնում էր ուժի մեջ» - եզրակացնում է Վ.Ա. Դիլոյանը [6]:

Սակայն Լազարյանների իրականացրած քայլերն չէին սահմանափակվում կայսրական վերնախավի հետ հարաբերությունների «կառուցմամբ»: Դա նրանց կարող էր տալ շատ բաներ, բայց ոչ ամբողջը, ինչին նրանք ձգտում էին: Այս պատճառով էլ Լազարյանները սերտ կապեր ունեին նաև Ռուսաստանի պետա-քաղաքական «երկնակամարում» գտնված ժամանակի մյուս նշանավոր և ազդեցիկ գործիչների հետ,

[5] Դիլոյան Վ.Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 131:

[6] Նույն տեղում՝ էջ 137:

որոնցից յուրաքանչյուրը մեծ տեղ ուներ նաև արքունիքում: Այստեղ հիշատակության են արժանի իշխան Գ.Ա. Պոտյոմկինը, կոմս Ն.Ի. Պանինը (1718-1883թթ.), գեներալիսսիմուս Ա.Վ. Սուվորովը (1730-1800թթ.), կոմս Պ.Ա. Ռումյանցև-Զադունայսկին (1725-1796թթ.), Զուբով եղբայրները (նրանցից ամենահայտնին Պլատոն Ալեքսանդրի Զուբովն էր՝ 1767-1822թթ., մյուս երկուսը՝ Վալերիան-Նիկոլայ (1763-1805թթ.) և Դմիտրին (1764-1836թթ.) և այլոք [7]: Առանց վերջիններիս միջամտության և աջակցության շատ և շատ հարցեր չէին կարող ստանալ իրենց դրական պատասխանները:

Այս օրենքի վերանայումն ի հոգուտ հայերի միանգամայն պարզ է, որ նաև Լազարյանների ջանքերի արգասիքն էր: Այստեղ չպետք է մոռանալ նաև կաթողիկոս Սիմեոն Երևանցու (1710-1780թթ.) ունեցած դերի հանգամանքը, որը 17 տարի ղեկավարեց հայկական եկեղեցին (1763-1780թթ.): Լազարյաններին վերաբերող իր այս մենագրությունում, ինչպես նաև մյուս այլ գործերում, երբ խոսք է գնում XVIII դարի 60-80-ական թթ. մասին, ապա հեղինակը երբեք չի մոռանում կաթողիկոս Սիմեոն Երևանցու անունը և նրա ունեցած դերակատարությունը մեր ժողովրդի կյանքում: Սա մենք շեշտում ենք ելնելով այն հանգամանքից, որ Վ.Ա. Դիլոյանի հետազոտությունների համարյա մեծ մասն գրվել են խորհրդային իշխանության տարիներին, իսկ այդ ժամանակներում, մեղմ ասած, ցանկալի չէր նրանց մասին թույլատրվածից ավելի հիշատակելը: Իհարկե, կարելի էր հիշատակել, բայց առավել ցանկալի էր բացասական առումներով: Անուրանալի էր նրա ծառայությունը նաև ղրիմահայերի՝ դեպի ռուսաստանյան տարածքներ գաղթի կազմակերպման հարցում: Ցարական կառավարությունն այս ընթացքում ընդունել էր հատուկ որոշումներ՝ գաղթի կապակցությամբ, որոնք կոչվում էին կոնդիցիաներ (кондиции,

[7] Տես՝ Նույն տեղում՝ էջ 136:

լատ. condicio), որոնցից մի քանիսն որպես արխիվային փաստաթղթեր օգտագործվել և վերլուծվել են Վ.Ա. Դիլոյանի կողմից: Վերոհիշյալ հարցերի հետ մեծապես շաղկապվում էր նաև Հովի. Լազարյանի ծավալած գործունեությունը, որն աննկատ չի մնում հեղինակի տեսադաշտից և նա բավականին հանգամանալից անդրադառնում է այս խնդրին ևս:

Լազարյանների հայրենանվեր և ազգապահպան գործունեությունը չէր սահմանափակվում միայն ռուսաստանյան տարածքներով, իսկ առավել ևս Մոսկվայում և Ս. Պետերբուրգում հաստատված հայերին օգնելով ու սատար կանգնելով: Նրանք կապեր ունեին նաև Հայաստանում, ինչպես նաև օտար այլ երկրներում գտնված հայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչների հետ: Հատկապես կարևոր էին կապերը Շ. Շահամիրյանի հետ, որը ևս մեծապես մտահոգված էր Հայաստանի ապագային վերաբերող խնդիրներով: Շահամիրյաններն նույնպես, որպես ապագայի առաջնահերթ հարց դիտարկում էին հայկական պետականության վերականգնումը: Այս առումով հետաքրքիր է, որ հետևելով նրանց (Շահամիր Շահամիրյանին (1723-1798թթ.) և նրա որդի Հակոբ Շահամիրյանին (1745-1774թթ.) Լազարյաններն մեծապես աջակցեցին ռուսահայ նշանավոր գործիչ Հովսեփ Արղության-Երկայնաբազուկին (1743-1801թթ., Ռուսահայոց թեմի առաջնորդ, Ամենայն Հայոց կաթողիկոս 1800-1801թթ.) ազատագրական շարժման ծրագրեր կազմելու խնդրում: Նա հույսերն բնականաբար, առաջին հերթին կապում էր Ռուսաստանի հետ և դրա լավագույն վկայություններից է հանդիսանում Արղության «Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց՝ Ռուսաց և Հայոց» նախագիծ-«աշխատությունը» [8]:

Չնայած բոլոր տարբերություններին, որ առկա էին Արղության «Կերպ դաշնադրութեան» գործում և

[8] Տես նաև Հովհաննիսյան Հ.Ժ., Հայագիտությունը Ռուսաստանում, էջ 382 և հաջ:

Շահամիրյանների «Որոգայթ փառաց»-ում, այսուհանդերձ հիմնականը եղել և մնում էր ազատագրության ծրագրի իրականացումը: Այստեղ կարիք չկա քննարկելու նույնիսկ, թե վերջապես Շահամիրյաններց ո՞վ է եղել այս աշխատության հեղինակը [9]: Բոլոր տարբերություններով հանդերձ երկու ծրագրերին միավորում էր մեկ կարևոր հանգամանք՝ դա Հայաստանի ազատագրումն էր և դրա հետ կապված հայ ժողովրդի մշակութային զարգացման խնդիրը, որը համարվում էր առաջինի կարևոր նախադրյալը: Խնդիրն այն էր, որ հնդկաբնակ հայ գործիչներն գտնվում էին անգլիական բուժուական գաղափարների ազդեցության ներքո, իսկ ռուսահայերն ապրում էին բացարձակ միապետության դարաշրջանում (Եվրոպայում աբսոլյուտիզմն իր գագաթնակետին է հասել XVI-XVIIդդ., իսկ Ռուսաստանում XVIIIդ.՝ Եկատերինա II-ի օրոք (1762-1796թթ.):

Մշակութային զարգացումն համարելով շրջադարձային, և՛ Լազարյանները, և՛ մյուս բոլոր գործիչները միաժամանակ գտնում էին, որ պետք է լինի նաև համապատասխան տնտեսական պատվանդան, հակառակ դեպքում ազատագրման

[9] Գրիգորյան Գ., Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 1957; Ավդալբեկյան Թ., Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը 18-րդ դարում, Տես՝ Հայագիտական հետազոտություններ գրքում, Երևան, 1969; Համբարձումյան Ռ., «Որոգայթ փառաց». Ակունքները, այժմէականութիւնը եւ առանձնահատկութիւնները, Երևան, 1999; Խաչատրյան Պ., Մխիթարյանների հետ Շահամիրյանների մատենագրական առնչությունների պատմությունից («Բառգիրք Հայկազեան լեզուի»-ն իբրև «Նոր տետրակի» աղբյուր), ՊԲՀ, 2002, № 1, էջ 128-137; Գրիգորյան Վ., Շահամիր Շահամիրեանի «Աշխարհացոյց Հայաստանեայց»-ը, Բանբեր մատենադարանի, 1962, թիւ 6, էջ 353-362; Նույնի՝ Հովսեփ Էմինի և Հովսեփ Արղության անտիպ նամակները (1791-1792թթ.), ՊԲՀ, 1990, № 4, էջ 185-201; Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Ա:

ցանկացած փորձ ի սկզբանե՝ դատապարտված է անհաջողության: Ահա այս երկուսն էլ հանդիսանում էին ազատագրական մայրուղու առաջին հիմնական պահանջներն ու նախադրյալները [10]:

Առանց որևէ կասկածանքի և երկմտելու պետք է արձանագրել, որ մշակույթն հանդիսացել է հայ ժողովրդի պատմական զարգացումների մշտական ուղեկիցն բոլոր ժամանակաշրջաններում: Միանգամայն բնական է, որ Լազարյանների նման պետական մտածելակերպ ունեցող գործիչներն չէին կարող չհոգալ և չմտածել իրենց հայրենի երկրի և այնտեղ բնակվող քաղաքացիների հետագա մշակութային վերելքի վերաբերյալ: Վ.Ա. Դիլոյանն առաջիններից մեկն էր, որ քննարկեց և վերլուծեց հայ առևտրական բուրժուազիայի դերի գնահատման խնդիրը՝ կապված հայկական մշակույթի նոր վերելքի հետ տեսադաշտից: Իր Լազարյաններին նվիրված մենագրությունում նա եզրահանգում է հետևյալ գաղափարին. «Հայկական մշակույթը Ռուսաստանում XVIII դարում չտվեց քաղաքական գրականության այնպիսի գլուխ-գործոցներ, ինչպես Հնդկաստանում: Բայց այստեղ էլ արդեն սկսվել էր մի շարժում, որը, ճիշտ է, ավելի ուշ, սակայն հիանալի պտուղներ տվեց» [11]: Հեղինակն հատկապես մեծագույն ոգևորությամբ և դրվատանքով է խոսում Գր. Խալաթյանի կողմից 1781թ. Ս. Պետերբուրգում հայկական տպարանի հիմնման վերաբերյալ: Այստեղ կարևոր և սկզբունքային չէ, թե գիտության որ բնագավառներին նվիրված աշխատություններ են հրատարակվել՝ պատմություն, գրականություն, փիլիսոփայություն, իրավագիտություն, կրոնագիտություն և այլն: Ամենակարևորն այն էր, որ տարածվելու էր լուսավորությունն, որին հայը արդեն կարոտ էր դարեր շարունակ:

[10] Տես՝ Դիլոյան Վ.Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 31 և հաջ:

[11] Նույն տեղում, էջ 185:

Ժամանակագրական առումով սրանք համընկնում էին Ֆրանսիայում՝ նախահեղափոխական շրջանում տեղի ունեցած իրադարձությունների հետ (խոսքը վերաբերում է 1789-1794թթ. բուրժուական Մեծ հեղափոխությանը նախորդող ժամանակահատվածին): Նույն այս ժամանակ Ֆրանսիայում տեղի էր ունենում լուսավորչական շարժումը, որի նշանավոր գործիչներից էին Շ. Մոնտեսքյոն (1689-1755թթ.), Ֆ-Մ.Ա. Վոլտերը (1694-1778թթ.), Ժան-Ժակ Ռուսոն (1712-1778թթ.), Դ. Դիդրոն (1713-1784թթ.), Պ. Լամետրին (1709-1751թթ.), Պ.Ա. Հոլբախը (1723-1789թթ.), Կ.Ա. Հելվեցիուսը (1715-1771թթ.), Ժ. Ռոբինեն (1753-1820 թթ.), Լ-Մ. Դեշանը (1716-1774թթ.) և այլոք: Ցարական Ռուսաստանը այս առումով ապրում էր ոչ պակաս բուռն օրեր և ժամանակներ և տեղին է հիշել արքիեպիսկոպոս, քաղաքական և հոգևոր գործիչ, գիտնական, գրող և բանաստեղծ, թարգմանիչ և հրապարակախոս Թ. Պրոկոպովիչի (1681-1736թթ.), գրող-երգիծաբան և դիվանագետ Ա.Դ. Կանտեմիրի (1708-1744թթ.), Վ.Ն. Տատիշչևի (1686-1750թթ.) անունները: Վերջինս միաժամանակ ինժեներ էր, հրետանավոր, պատմաբան, աշխարհագրագետ, տնտեսագետ, պետական գործիչ և «Ռուսաստանյան պատմություն» կապիտալ աշխատության հեղինակը: Նա է հիմնադրել նաև Ստավրոպոլ, Եկատերինբուրգ և Պերմ քաղաքները: Այս համաստեղության՝ պլեադայի մեջ էր նաև առաջին ռուս նշանավոր բնագետ, հանրագիտակ, ֆիզիկոս և քիմիկոս, աստղագետ և երկրաբան Մ.Վ. Լոմոնոսովը (1711-1765 թթ., սովորել էր Մարբուրգի համալսարանում 1736-1739թթ.):

Այդ շարժումն հետագա վերելք ապրեց ժուռնալիստ և հասարակական գործիչ, լուսավորչական Ն.Ի. Նովիկովի (1744-1818թթ.), եկատերինյան դարաշրջանի գրականագետ, կենցաղային երգիծանքի ժանրի հիմնադիր, դիվանագետ՝ Դ.Ի. Ֆոնվիզինի (1744-1792թթ., 1760-1762թթ. սովորել է ՄՊՀ-ում, եղբայրը Պ.Ի. Ֆոնվիզին (1746-1803թթ., սենատոր, գրականագետ և թարգմանիչ) կողմից: Կարևոր էր նաև իրավաբան և իրավագետ՝

Ա.Յա. Պոլենովի (1736-1816թթ.), փիլիսոփա-լուսավորիչ, թարգմանիչ, գրող-մանկավարժ, քաղաքական գործիչ, իրավագետ՝ Ա. Յա. Կոզելսկիի (1729-1794թթ.), լուսավորիչ-իրավագետ, հռոմեական իրավունքի տեսաբան (ուստի և նրան համարում են ռուսական իրավագիտության «նախահայրը»), Ռուսաստանյան ակադեմիայի անդամ՝ Ս.Ե. Դեսնիցկիի (1760-1798թթ.) կատարած մեծ աշխատանքները:

Սակայն կատարվածն երբեք չպետք է իդեալականացնել, քանզի կար դրան խանգարող մի երևույթ, որը կոչվում էր գրաքննություն, որն այժմ կարող է անհասկանալի լինել ներկայիս սերնդին: Այսպես, խստագույնս գրաքննվեց Դ.Ս. Անիչկովի (1733-1788թթ.) ատենախոսությունը, որը վերաբերում էր կրոնների ծագմանը (1769թ.): Դ.Ի. Ֆոնվիզինին արգելվեց տպագրել իր կողմից հիմնված հանդեսը, որը կոչվում էր «Զառամյալ մտածողը կամ ազնիվ մարդկանց Ընկերը» («Стародум, или Друг честных людей»): Նրան արգելվեց նաև թարգմանել անտիկ հռոմեացի պատմիչ Պուբլիոս Կոռնելիոս Տակիտոսի (56-120թթ.) աշխատությունները (այս պատմիչը գրել էր մի շարք գործեր, որոնցից ամենահայտնիներն են «Աննալներ (հայ. «Տարեգրություններ», լատ. «Annals»)» և «Պատմություն («Historiae»)» աշխատությունները: Այս արգելքն մեծապես ազդեց Դ.Ի. Ֆոնվիզինի վրա և 1792թ. դարձավ նրա մահվան հիմնական պատճառը: Գրահրատարակիչ Ն.Ի. Նովիկովը 1792թ. դատապարտվեց 15 տարով, սակայն 4 տարի անց (1796թ.) Պավել I-ի հրամանով ազատվեց ու նա այլևս չտպագրեց և ոչ մի գիրք: Հանրահայտ երգիծաբան Ի.Ա. Կռիլովն (1769-1844թթ.) ու հրատարակիչ, լուսավորիչ և վոլտերական Ի.Գ. Ռախմանինովը (1753-1807թթ.) որոշել էին հրատարակել Վոլտերի աշխատությունների 20 հատորյակը, բայց մեծագույն ջանքերի շնորհիվ տպագրեցին միայն չորս հատորներ: Ստեղծված իրադրությունից դուրս գալու ելքն գտավ Ա.Ն. Ռադիշչևը (1749-1802թթ.), որը գրեց «Ճանապարհորդություն Պետերբուրգից դեպի

Մոսկվա» անմահ ստեղծագործությունը: Նա հրաժարվեց «լուսավորյալ միապետի» մասին գաղափարից և սկսեց քարոզել ժողովրդական հեղափոխության վերաբերյալ, ուստի և համարվում է ռուսական լուսավորչական շարժման հեղափոխական ուղղության հիմնադիրը:

Այսպիսի գրաքննության էր ենթարկվում նաև Վ.Ա. Դիլոյանի աշխատությունները, որն իրականացվում էր ԳԼԱՎԼԻՏ-ում: Այստեղ խոսքը ոչ միայն կոնկրետ Վ.Ա. Դիլոյանին է վերաբերում, այլև մյուս բոլոր ստեղծագործողներին և կապ չունի, թե նա ինչ գիտությամբ էր զբաղվում: Սակայն պատմությունը, առավել ևս նրա այն հատվածը, որը «պատկանում» էր XVIII-XIXդդ. իրադարձություններին, մասնավորաբար Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միավորվելու խնդրին, պետք է գրաքննվեր ամենայն խստությամբ: Այստեղ դժվար է պատասխանել այն հարցին, թե Վ.Ա. Դիլոյանը 1955-1960թթ. միտումնավոր էր անցել աշխատանքի այդ հաստատությունում, այն էլ միութենական և, ոչ թե հանրապետական, թե դա զուտ պատահականության հետևանք էր: XVIII-XIXդդ. սահմանագլխի հայոց պատմության ամենապատասխանատու արծարծումն ժամանակահատվածներից էր հանդիսանում: Այս պատճառով էլ որպես դոկտորական ատենախոսություն նա ընտրեց հենց վերոհիշյալ ժամանակաշրջանը: Նույն այդ պատճառով էլ նրան վստահվեց շարադրել նաև «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի հրատարակչության (բաղկացած էր ութ հատորներից և նրա կողմից շարադրվել է V հատորի մի ստվար հատվածը) վերոհիշյալ շրջանը [12]: Միանգամայն պարզ է, որ նա չէր կարող կրկնել «մատրոսովյան» սխրանքը, բայց բոլորն էլ համոզված էին, որ քաջ իմանալով ԳԼԱՎԼԻՏ-ի պահանջները, նա կարող է շարադրել որքան ներում

[12] Այսուհետև համառոտ ՀԺՊ:

են հնարավորության սահմաններն ի հօգուտ մեր ժողովրդի և ամենակարևորը՝ նվազագույն կորուստներով:

Այս խնդիր պարզաբանումից կրկին վերադառնանք Լազարյանների հիմնահարցին: Մշակույթն հանդիսացել է մեր ժողովրդի բազմահազարյա պատմության անբաժան ուղեկիցներից: Այս տեսանկյունից ամենևին էլ զարմանալի չէր, որ Լազարյաններն ևս իրենց բազմաշերտ գործունեության ընթացքում մեծ տեղ սկսեցին հատկացնել նաև վերջինիս: Սա նրանց պետական մտածելակերպ ունենալու արտահայտչաձևերից էր: Բարձր մշակութային մակարդակի առկայությունն ևս պետք է նպաստեր նրանց կողմից նախագծված հայկական պետականության ստեղծմանը [13]: Սա ժամանակագրորեն, ինչպես նշվեց վերևում, համարյա թե համընկնում էր նախահեղափոխական Ֆրանսիայում տեղի ունեցած լուսավորչական շարժմանը: Հեղինակը նաև իրավացիորեն չի բացառում, որ կարող էին որոշակի կապեր լինել այս երկուսի միջև: Ծայրահեղ դեպքում, ինչպես իրավացիորեն մատնանշվում է նրա կողմից, որ Լազարյանները բավականին իրազեկված են եղել այդ դեպքերին՝ և հետևել նրանց օրինակին:

Փաստորեն Լազարյաններն ունեցել են նաև պատմական հեռատեսություն և կարողացել են ճիշտ գնահատել նաև ժամանակի պատմական իրադարձությունները: Այսպիսով, Լազարյաններին գնահատելիս պետք է նկատի ունենալ նաև այս հանգամանքը ևս: Վ.Ա. Դիլոյանն իր մենագրությունում թվարկում է մի շարք գործերի անուններ՝ սկսած «Այբբենարանից» մինչև Ներսես Շնորհալի, «Աստուածաղերս», «Ճաշոց» և այլ գրքերի անուններ, որոնք հրատարակվել են 1781-1788թթ.՝ Գր. Խալաթյանի կողմից հայկական այս տպարանում: Այստեղ, բնականաբար ամենակարևորն ու էականն այն էր, որ հայ

[13] Դիլոյան Վ.Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեությունից, էջ 185:

ժողովրդի մեջ տարածվում էր լուսավորություն: Վերջինիցս մինչև ազատագրումն ու հայրենի պետության ստեղծումն ընդամենը մի քայլ էր, բայց պատմական հանգամանքների բերումով դա տեղի ունեցավ ավելի ուշ [14]:

Որքան էլ կարևոր լիներ գրատպության գործի իրականացումն, այսուհանդերձ կատարված աշխատանքներն կմնային կիսատ կամ ինչպես սիրում էր կրկնել բազմիցս Վ.Ա. Դիլոյանը չէր ստանա «քրիստոնեական տեսք», եթե հայերը չունենային բարձրագույն դպրոց: Այսպիսի դպրոցներն այն օրերին կարելի էր հիմնել նաև ճեմարանի անվան ներքո: Այն վերածվեց գիտության դարբնոցի ոչ միայն ուսումնատենչ հայ երիտասարդության, այլև օտարազգի՝ գիտության և մշակութային մի շարք նշանավոր գործիչների համար: Այստեղ հատկապես մեծ թիվ էին կազմում ռուս և վրացի ուսանողները: Այս դպրոց-ճեմարանն աշխատել սկսեց 1815թ. և այստեղ սովորեցին հայ և այլ ազգերին պատկանող անթիվ նշանավոր գործիչներ, որոնց միայն անունների թվարկումն արդեն բավարար է՝ Ռ. Պատկանյան, Գ. Դոդոխյան, Հովհ. Հովհաննիսյան, Վ. Տերյան, Ա. Բահաթրյան, Վ. Սուրենյանց, Ե. Թադևոսյան, Ռ. Սիմոնով, Ց. Խանզադյան, Պ. Մակինցյան, Մ. Բարխուդարյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Ալ. Մյասնիկյան, Ի. Տուրգենև, Կ. Ստանիսլավսկի, Մ. Գլինկա, Յու. Վեսելովսկի, Վ.Ֆ. Մինորսկի, Ի.Դ. Դելյանով, Ք.Պ. Պատկանով, Գ.Ա. Էզով (կամ Կ.Հ. Եզյան), Մ.Տ. Լոռիս-Մելիքով, Ի.Ա. Զինովև և ուրիշները... Նրա անվանումն ժամանակի ընթացքում մի քանի վերափոխվեց, որին համապատասխան նաև ստատուսը, սակայն ամենակարևորն այն էր, որ ռուսաստանյան

[14] Այս հարցերին իր մենագրության տարբեր մասերում անդրադարձել է նաև Հ.Ժ. Հովհաննիսյանը: Տես՝ Հովհաննիսյան Հ.Ժ., Հայագիտությունը Ռուսաստանում, աշխատության մի շարք հատվածներում: Լազարյաններին համառոտակի անդրադարձել է նաև Ս.Մ. Սայադովը: Տես՝ Саядов С.М., У истоков русского арменоведения; Историографический обзор, Ер., 2014, С. 98-107.

միջավայրում ընդունվում էր որպես բարձրագույն դպրոց կամ ինստիտուտ: Վերջապես 1927թ. այն ընդգրկվեց Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտի կազմի մեջ, իսկ այժմ այստեղ, ինչպես հայտնի է բոլորին, գտնվում է ՌԴ-ում ՀՀ-ի դեսպանատունը [15]:

Նորաստեղծ դպրոց-ճեմարանի առաջին ռեկտորն է եղել Ս. Կարնեցին: Այս հաստատությունում են դասավանդել Ս. Շահազիզը, Հ. Ալամդարյանը, Մ. Նալբանդյանը, Ա.Ն. Վեսելովսկին, Ա.Ե. Կրիմսկին, Լ.Է. Լազարևը, Ա.Ս. Խախանովը, Ի.Ն. Խոլմոգորովը, Մ. Էմինը և այլոք: Ընդհանրապես ճեմարանի դասախոսական կազմի համալրման խնդրում մեծ է եղել նաև Վենետիկի Մխիթարյանների աջակցությունը: Փաստորեն ճեմարանն ներկայացնում էր մեր ժողովրդի կրթության alma mater-ը, որի նշանակությունն խոսքերով ու բառերով անհնարին է գնահատել: Հենց այս պատճառներով էր, որ այն գտնվում էր ժամանակի նշանավոր բազմաթիվ գործիչների ուշադրության կենտրոնում: Տարբեր ժամանակներում այստեղ են այցելել Ա. Հումբոլտը, Մ. Բրոսսեն, Վ.Ա. Ժուկովսկին, Ն.Ի. Գնեդիչը, Պ.Ա. Վյազեմսկին, Ա.Ս. Գրիբոեդովը, Ա.Ս. Պուշկինը, Ա. Իպսիլանտին: Ճեմարանի անունն ու գործունեությունը մեծապես առնչվում է նաև «Հյուսիսափայլ» գրական-գեղարվեստական ամսագրի հետ (լույս է տեսել 1858-1864թթ. Մոսկվայում Ստ. Նազարյանի

[15] Ճեմարանի վերաբերյալ տես նաև՝ Թադևոսեան Յ., Պատմութիւն Լազարեան տոհմի եւ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Վիեննա, 1953 (Ազգային մատենադարան, ՃՀՁ); Իգնատյան Ա.Հ., Լազարյան ճեմարան, Երևան, 1969; Зиновьев А., Исторический очерк Лазаревского института восточных языков, М., 1963; Базиянц А.П. Лазаревский институт восточных языков в истории отечественного востоковедения, М., 1973; Նույնի՝ Над архивом Лазаревых (Очерки), М., 1982; Базиянц А., Мартиросян Р. Обелиск, Ереван, 1993.

կողմից, որին մեծապես աջակցել է մեծանուն Մ. Նալբանդյանը) [16]: Այն բազմիցս տպագրվել է նաև Լազարյան ինստիտուտի տպարանում:

Բավական է արձանագրել նաև, որ ինստիտուտի գրադարանն ունեցել է մոտ 40հազ. կտոր գրականություն, որն այն ժամանակների համար պետք է համարել մեծ թիվ: Այսպիսով, Վ.Ա. Դիլոյանի մենագրության շնորհիվ մենք ունենք նաև լուրջ աշխատություն Լազարյան ճեմարանի հատկապես մինչև 1871թ. ծավալած գործունեության վերաբերյալ: Մինչև 1871թ. կապված է այն հանգամանքի հետ, որ այդ թվականին ընդհատվեց նրանց արական տոհմը կամ ընտանիքը: Ճեմարանի կապակցությամբ նա եզրակացնում է. «Լազարյան ճեմարանի 1848-1871թթ. ժամանակաշրջանի պատմությունը ցույց է տալիս, որ չնայած ցարիզմի բոլոր սադրանքներին՝ վերածելու այն իր ձեռքում մի պուպրիկի քաղաքական նպատակների իրագործման ճանապարհին, հանդիպեցին ձախողման: Այդ տարիներին էլ ճեմարանը շարունակում էր իր հիմնական ծառայությունը մատուցել հայկական մշակույթին, մնալով հայ հասարակական մտքի ավանգարդում: 1848-1871թթ. ճեմարանի դասընթացն ավարտեցին 471 աշակերտ, որոնցից 125-ը՝ մասնագիտական դասընթացը: Նման հարաբերակցությունը ինքնըստինքյան

[16] «Հյուսիսափայլ»-ի վերաբերյալ մանրամասն տես՝ ՀԺՊ, Հ. V, Հայաստանը 1801-1870 թվականներին, Խմբ. Աղայան Ծ.Պ., Երևան, 1974, էջ 579-589; Հովհաննիսյան Ա.Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը, Հ. 1, Երևան, 1955, էջ 162; Մխիթարյան Մ., Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1994, էջ 312 և հաջ; Բրուտյան Ա., Կրթության և դաստիարակության դերի արժևորումը «Հյուսիսափայլ» ամսագրում, ԲԵՀ, Հայագիտություն, 2018 № 3 (27), էջ 75-85:

խոսում է այն մասին, որ ճեմարանը առաջին հերթին ծառայում էր այն նպատակներին, որի համար և նախապես ստեղծվել էր» [17]:

Վերջապես Լազարյանները մեծ ուշադրություն էին հատկացնում նաև տարրական կամ սովորական դպրոցների բացման և դրանց թվաքանակի ավելացման խնդիրներին: Նրանք շատ լավ հասկանում էին, որ առանց վերջինիս գոյության, համարյա թե չի կարողնա գոյատևել առաջինը: Լազարյանների անմիջական մասնակցությամբ նմանատիպ դպրոցներ բացվեցին Ռուսաստանի մի շարք քաղաքներում ևս, որոնցից առավել կարևոր էին Նոր Նախիջևանի և Թիֆլիսի այսպիսի հաստատությունները:

2. Վ.Ա. Դիլոյանը և հայոց պատմության XIX դարի հիմնահարցերը.

Վ.Ա. Դիլոյանի, որպես հմուտ պատմաբան-հետազոտողի աստղը փայլատակեց նրա կողմից շարադրված ՀԺՊ-ի ակադեմիական հրատարակչության IV և հատկապես V հատորներում, որոնցից վերջինումս նա գրել է բավականին մեծ և ստվար հատված: Այս հատվածը վերաբերում էր հայոց պատմության երևի ամենակարևոր և պատասխանատու ժամանակներին՝ XIXդ. սկզբներին, երբ տեղի ունեցավ արևելյան Հայաստանի միացումն Ռուսաստանին: Այսպիսի հարցերի շարադրումն հեղինակից պահանջում էր պատմաբանի սուր

[17] Դիլոյան Վ.Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեությունից, էջ 233: Լազարյանների պատմությունն ու նրանց գործունեության ուսումնասիրությունը երևի երբեք չի սպառվի, քանզի այն չափազանց բազմաստ և բազմաբովանդակ էր: Այս կապակցությամբ տես՝ Հովհաննիսյան Հ., Ուշագրավ փաստաթուղթ Լազարյանների արխիվից, Հայագիտության հարցեր, 2017, № 11, էջ 193-199:

հոտառություն և կենսափորձ, իսկ գիտության մեջ տարիների ընթացքում ձեռք բերված հեղինակությունն կարող էր մոռացվել ցանկացած պահի, եթե շարադրանաքը համարվեր ոչ-գաղափարական (խոտան) միութենական և ներհանրապետական կուսակցական «գրաքննիչների» կողմից: Այս հատորում Վ.Ա. Դիլոյանի կողմից գրվել է Ա բաժնի առաջին գլուխը՝ «Հայաստանը XIX դարի սկզբին: Արևելյան Հայաստան» հատվածը, որը բաղկացած էր վեց պարագրաֆներից [18]: Իրավիճակը, որքան հնարավոր է, պետք է ներկայացվեր ճիշտ, որը ցանկացած ընթերցողի «մտահորիզոնում կամ մտապատկերում» պետք է ստեղծեր համապատասխան, ինչպես ասում էին խորհրդային շրջանում «նյութա-տեխնիկական բազա», թե ինչու՝ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին: Այստեղ անհրաժեշտ էր, որքան հնարավոր է հետին պլան, ետնախորք տանել ցարիզմի գաղութատիրական նկրտումները և հանել ազատասիրական տենչանքները: Իհարկե, այս առաջնագիծ բերել ազատասիրական տենչանքները: Իհարկե, այս բոլորն առկա էին և, ինչպես սիրում էր կրկնել Վ.Ա. Դիլոյանը՝ դրանք չպետք է զանց առնվեին:

Հայոց ազատագրական մղումներն այս ընթացքում լիովին խաչասերվում էին ռուսական նվաճողական ցանկությունների հետ Անդրկովկասում: Վ.Ա. Դիլոյանը մանրամասն այդ պարագրաֆներում անդրադառնում է Արևելյան Հայաստանի վարչական բաժանումների համակարգին, հողային հարաբերություններին, գյուղատնտեսության զարգացմանն ու գյուղական համայնքների վիճակին, արհեստագործությանն ու առևտրին: Այստեղի սոցիալ-տնտեսական փոխհարաբերություններին վերաբերող վերջին պարագրաֆն առնչվում է հարկային քաղաքականությանն ու այդ համակարգին (սիստեմին), իսկ ամենավերջում պարսիկ իշխող-

[18] Տես՝ ՀԺՊ, Հ. V, էջ 13-60:

հարստահարիչների կողմից Հայաստանում վարած ազգային ճնշումներին և հայահալած քաղաքականությանը:

Մենք ամենևին նպատակ չունենք պնդելու, որ այս ամենն չի եղել, կամ էլ արդարացնել պարսից գերիշխանությունն Հայաստանում: Հարկավ, մեղմ ասած, այն շատ ծանր էր, որը և առանց գունազարդումների ու չափազանցության նկարագրվել է հեղինակի կողմից: Հեղինակի խնդիրն է հանդիսացել այս ամենի «լույսի» ներքո վեր հանել, բարձրացնել հայերի ռուսամետ դառնալու հիմքերը: Վերջիններիս հետ շաղախված հեղինակը մանրամասն անդրադառնում է նաև ժամանակի երկու մեծ տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի վարած արևելյան քաղաքականությանն այդ էտապում: Սա հեղինակն անկարող էր շրջանցել ոչ միայն տվյալ հանգամանքների բերումով, այլև այն պարզ պատճառով ևս, որ նա ԵՊՀ-ում ստացել էր միջազգայնագետի կրթություն:

Եթե, ինչ-որ տեղ հեշտ էր նկարագրել Արևելյան Հայաստանի կացությունն XIX դարի սկզբներին, ապա առավել քան բարդ էր անդրադառնալ Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո տեղի ունեցած դեպքերին՝ գնահատական տալու հանգամանքին: Այստեղի գնահատականները պետք է համահունչ լինեին խորհրդային պատմագրության կողմից արդեն ընդունված չափորոշիչների հետ: Ասենք ավելին, այդ միավորումն ԽՍՀՄ-ում անվանվում էր ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄ (ВОССОЕДИНЕНИЕ): Ստացվում էր այն տպավորությունը, որ մեզ համար ինչ-որ մի անհայտ ժամանակաշրջանում գոնե Արևելյան Հայաստանն եղել էր Ռուսաստանի կազմում: Վ.Ա. Դիլոյանն առաջիններից մեկն էր, որ հրաժարվեց ***ՎԵՐԱ***միավորում արտահայտությունից և ՀԺՊ-ի այս հատորում ուղղակի օգտագործեց «միացում», «...Ռուսաստանի կազմում» առավել ճիշտ և «համեստ» արտահայտությունները: Այստեղ անպայման պետք է արձանագրել մի կարևոր հանգամանք ևս՝ ՀԺՊ-ի V հատորում Վ.Ա. Դիլոյանի կողմից շարադրված

բաժինների համահեղինակն էր հանրահայտ պատմաբան Վահան Հարությունի Ռշտունին (1894-1970թթ., պատմ. գիտ. դ. (1941թ.), պրոֆ. (1943թ.), ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ (1956թ.), ՀՀ գիտ. վաստ. գործիչ (1946թ.): Վերջինս արդեն, XIX դարի առաջին կեսին՝ ցարիզմի Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում վարած ներքին քաղաքականության հարցի ուսումնասիրության խնդրում, անցել էր բավականին երկար «ճանապարհ»: Այս մասին վկայում է նրա կողմից գրված հիմնական ուսումնասիրությունների ոչ ամբողջական այս ցանկը [19]: Երկու համահեղինակներն այստեղ անդրադառնում են Երևանի ժամանակավոր վարչության ստեղծման, Հայկական մարզի կազմակերպման, ապա նաև նրա վերացման ու նոր վարչա-տարածքային միավորների ստեղծման խնդիրներին: Հեղինակներն իրավացիորեն նշում են, որ ցարիզմը անտեսում էր հատկապես հայերի ազգային առանձնահատկությունների խնդիրը (նկատի ունեն 1846թ. դեկտեմբերի 14-ի վարչական բաժանումները): Սակայն հայերի համար ստեղծված այդ անանախադեպ կացությունն երկար չտևեց և 1849թ. հունիսի 9-ի օրենքով հիմնվեց Երևանի նահանգը (վերջինիս կազմում էին Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Օրդուբաղի, Նոր Բայազետի գավառները): Նրանք եզրակացնում են, որ դրանով.

[19] Рштуни В.А., Крестянское движение в Армении в XIX в. (сборник документов), Ер., 1948, Сост. В. Рштуни при участии К. Степаняна; Նույնի՝ Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XXв. (Сб. документов), Ер., 1951; Ռշտունի Վ.Հ., Գյուղացիական շարժումները Հայաստանում 19-րդ դարում, Երևան, 1948; Նույնի՝ Ցարիզմի ազգարարային քաղաքականությունը և գյուղացիական շարժումները Հայաստանում 20-րդ դարի սկզբին, Երևան, 1951; Նույնի՝ Крестьянская реформа в Армении в 1870г., Ер., 1947; Նույնի՝ Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության (1828-1878), Երևան, 1960: Նա զբաղվել է նաև արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմության ուսումնասիրությամբ, որոնք միայն մասամբ են առնչվում մեզ հետաքրքրող հարցերին:

«... զարկ տրվեց նահանգի տնտեսական և կուլտուրական առաջընթացին, *փոքրիշատե* (ընդգծումը մերն է – Հ.Հ.) նպաստավոր պայմաններ ստեղծեց ոչ միայն Երևան քաղաքի, այլև նահանգի գավառական քաղաքների զարգացման համար» [20]:

Հատկապես ծավալուն են այս գլխի (Բաժին Գ, Գլուխ վեցերորդ) չորրորդ և հինգերորդ պարագրաֆները, որոնք վերաբերում են ցարիզմի գաղութային քաղաքականությանն ու գյուղացիական ելույթներին Արևելյան Հայաստանում 1828-1850-ական թթ: Սակայն ամեն ինչ վերնագրել այնպես, ինչպես իրականում էր, այս հատորում՝ կապված շարադրման ժամանակի հանգամանքների հետ, դեռևս անհնարին էր: Այստեղ խոսքը գնում է ցարիզմի կողմից 1836թ. մարտի 11-ին ընդունված տխրահռչակ «Պոլոժենիե»-ի մասին, որի լրիվ անվանումն էր. Կանոնադրություն «Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյի Ռուսաստան»-ի («Положение» об управлении армянской церковью в Россиийской империи)»:

Չնայած այն հանգամանքին, որ չորսի հանձնաժողովում 3-ը հայեր էին, այսուհանդերձ, ինչպես որակում են այստեղ նրանց Վ.Հ. Ռշտունին և Վ.Ա. Դիլոյանը, այս դեպքում «անձեռնհաս» գործիչներ էին [21]: Նրանք իրավացիորեն, որքան ներում էին հնարավորության սահմանները, այս փաստաթուղթն որակում են որպես. «...մի միջոց հայ ժողովրդի լուսավորության գործը դնելու եկեղեցու «հոգևոր» վարչության տակ, իսկ մյուս կողմից նպատակ էր հետապնդում հայ եկեղեցու և հոգևորականության միջոցով առավել դյուրությամբ անցկացնելու ցարիզմի քաղաքականությունը» [22]: Իհարկե, այստեղ հեղինակները չեն

[20] ՀԺՊ, էջ 210:

[21] Նույն տեղում, էջ 212:

[22] Նույն տեղում, էջ 214: Համեմատության համար տես՝ Դիլոյան Վ.Ա., Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Գլխ. խմբ. Հովի. Այվազյան, Երևան 2002, էջ 864-865:

կարողացել բացել բոլոր չակերտները, քանզի խոսքը գնում էր եկեղեցու մասին, որը դեմ էր ԽՍՀՄ-ում գերիշխող 1970-ական թթ. գաղափարախոսությանը և շատ հարցեր պետք է ընթերցել ու տեսնել «տողերի արանքում»: Երևի ամենազայրացուցիչն այն էր, որ այսուհետև մեր կաթողիկոսներն դրսի հայկական համայնքների հետ պետք է շփվեին ռուսաստանյան Արտաքին գործերի նախարարության միջնորդությամբ և նրա հսկողության ներքո: Այս գլխի վերոհիշյալ և հաջորդ պարագրաֆներում տրված է նաև ցարական իշխանությունների գաղութային քաղաքականության նկարագիրն 1830-1850-ական թթ. ընթացքում և նույն ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում գյուղացիական ընդվզումների վերլուծությունները:

ՀԺՊ-ի Գ բաժնի յոթերորդ գլուխն ևս, որ կոչվում է «Տնտեսական կյանքի զարգացումը» և բաղկացած է երկու պարագրաֆներից (1. Տեղաշարժեր գյուղատնտեսության մեջ, 2. Արհեստները, արդյունաբերությունը, առևտուրը) կրկին շարադրված է Վ.Ա. Դիլոյանի և Վ.Հ. Ռշտունու կողմից: Ինչպես քաղաքականության մեջ էր, այնպես էլ համապատասխանաբար տնտեսության բնագավառում ցարիզմն աշխատում էր զարգացումներն համապատասխանեցնել իր նպատակներին և պահանջներին: Բնական էր, որ Անդրկովկասում և Հայաստանում չէին կարող լինել այնպիսի հզոր արդյունաբերական գիգանտներ, որոնք արդեն վաղուց կային կենտրոնական Ռուսաստանի մի շարք շրջաններում: Ռուսական տիրապետության հաստատմամբ, գոնե գյուղատնտեսության մեջ, տեղի ունեցան, եթե չասենք արմատական, ապա բավարար տեղաշարժեր և առաջընթաց: Ճիշտ է Ռուսաստանն դեռ հետ էր մնում ժամանակի արդյունաբերական երկրներից (Անգլիայից և Ֆրանսիայից, իսկ հետագայում՝ դարավերջին նաև ԱՄՆ-ից), բայց ավելի առաջավոր էր, քան Պարսկաստանն ու Թուրքիան: Ինչպես տնտեսական զարգացումների առումով էր Ռուսաստանը գրավում

միջանկյալ դիրք այս երկու խումբ պետությունների միջև, ապա նույնպիսի ուղղվածություն ուներ նաև ռուսական գաղութայնացումը:

Սա, ամենայն հավանականությամբ պատահականություն էր, որ անմիջականորեն առնչվում էր ռուսաստանյան գաղութայնացման տիպաբանության հետ: Ռուսաստանյանը՝ պատկանում էր գետային տարատեսակին, իսկ անգլիականն ու ֆրանսիականը, ապա նաև մյուսներինը՝ Գերմանիա, ԱՄՆ և այլն ծովային կամ օվկիանոսյան տիպաբանության էին: Ռուսաստանի գաղութներն նրա անմիջական հարևանությամբ էին, որը և զսպում էր ցարական աստիճանավորներին, իսկ վերոհիշյալ տերությունների գաղութներն գտնվում էին մետրոպոլիաներից հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա: Նրանք կարծես թե կանխազգում էին, որ հավերժ չեն կարողանալու իշխել, ուստի և թալանում էին, ինչպես անհավատներ: Ինչ վերաբերում է պարսկական, իսկ հատկապես թուրքականին, ապա դրանք միայն վայրենության և բարբարոսության արտահայտչաձևեր էին:

Այս մասին է խոսում նաև Վ.Հ. Ռշտունու և Վ.Ա. Դիլոյանի կողմից շարադրված ՀԺՊ-ի տնտեսական կյանքի զարգացմանն վերաբերող համապատասխան բաժինը: Ռուսաստանում կատարված համարյա բոլոր նորամուծություններն ու փոփոխությունները ժամանակի ընթացքում տարածվում էին նաև Հայաստանում և մյուս գաղութային տարածքներում: Դրանցից ամենակարևորն 1861թ. փետրվարի 19-ի գյուղացիական ռեֆորմն էր, որը Հայաստանում օրենքի ուժ ստացավ 1870թ. մայիսի 14-ին: Եթե գյուղատնտեսություն Արևելյան Հայաստանն ունեցել է բոլոր ժամանակաշրջաններում, ապա նույնը չենք կարող մատնացույց անել արդյունաբերության կապակցությամբ: Այստեղ լիովին այլ խնդիր է արհեստագործության մասին խոսքը: Միանգամայն ճիշտ են հեղինակներն, երբ նշում են, որ միայն Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանն արդյունաբերության

ասպարեզում սկսեց կատարել իր առաջին քայլերը [23]: Այստեղ բավականին հանգամանալից խոսվում է ինչպես արևելահայկական արդյունաբերական կենտրոնների, այնպես էլ զարգացման ոլորտների վերաբերյալ (լեռնարդյունաբերություն, կաշվի, օճառի, աղյուսի, օղու և այլ ծանր ու թեթև արդյունաբերական ապրանքների արտադրության մասին):

Այն հանգամանքը, որ ցարական իշխանությունն ավելի բարյացակամ էր նվաճվածների հանդեպ, հուշում է նաև «1831թ. կանոնադրությունն մաքսային քաղաքականության վերաբերյալ», որը վերաբերում էր նաև Անդրկովկասին: Այն ունեցավ խիստ բացասական հետևանքներ. «Ուստի և ռուսական կառավարությունն այն եզրակացությանը հանգեց, որ անհրաժեշտ է 1831թ. արգելիչ մաքսային սիստեմը վերացնել և եվրոպական ու ասիական տրանզիտային առևտրի համար նոր կանոններ հաստատել, ինչ և արվեց 1846թ. վերջերին» [24]:

Վ.Ա. Դիլոյանի կողմից շարադրվել է նաև ՀԺՊ-ի ակադեմիական հրատարակչության IV հատորի մի փոքրիկ հատվածը, որը վերաբերում է Ս. Պետերբուրգի հայկական գաղթօջախին [25]: Քանի որ այս քաղաքն հիմնվեց XVIII դարի ամենասկզբներին, ուստի այն այդ ժամանակ դեռևս չուներ մեծ թվով հայեր, բայց նրանց դերակատարությունն աստիճանաբար գնալով ավելանում էր: Դա տեղի էր ունենում ռուսաստանաբնակ մյուս հայերի՝ Պետերբուրգ տեղափոխվելու հաշվին: Հայերի թվաքանակի ավելացումն ընդհանրապես ուներ կարևոր նշանակություն, քանզի նրանք կառավարող վերնախավին տրամադրում էին, որ որքան հնարավոր է ավելի շուտ Հայաստանն ազատագրվի թուրք-պարսկական լծից: Այդ

[23] ՀԺՊ, Հ. V, էջ 263:

[24] ՀԺՊ, Հ. V, էջ 272:

[25] ՀԺՊ, Հ. IV, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ., Խմբ. Խաչիկյան Լ.Ս., Երևան, 1972, էջ 428-432:

պատճառով էլ այս և ՀԺՊ-ի հաջորդ հատորներում մեծ տեղ և ուշադրություն է հատկացված նաև հայերի ռուսաստանյան գաղթօջախների պատմությանը (մասնավորապես Աստրախանի, Հարավային Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի, Մոսկվայի և այլն) [26]:

Գ. Վ.Ա. Դիլոյանի «Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները» մենագրությունը որպես գաղափարական անցումային շրջափուլի ուսումնասիրություն.

Հայաստանի համար XVIII դարը իրավացիորեն կարելի և պետք է համարել չափազանց կարևոր ու շրջադարձային: Այս ժամանակ էր, որ հայ-ռուսական փոխհարաբերություններն թևակոխեցին իրենց զարգացման եզրափակիչ փուլ, որը պետք է վերջապես ավարտվեր Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկմամբ, ինչ ցանկանում ու երազում էին գոնե

[26] ՀԺՊ, Հ. V, էջ 403 և հաջ: Տես նաև Григорьян К.Н., Из истории русско-армянских культурных связей X-XVII веков. Туды Отдела древнерусской литературы, СПб., 1953, Т. 9, С. 323-336; Նույնի՝ Армянская культурная колония в Петербурге в XVIII веке, Вестник общественных наук (այսուհետև կրճտ. ВОН), 1953, № 9, С. 53-74; Աբրահամյան Ա.Գ. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ա, Երևան, 1964, էջ 362-402 (Ռուսաստանի հայ գաղթօջախները XV-XVIII դարերում՝ գլուխը); Բարխուդարյան Վ.Բ., Ալեքսանյան Հ.Ս., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Երևան, 2015; Ананян Ж., Хачатурян В., Армянские общины России, Ереван, 1993; Агаян Ц.П., Россия в судьбах армян и Армении, М., 1995; Фирсов Е.Ю., Российские армяне и их исследователи, Этнографическое обозрение, 2006, С. 72-91; Бредникова О., Чикадзе Е., Армяне Санкт-Петербурга: карьеры этничности. Этнические общины Санкт-Петербурга, СПб., 1998; Чикадзе Е., Армяне Петербурга - от общественного движения к общинным институтам. Диаспоры, М., 2000; Амирханян М.Д., Армения в русской литературе до присоединения к России, Ер., 1976.

Իսրայել Օրուց սկսած (1659-1711թթ.) [27]: Այս հարցի լուծման իրականացմամբ գոնե Հայաստանի արևելյան հատվածն ընդմիշտ ազատագրվեց պարսկական բռնապետությունից, բայց այդպես էլ չիրականացված երազանք մնաց արևմտյան հատվածի ազատագրման գործը: Այստեղ իրենց մեղքի «առյուծի» բաժինն ունեն առաջին հերթին Անգլիան ու Ֆրանսիան, ապա նաև Ավստրո-Հունգարիան և միացյալ Գերմանիան: Ռուսաստանի շահերն Արևմտյան Հայաստանի ազատագրման կապակցությամբ լիովին համընկնում էին հայ ժողովրդի բոլոր հատվածների կամ համայն հայության՝ արևմտահայության, արևելահայության և այլ երկրներում բնակություն հաստատածների ցանկությունների հետ: Խորհրդային պատմագրությունն այս հարցերի մեկնաբանության ու վերլուծության ասպարեզներում ուներ առանձնահատուկ մոտեցումներ: Մի եզրից այն այս ամենը ներկայացնում էր որպես գաղութային քաղաքականություն, որպեսզի «վարկաբեկեր» ցարիզմին, իսկ հակառակ եզրից նշում էր, որ դա ունեցել է առաջադիմական նշանակություն բոլոր

[27] Բարեբախտաբար այս գործչին ու նրա գործունեությանն անդրադարձել են շատերը: Մանրամասն տես՝ Армяно-русские отношения в первой четверти XVIII века, Т. II, Ч. I, Сб. документов под ред. Иоанисяна А, Ер., 1964, Նույնի՝ Т. II, Ч. II, Сб. Документов под ред. Иоанисяна А, Ереван, 1967; Эзов Г.А., Сношения Петра Великого с армянским народом: Документы извлеч. из Моск. глав. и С. Петер. Архивов министер. Иностранных дел, Австрийского придворного и гос. архива, Королевс.-Баварского тайного гос. архива и др. учрежд., СПб., 1898; Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Հտ. 1-2, Երևան, 1957, 1959; Նույնի՝ Իսրայել Օրի, Երևան, 1978; Քիւրտեան Յ., Իսրայէլ Օրի. Պատմաքննական ուսումնասիրութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, 1960: Օրու վերաբերյալ մի ուշագրավ հոդված գրվել է նաև Վ.Ա. Դիլոյանի կողմից: Տես՝ Դիլոյան Վ.Ա., Մեկ նորահայտ նկարի մասին, ՊԲՀ, 1960, № 1, էջ 265-266.

«(վերա)միավորված» ժողովուրդների, այդ թվում և հայության համար:

Փաստորեն, նման հարցերի շարադրմամբ զբաղվող հետազոտողն իր կամքից անկախ կանգնում էր բարդ և անլուծելի խնդիրներին դեմ հանդիման: Այստեղ արդեն ի հայտ են գալիս նոր պահանջներ: Կարևոր նշանակություն ունի հարցը մեկնաբանողի՝ ոչ միայն պատմաբանի «հոտառությունը», այլև կենսափորձը: Իզուր չէ, որ Վ.Ա. Դիլոյանը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հարցերի ուսումնասիրությամբ սկսեց զբաղվել, երբ արդեն լիովին ԿԱՅԱՑԱԾ հետազոտող էր: Նրա համար դյուրին կլիներ, երբ հարցը մեկնաբանում ենք զուտ շահադիտական կամ նեղ անձնական շրջանակներից, եթե շարունակեր Լազարյաններին վերաբերող հարցերի ուսումնասիրությունը: Նա Լազարյանների կապակցությամբ «գծեց» այն մայրուղին, որով կարող էին գնալ ապագայում այս հարցով զբաղվել ցանկացողները: Վ.Ա. Դիլոյանի կողմից առաջադրվել էին բազմաթիվ հարցադրումներ, սակայն դեռևս «կծիկը» բացված-քանդված չէր: Աշխատելով Մոսկվայում, նա արխիվներից «ձեռք էր բերել» մի շարք կարևոր փաստաթղթեր, որոնք անպայման պետք է ստանային իրենց վերլուծությունն ու մեկնաբանությունները: Ահա այդ նյութերի ուսումնասիրության արդյունքում էլ գրվեց նրա դոկտորական ատենախոսությունը, որն ինչպես արդեն նշել ենք պաշտպանվել է 1976թ: Ընդհանրապես որպես չգրված օրենք դոկտորականին վերաբերող մենագրությունն հրատարակում են պաշտպանությունից անմիջապես առաջ, իսկ ծայրահեղ դեպքում՝ դրանից անմիջապես հետո: Վ.Ա. Դիլոյանն այն տպագրեց ոչ ավել կամ պակաս՝ միայն 13 տարի անց (1989թ.): Նա, որքան հնարավոր էր և, ներում էին տվյալ ժամանակաշրջանի պահանջների սահմանները, այն վերամշակեց և փոխեց ու թարմացրեց, որի պատճառով էլ այս

մենագրությունն այն եզակիներից է, որ երբեք չի կորցնի իր արդիականությունը:

Հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազատագրական մղումներն իր դրսևորման բոլոր պարմետրերով լիովին համընկնում էին հունականի հետ [28]: Երկու հնագույն ժողովուրդներն էլ գտնվելով թուրքական բռնատիրության ներքո պայքարում էին անկախության և ազատագրման համար: Եթե հույների մոտ շնորհիվ տերությունների և Ռուսաստանի դա պսակվեց հաջողությամբ, ապա Եվրոպան արեց ամեն ինչ, որպեսզի Հայաստանը չազատագրվի, քանզի դա նշանակում էր նաև ցարիզմի հետագա ամրապնդում Անդրկովկասում: Առաջին հայացքից թվում է, թե համարյա տարբերություններ չպետք է լինեին այս երկու՝ ռուսական և թուրքական նվաճումների միջև: Խոսքն այն մասին է, որ և՛ Թուրքիան, և՛ Ռուսաստանը՝ Հայաստանին անմիջական հարևաններ էին: Մի խնդիր է, երբ նվաճված ու գաղութի վերածված տարածքն նվաճողի անմիջական հարևանությամբ է, և լիովին այլ, եթե նրանք գտնվում են հազարավոր (կամ մի քանի տասնյակ հազար) կիլոմետր հեռավորության վրա: Այսպիսի հեռավորություններ գաղութներից ունեին Իսպանիան, Պորտուգալիան, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հոլանդիան և մյուսները: Նրանց համար այդ տարածքները հանդիսանում էին կողոպուտի և

[28] Մանրամասն տես՝ Палеолог Г.Н., История вмешательства России, Англии и Франции в войну за независимость Греции, СПб., 1863; Петрунина О.Е., Греческая нация и государство в XVIII–XX вв.: очерки политического развития, М., 2010, С. 147-222; Арш Г.Л., Иоанн Каподистрия и греческое национально-освободительное движение. 1809-1822, М., 1976; Сволупос К. Позиция России в отношении греческой революции в период Лайбахского конгресса // Политические, общественные и культурные связи народов СССР и Греции, М., 1989, С. 55-57. Шпаро О.Б., Освобождение Греции и Россия, М., 1965. Dakin D., The Greek Struggle for Independence, 1821–1833, California, 1973.

անհամար հարստության ձեռքբերման օբյեկտներ [29]: Այս գաղութներում տեղի ունեցած խմորումներն համարյա բացարձակապես չէին ազդում մետրոպոլիաներում կատարվող գործընթացների վրա: Մետրոպոլիաներում կյանքը շարունակում էր ընթանալ իրեն բնորոշ և բնականոն հունով:

Այլ խնդիր էր, եթե գաղութը և մետրոպոլիան անմիջական հարևաններ էին: Թուրքական, իսկ որոշ բացառություններով նաև պարսկական տիրապետությունները հանդիսանում էին արևելյան բռնատիրության դրսևորման դասական վերարտադրություններ: Եթե պարսիկներն սկսած էլամական դարաշրջանից անցել էին զարգացման երկարատև ուղի (ամենաքիչը 5 հազ. տարի), ապա թուրքերի պատմության սկիզբ կարելի է համարել լավագույն դեպքում 1077թ. Քոնիայի սուլթանության հիմնումը (դա ավելի ստույգ սելջուկ-թուրքական պետություն էր): Բուն թուրքական պետությունն հիմնվեց միայն 1299թ., երբ Օսմանը իրեն հռչակեց սուլթան [30]: Սակայն, եթե համեմատում ենք այս երկու բռնապետություններն, ապա պարսկականն իր դաժանության դրսևորումներով քանիցս զիջում էր թուրքականին:

Ահա հիմնականում պարսկական, մասամբ նաև թուրքական տիրապետություններից Ռուսաստանի մեծագույն աջակցությամբ ազատագրվելու խնդիրներին էր նվիրված Վ.Ա.

[29] Тарле Е.В. Очерки истории колониальной политики Западноевропейских государств (конец XV - начало XIXв.), М., 1965.

[30] Թուրքիայի և թուրքերի մասին գրել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Մանրամասն տես՝ Гасратян М.А., Орешкова С.Ф., Петросян Ю.А., Очерки истории Турции, М., 1983; Петросян Ю.А., История Турции от сельджуков до республики, М., 1990; Еремеев Д. Е., Мейер М.С., История Турции в средние века и новое время, М., 1992; Стоун Н., Краткая история Турции, М., 2014; Финкель К., История Османской империи. Видение Османа, М., 2014; Кинросс Л., Расцвет и упадок Османской империи, М., 1999; Широкорад А., Взлет и падение Османской империи М., 2012; История Османского государства, общества и цивилизации, Т. 1-2 / Под ред. Исханоглу Э., М., 2006.

Դիլոյանի այս մենագրությունը: Հեղինակի առաջնահերթ խնդիրներից է եղել որակել պարսկական բռնատիրության դրսևորման առանձնահատկությունները, այսինքն՝ այն նմանություններն ու տարբերություններն, որոնք առկա էին մյուս արևելյաններում: Բերելով ընդհանուր հայտարարի նա նշում է. ա.)ֆինանսական, բ.)ռազմական, գ.)հանրային աշխատանքներում նվաճվածներին շահագործելու տարբերակումները: Իշխանությունների կողմից որպես իրենց տիրապետության ամրապնդման և անսասան դարձնելու չորրորդ լծակ նրա կողմից նշվում է նաև դատական համակարգի մասին [31]:

Ամենակարևորն այստեղ Ex ipso fonte-յի խնդիրն է: Քանի որ հեղինակը մոտ մեկ տասնամյակ ապրել և աշխատել էր Մոսկվայում, ապա օգտագործված աղբյուրների կապակցությամբ նրա ուսումնասիրությունը քանիցս գերազանցում էր խորհրդային նախկին ժամանակներում տպագրվածներին: Գիրքը, ինչպես արդեն նշվել է տպվեց 1989թ., այսինքն՝ 1985թ. ապրիլյան պլենումի կողմից ընդունված պատմական որոշումներից հետո: Այստեղ օգտագործվել են Մատենադարանի ֆոնդերում գտնված կաթողիկոսական բազմաթիվ դիվանները, Ներսես Աշտարակեցու, Լազարյանների և Երիցյանների արխիվներում պահպանված վկայությունները, ինչպես նաև АКАК-ում, Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ЦГИА-ում, АВПР-ում, ЦГВИА-ում, ԽՍՀՄ ԳԱ արխիվում, Վրաստանի ЦГИА-ում եղած նյութերը և այլն: Եթե սրան գումարվի նաև այն հեղինակների անունները, որոնց գործերն օգտագործվել են շարադրանքի ընթացքում, ապա պատկերը լիովին կպարզվի:

Ուսումնասիրողների հայալեզու այս համաստեղությունից անպայման պետք է նշել գոնե մի քանիսին՝

[31] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 34:

Մ. Բարխուտարեանց, Ալ. Երիցյան, Ա. Զամինյան, Լեո, Ա.Գ. Հովհաննիսյան, Ն. Աշտարակեցի, Վ.Հ. Ռշտունի, Մ. արք. Օրմանյան: Ինչ վերաբերում է ռուսերենով և օտար լեզուներով օգտագործված ուսումնասիրություններին, ապա այստեղ ևս կան գործեր, ինչպես և հայերենի դեպքում է, որ ունեն սկզբնաղբյուրի նշանակություն կամ վաղուց մոռացվել էին: Այստեղ անհնարին է շրջանցել Ի.Պ. Պետրուշևսկու, Վ.Ա. Պոտտոյի, Ն.Ն. Մուրավյով-Կարսկու, Ս. Գլինկայի, Ն.Ֆ. Դուբրովինի, Ե.Ե. Լաչինովի, Ս.Ի. Քիշմիշևի, Կ. ֆոն Կլուգենաուի, Ա.Պ. Նովոսելցևի, Վ.Տ. Պաշուտոյի, Լ.Վ. Չերեպնինի, Մ.Ի. Պուշչինի, Ա.Ե. Սոկոլովի, Ե. Խուբովի, Ա.Գ. Ճավճավաձեյի, Ա.Պ. Շչերբատովի անունները: Օտարալեզու հեղինակներից (հիմնականում օգտագործվել է անգլերեն և ֆրանսերեն լեզուներով աշխատություններ) անհնարին է չհիշատակել Հ. Ռաուլինսոնի, Վ. Ֆոնտանիեռի, Պ.Ա. Զաուբերտի, Ջ.Վ. Քեյի, Ջ.Ա. Մորիերի, Ռ.Գ. Վաթսոնի և այլոց անունները: Թվարկվածը այս աշխատությունում հետազոտողի կողմից օգտագործված աղբյուրների և ուսումնասիրությունների, միայն համառոտագրված տարբերակն է հանդիսանում:

Մենագրության մի ստվար հատվածը վերաբերում է XVIII դարի վերջերին, իսկ հատկապես XIX-ի սկզբներին Արևելյան Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական ծանր կացության վերլուծությանը, որի արմատներն, բնականաբար պետք է որոնել շահական Պարսկաստանում: Վ.Ա. Դիլոյանը նշում է. «Պարսկաստանին հարևան այս շրջանների (Ղարաբաղ, Վրաստանի հայաբնակ շրջաններ, Կարս և այլն – լրացումը մերն է Հ.Հ.) բնակչության դրությունը վատթարանում էր նաև երկարամյա պատերազմական գործողությունների, պարսկական զորաբանակների հաճախակի ասպատակությունների, ինչպես նաև պետական զանազան պարհակներ կատարելու հետևանքով: Դրանց գումարվում էին մորավների, գյուղական մելիքների և այլ պաշտոնատար անձանց չարաշահումները... Նման ծանր դրություն էր տիրում նաև Փամբակի գավառում. բնակչության՝

պետությանը պարտք մնացած հարկագումարն այստեղ 1807թ. այնպիսի մեծ չափերի էր հասել (14.035 ռուբլի), որ Ի.Վ. Գուդովիչը հարկադրված էր կարգադրել, որպեսզի բնակչությունից չգանձվի պարտքի մնացած գումարը, և միևնույն ժամանակ երեք տարով նրանց ազատել հարկերի վճարումից, որպեսզի կարողանան շտկել իրենց դրությունը» [32]: Իհարկե, ո՛չ պարսիկ տիրակալներն նախկինում, առավել ևս ո՛չ թուրքերն իրենց տիրապետության ժամանակ, երբեք չէին դիմել և, չէին դիմի նման մարդասիրական քայլի: Նրանց Հայաստանն ու հայերը պետք էին միայն թալանի, ճնշումների, շահագործման և միմիայն այսպիսի այլ երևույթների համար: Այստեղ և ոչ մեկի մոտ երկրորդ կարծիքը լինել չի կարող: Թուրքերն իրենց վերաբերմունքն հայերի և Հայաստանի վերաբերյալ ավելի կոնկրետ արտահայտեցին սկսած Աբդուլ Համիդ II-ի (1876-1909թթ.) ժամանակներից կենսագործված ջարդերով, որը ավարտին հասցրին 1915թ. երիտթուրքերը [33]: Իրենց բոլոր «դժբախտությունների» պատճառ նրանք

---

[32] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 45-46:

[33] Առաջադրված հարցերի վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք խնդիրները քննարկում են տարբեր տեսանկյուններից: Տես՝ Водоводов Е., Как люди на белом свете живут. Турки., СПб., 1894; Голо-Бородько И.И., Старая и новая Турция, М., 1908; Гуторъ М.Д., Новейшая история Турции и Персии, Тифлис, 1913; Кази-бек Ю., Современная Турция, СПб., 1909, Меэиер И., Турция. Очерк., СПб., 1907; Убичини М.А., Изображение современного состояния Турции, СПб, 1854; Убичини М.А., Да Куртель П., Современное состояние Оттоманской империи. Статистика, правление, администрация, финансы, армия, общины, СПб., 1877; Народы Турции. 20 лет пребывания среди болгар, греков, турок, албанцев и армян дочери и жены консула, Кн. 1-2, СПб., 1879; Петросян Ю.А. Османская империя: могущество и гибель. Исторические очерки, М., 2003; Նույնի՝ Османская империя: реформы и реформаторы (конец XVIII – нач. XXв.), М., 1993; Киласов А.Р., Системный кризис Османской империи во второй половине XIX – начале XX вв., Автореф. диссер. на соиск. уч. степени к.и.н., Махачкала, 2005; Farleu I., The decline of Turkey, London, 1975; Engelhardt E. La Turquie et la Tansimat, Paris, 1882-1884.

հիմնականում համարում էին հայերին՝ անվանելով ուռուցք իրենց մարմնի մեջ: Այս ընթացքում էր, որ անկախացան Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան: Նրանք կորցրին նաև Կիպրոսը (1878թ. անցավ Անգլիային), Թունիսը (1881թ. անցավ Ֆրանսիային), 1882թ. կորցրին Եգիպտոսը, իսկ 1897թ. Կրետեն միացվեց Հունաստանին: Սկսվեց գերմանա-թուրքական մերձեցումը, որի արտահայտությունն հանդիսացավ Բաղդատի երկաթգծի կառուցումը [34]:

Քանի որ, խոսք գնաց կուտակված պարտքերի և ընդհանրապես հայության իրավիճակի մասին, ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական, ապա լավագույն և դիպուկ գնահատականներից մեկը մենք գտնում ենք այդ դեպքերի ժամանակակից, հայ նշանավոր լուսավորիչ Խ. Աբովյանի մոտ: Նա գրում է. «... Էս անօրենքները մեզ հավատից էլ են քցել, հալից էլ, մալ են տեսնում մեզանում՝ խլում են, աղչիկ են գտնում՝ քաշում են, մեզ կրակն են գցել, սաղ սաղ էրում են, փոթոթում, թե մեկ խոսք էլ ասում ես հո՝ վայ քո օրին, արևին՝ գլխիդ էնքան բռնցկում են, որ աչքդ բուռդ ա ընկնում: Տունդ էլ որ քանդեն, ձեն չպետք է տաս. ախր որ մեր միսն էսպես գազանի պես ուտում են, սրա չարեն ի՞նչ կլի: Տեղից վեր կենողը ոտը մեզ վրա յա բարձրացնում: Չիլում՝ որ մեկ օր գնանք, ջուրը թափենք, պրծնենք: Ախր էս հո օր չի, որ մենք քաշում ենք» [35]: Փաստորեն պարսից վերաբերմունքի և հայերին «դաստիարակելու» հիմնական մեթոդներն էին՝ ծեծը, ջարդը, թալանը....., ապա նաև

[34] Бондаревский Г.Л., Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток, Ташкент, 1955; Ерусалимский А.С., Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., 2-изд., М., 1951; Wolf J.B., The diplomatic history of the Bagdad railroad, Columbia, 1938; Stiebel T. Der deutsche Lokomotivführer im Weltkriege, Berlin, 1919.

[35] Աբովյան Խ., Վերք Հայաստանի, ԵԼԺ, Հ. 3, Երևան, 1948, էջ 50:

անհնազանդներին ֆիզիկապես վերացնելը: Այսպիսին էր հայության կացությունն Ռուսաստանին միանալու նախօրյակին:

Գաղտնիք չէ, որ որքան դժվար է գրել աշխատություն պատմական իրադարձությունների վերաբերյալ, ապա շատ ավելի ծանրագույն է շարադրել որևէ ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական զարգացումների նկարագիրն ու առանձնահատկությունները: Այս առումով, մենք ստիպված ենք խոստովանել, որ Վ.Ա. Դիլոյանի այս մենագրությունն հանդիսանում է տվյալ ժամանահատվածի գոնե Արևելյան Հայաստանի այդ բնագավառի ուսումնասիրության հանրագիտարանը: Ուսումնասիրողը հարցի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունից անցում է կատարում քաղաքականին, որին և վերաբերում է ամբողջովին աշխատության երկրորդ գլուխը: Հեղինակի առաջնահերթ նպատակն է եղել ոչ թե նկարագրել այդ ժամանակաշրջանի դեպքերն, ըստ կատարվածների հաջորդականության, այլ ներկայացնել ամենակարևորները: Այստեղ ամենակարևորն արտահայտությունն ունի բոլորովին այլ իմաստ և մեկնաբանություն:

XIX դարի առաջին երեսնամյակի Անդրկովկասի քաղաքական կյանքում տեղի ունեցած ամենակարևոր իրադարձությունները երկու ռուս-պարսկական (1804-1813 և 1826-1828թթ.) և նույնքան ռուս-թուրքական պատերազմներն էին (1806-1812 և 1828-1829թթ.):

Սակայն Վ.Ա. Դիլոյանի հայեցակարգում ամենակարևորներն այն խնդիրներն էին, որոնք կա՛մ բավարար չէին ուսումնասիրվել, կա՛մ էլ ընդհանրապես՝ մատնվել մոռացության՝ պատմության անհայտ ծալքերում: Երբ այս աշխատանքն 1976թ. նրա կողմից պաշտպանվեց որպես դոկտորական ատենախոսություն, ապա մոտենում էր Արևելյան Հայաստանը՝ Ռուսաստանին միավորելու 150-ամյա հոբելյանը, բայց և՛ այն ժամանակ, և՛ այսօր ևս կան հարցադրումներ, որոնք

«սպասում» են իրենց հանգուցալուծմանը: Մեկ պաշտպանված աշխատության և մի մենագրության սահմաններում Վ.Ա. Դիլոյանը կարողացավ տալ մի քանի կարևոր հարցադրումների պատասխանները:

Հիմնվելով արխիվային փաստաթղթերի և հրապարակված ուսումնասիրություններում գոյություն ունեցած կարծիքների վրա, նա մանրամասն քննարկում է, բոլոր այն հանգամանքները, որոնք ցարիզմին հարկադրեցին հրաժարվել իրենց որոշ նախկին մտադրություններից: Խնդիրն այն է, որ ռուսական կառավարության կողմից XVIII դարում ծրագրվել էր Անդրկովկասին՝ իրեն միացմամբ հիմնել Հայ-Վրացական միացյալ քրիստոնեական պետություն: Սակայն այդ նախագծից նրանք հրաժարվեցին 1801թ. Վրաստանի՝ Ռուսաստանին միացնելուց անմիջապես հետո: Ռուսական կառավարող և դիվանագիտական շրջաններն ճիշտ գնահատեցին իրադրությունը, որ դա կարող էր թուլացնել նրա դիրքերն Անդրկովկասում [36]: Այս և հետագա նվաճումներն ևս ունեին գաղութային կարգավիճակ, սակայն այստեղ կարևորը տարբերակումների խնդիրն է: Ռուսական ինչպես քաղաքակրթությունը, այնպես էլ գաղութայնացման քաղաքականությունն հանդիսանում էին գետային: Այսպիսով, ստացվում էր, որ շատ դեպքերում քաղաքակրթության տարածումն ընդունում է նաև գաղութայնացման կերպարանք: Վերջինս անհնարին է համեմատել ծովային, իսկ առավել ևս օվկիանոսային գաղութայնացումների հետ: Թուրք-պարսկականն ևս, ինչպես տեսանք վերևում, հանդիսանում էր գետային, բայց նրանց խնդիրներն ու նպատակներն այլ էին՝ նվաճվածներին ի վերջո ֆիզիկապես ոչնչացնելը [37]: Իհարկե, ինչպես իրավացիորեն նշում

[36] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 141 և հաջ:

[37] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 147 և հաջ., տես նաև՝ Тунян В.Г. Административная

է Վ.Ա. Դիլոյանը այստեղ գործում էր նաև փոխշահավետության խնդիրը: Եթե համառոտ բնութագրենք ստեղծված կացությունն, ապա Ռուսաստանին՝ պայմանավորված բազմաթիվ հանգամանքներով Անդրկովկասը պետք էր՝ և ընդհակառակը: Հեղինակը նշում է. «Խորհրդի կարծիքով բուն Ռուսաստանի համար էլ քրիստոնեական այդ տիրույթը (տվյալ դեպքում խոսքը կոնկրետ Վրաստանի մասին է – Հ.Հ.) սեփական ճակատագրին թողնելը վնասակար կլիներ, որովհետև Վրաստանը թշնամաբար տրամադրված դրացիների զոհը կդառնար, որով իսկ ռուսական սահմանների համար «կործանարար հետևանքներ» կառաջանային» [38]: Այս կործանարար հետևանքներ առավել մեծ չափսերով վերաբերվում էին նաև Հայաստանին:

Ռուսաստանը պետք է օգտագործեր ի բոլոր հնարավորությունները, որպեսզի հասներ իր նպատակին: Եթե պյոտրյան ժամանակաշրջանում նպատակը Բալթիկ ծովի ափերին ամրապնդվելն էր, ապա նաև Ազովի ավազանում, այժմ արդեն խոսք էր գնում սևծովյանի վերաբերյալ: Ռուսաստանի համար հարմար առիթ ծառայեց Դավիթ-Դանիելյան վեճը, որն սկսվեց 1799թ.՝ կաթողիկոս Ղուկաս Կարնեցու վախճանից հետո: Սկսվեց պայքար պարսկամետ Դավթի (Դավիթ Ե Էնեգեթցի) և ռուսաստանամետ Դանիելի (Դանիել Ա Սուռմառեցի) միջև՝ կաթողիկոսական աթոռին տիրանալու համար: Ճիշտ է Պարսկաստանն 1807թ. ի վերջո ճանաչեց Դանիելի

и экономическая политика самодеожавия в Закавказье, 1801-1853гг., Тбилиси, 1989; Эткинд А., Внутренняя колонизация. Имперский опыт России, М., 2013 (տես նաև նույն աշխատությունն անգլ. Etkind A., Internal Colonization: Russia's Imperial Experience, Cambridge, 2011); նույնի՝ Фуко и тезис внутренней колонизации: постколониальный взгляд на советское прошлое, НЛО, 2001, № 49, էջ 1-6:

[38] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 147: Տես նաև Մուրադյան Մ.Ա., Մինասյան Է.Գ., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Երևան, 2005, էջ 238 և հաջ:

իրավունքներն աթոռն զբաղեցնելու կապակցությամբ, բայց դա արդեն ուշացած ճանաչում էր: Պատմագրության մեջ Վ.Ա. Դիլոյանն առաջիններից մեկն էր, որ ամենայն մանրամասնությամբ նկարագրում էր այս դեպքերը: Դա իրականում պայքար էր ոչ թե միայն կաթողիկոսական աթոռի, այլ ազդեցության ոլորտների բաժանման համար, քանզի Ռուսաստանի առաջին և վերջին նպատակն էր պարսիկներին ու թուրքերին վտարել Անդրկովկասից և Հայաստանից [39]:

Այս իրադարձությունները զարգանում էին միջազգային բավականին բարդ հարաբերությունների առկայության պայմաններում: Եթե, համարյա մշտապես, որպես Ռուսաստանի անխոնջ հակառակորդ հանդես էր գալիս Անգլիան, ապա XIX դարի սկզբներին վերջինիս տեղն համարյա լիովին զբաղեցրել էր Ֆրանսիան: Նապոլեոնյան Ֆրանսիան, որը այդ պահին գտնվում էր մեծ վերափոխումների դարաշրջանում, աշխարհում իրեն պահում էր առաջին «ջութակի» դերում: Վ.Ա. Դիլոյանը մեջբերում է կատարում Նապոլեոնի մի նամակից, որն ուղղված էր Է. Բոհարնեին. «Իմ քաղաքականության նպատակն է եռյակ դաշինք հաստատել իմ, Բ. Դռան և Պարսկաստանի միջև՝ անուղղակիորեն ուղղված Ռուսաստանի դեմ» [40]: Այս

[39] Այս կապակցությամբ տես նաև Մուրադյան Մ.Ա., Մինասյան Է.Գ., Նշվ. աշխ., էջ 241 և հաջ:

[40] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 183: Այս դարաշրջանում տեղի ունեցած իրադարձություններին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ: Դրա հիմնական պատճառներից է այն, որ Նապոլեոնի անձը հետաքրքրել է շատերին: Տես՝ Մուրադյան Մ.Ա., Մինասյան Է.Գ., Նշվ. աշխ., էջ 195 և հաջ; Поход русской армии против Наполеона и освобождение Германии. Сборник документов, М., 1964; Восточный вопрос во внешней политике России. Конец XVIII - начало XXвв. / Отв. ред. Киняпина Н.С., М., 1978; Манфред А.З., Образование русско-французского союза, М., 1975; Նույնի՝ Наполеон Бонапарт, 5-е изд., М., 1989; Керсновский А.А., История русской армии, М., 2006; Корнилов А.А., Курс

դարաշրջանը երևի պետք է համարել ու անվանել հանճարների, որոնց մի մասը գտնվել են Կովկասում և նրանք «կռում» էին ցարական իշխանությունների ապագա հաջողություններն ու հաղթանակներն այս տարածաշրջանում: Մինչև այսօր էլ նրանցից մի ստվար խմբի (եթե զգուշաբար չասենք շատերի) անուններն առայժմ մնացել են պատմության խորքերում՝ մնալով անհայտ հանրությանը:

Այսպիսով Ռուսաստանին անհրաժեշտ էր մի կողմից կոտրել նապոլեոնյան Ֆրանսիայի ռազմա-դիվանագիտական համառությունը (նաև ռազմական, քանզի Ռուսաստանը նախ ակտիվ մասնակցություն ունեցավ հակաֆրանսիական կոալիցիաներին, ընդհանուր առմամբ 1793-1815թթ. ձևավորվել են յոթ այդպիսի ռազմական խմբավորումներ), որը ձգտում էր դառնալ աշխարհի միահեծան տիրակալը [41]: Փաստորեն

истории России XIX века, М., 1993. Сироткин В.Г., Дуэль двух дипломатий., М., 1966; Троицкий Н.А., Александр I и Наполеон, М., 1994; Айрапетов О.Р., Внешняя политика Российской империи (1801-1914 гг.), М., 2006; Киняпина Н.С., Кавказ и Средняя Азия во внешней политике России. Вторая половина XVIII - 80-е годы XIX вв., М., 1984; Նույնի՝ Внешняя политика России первой половины XIX в., М., 1965; Куриев М.М., Век Наполеона: люди и судьбы, М., 1997; Орлик О.В., «Европейская идея» Александра I, Новая и новейшая история, 1997, № 4, С. 46-68.

[41] Dwyer Ph. G., Napoleon Bonaparte as Hero and Saviour: Image, Rhetoric and Behaviour in the Construction of a Legend, French History, 2004, 18 (4), էջ 379–403; Dwyer Ph., Remembering and forgetting in contemporary France: Napoleon, slavery, and the french history wars, French Politics, Culture & Society, 2008, 26 (3), էջ 110–22; Englund S., Napoleon and Hitler, Journal of the Historical Society 2006, 1, էջ 151–169; Hanson V.D., The little tyrant. A review of Napoleon, Claremont, 2003; Hazareesingh S., Memory and political imagination: The legend of Napoleon Revisited, French History, 2004, 18#4, էջ 463–483; Նույնի՝ Napoleonic memory in nineteenth-century France: The making of a liberal legend, MLN, 120 (4), էջ 747–773; Geyl P.,Napoleon for and against, Penguin Books, 1947, 1982; Abbott J., Life of Napoleon Bonaparte. Kessinger Publishing, 2005; Bell,

Ռուսաստանը մի կողմից աշխարհը փրկում էր նորահայտ տիրակալից, ինչպիսիներին հին Հռոմում անվանում էին Homo novus, իսկ մյուս կողմից՝ Անդրկովկասի երկու բարեկամ և դրացի ժողովուրդներին ազատագրում էր պարսկա-թուրքական լծից:

Վ.Ա. Դիլոյանը մեծ ուշադրություն է հատկացնում այդ ելևէջների դարաշրջանում հատկապես Անդրկովկասում եռանդուն գործունեություն ծավալած նշանավոր գործիչների կատարած քայլերի վերլուծությանը: Կարևոր է Կ.Ֆ. Կնորինգի (Карл Фёдорович фон Кнорринг, Carl Heinrich von Knorring, 1746-1820թթ.) գործունեության գնահատականը, որը վերաբերում է XVIII- XIXդդ. սահմանագլխին [42]: Նրա կատարած քայլերն ավելի ամրապնդեցին Ռուսաստանի դիրքերն Հյուսիսային Կովկասում և բարենպաստ հող նախապատրաստեցին հետագայում հարավային ուղղությամբ ամրապնդվելու կապակցությամբ: Նա եղավ Կովկասյան 10-րդ դիվիզիայի հրամանատարը, ապա նաև Վրաստանի և Աստրախանի նահանգի կառավարիչը: Փաստորեն նա ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական գործիչ էր, որը ներկայումս խիստ դժվար է պատկերացնել [43]: Նույն կերպ պետք է

D.A., Napoleon: A concise Biography, Oxford and New York, 2015; Blaufarb R., Napoleon: Symbol for an age, A brief history with documents, Bedford, 2007; Dwyer P., Napoleon: The path to power, Yale, 2008; Dwyer Ph., Citizen emperor: Napoleon in power, Yale, 2013; Englund S., Napoleon: A Political Life, Scribner, 2010; Lefebvre G., Napoleon: from Tilsit to Waterloo, 1807-1815, Columbia, 1969; Lyons M., Napoleon Bonaparte and the legacy of the French revolution, St. Martin's Press, 1994.

[42] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 157 և հաջ:

[43] Այս գործչի մասին կարելի է ասել որ, համարյա գրված չէ: Տես՝ Военная энциклопедия в 18-и тт., Под ред. Новицкого В.Ф. и др., СПб., 1911; Дубровин Н., Георгий XII, последний царь Грузии, и присоединение её России, СПб., 1897; Потто В.А., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях: в 5 томах, 2-е изд., СПб., 1887, Т. 1, От древнейших времён до Ермолова. Присоединение Грузии (Кнорринг и Лазарев).

նշել նաև վրաստանյան իշխանական ընտանիքի ժառանգորդ, ռազմա-քաղաքական գործիչ, գեներալ Պ.Դ. Ցիցիանովի վերաբերյալ (իսկական ազգանունը՝ Ցիցիշվիլի, 1754-1806թթ.), որն ունեցավ չափազանց դաժան վախճան՝ դառնալով Բաքվի Հուսեյին Ղուլի խանի խարդավանքների զոհը: Նա անցել էր զորահրամանատարի երկար ճանապարհ, բայց թույլ էր տալիս վրիպումներ, ինչպես իրավացիորեն նշում է Վ.Ա. Դիլոյանը «..իրերը բավական վարդագույն էր տեսնում...», որը, և ավարտվեց նրան եղերական մահվամբ [44]: Նրա դրսևորումների հակասականությունը պետք է փնտրել ոչ միայն իր խառնվածքի, այլև կատարված քայլերի և գործունեության մեջ: Լինելով զինվորական նա պարտավոր էր ենթարկվել հրամաններին: Նա մասնակցել էր ոչ միայն պատերազմների, այդ թվում 1787-1791թթ. Ռուս-թուրքականին, այլև 1794թ. (մարտից-նոյեմբեր) ակտիվորեն ճնշել էր Երկրորդ լեհական ապստամբությունը, որը գլխավորել էր Տադեուշ Կոստյուշկոն (այն հայտնի է նաև Ռեչ Պոսպոլիտայի ապստամբություն անվամբ: Ազգանունը նշվում է Հ.Տ.Ե. Костюшко (Косцюшко) տարբերակներով - 1746-1817թթ.) [45]:

Այս ամենին զուգահեռ տրված է նաև հայազգի գործիչ Թոմաս Օրբելյանի կատարած դիվանագիտական քայլերի նկարագիրն ու գնահատականը, որը գտնվում էր Պ.Դ. Ցիցիանովի

[44] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 167: Պ.Դ. Ցիցիանովի մասին կա բավականին հարուստ գրականություն, որը կապված էր նրա հակասական խառնվածքի և բնավորության հետ: Տես՝ Зубов П.А., Описание достопамятных происшествий в Армении, СПб., 1811; Дубровин Н.Ф., Жизнь князя Цицианова, М., 1823; Лапин В.В., Цицианов, М., 2011; Նույնի՝ Подвиги русских воинов в странах кавказских с 1800 по 1834 год, СПб., 1835-1836; Лебедев П. С. Князь Павел Дмитриевич Цицианов // Русская старина, 1890, Т. 66, № 4, С. 140-148.

[45] Մուրադյան Մ.Ա., Մինասյան Է.Գ., Նշվ. աշխ., էջ 119:

ռազմա-դիվանագիտական շտաբում [46]: Նա պետք է կարգավորեր Դավիթ-Դանիել վեճը, ինչպես ցանկանում էր Ռուսաստանը, բայց հանդիպեց պարսիկների հակազդեցությանը, որն էլ հանդիսացավ Առաջին ռուս-պարսկական պատերազմի առիթներից մեկը:

Հեղինակը մասնակիորեն անդրադառնում է նաև պետական-քաղաքական գործիչ, հեծելազորի գեներալ Ա.Պ. Տորմասովի (1752-1819թթ.) ծավալած գործունեությանն Անդրկովկասում [47]: Ա.Պ. Տորմասովի նշանակումը էապես փոխեց ռազմա-ստրատեգիական կացությունն, հատկապես արևելյան մերձնոծվյան տարածաշրջանում՝ Անապայից մինչև Փոթի: Սա նշանակում էր, որ հեռու չէ այն օրը, երբ կբացվի նաև Հայաստանի ազատագրման դուռը: Վ.Ա. Պոտտոն իր գրքում Ա.Պ. Տորմասովից հետո անմիջապես անդրադառնում է Պ.Ս. Կոտլյարևսկու, Դ.Տ. Լիսաննիչի և Ֆ.Ֆ. Սիմանովիչի կատարած սխրանքներին, որոնք իրենց քայլերով մեծապես նպաստեցին այս հաջողությունների կենսագործմանը: Պատերազմի եզրափակիչ էտապում մեծ էր կոմս, գեներալ-ֆելդմարշալ Ի.Վ. Գուրովիչի (1741-1821թթ.) կատարած գործունեության նշանակությունը: Դեռ 1789թ. նա կարողացել էր թուրքերից ազատագրել Հաջիբեյը (ռուս. Хаджибей, թուրք. Hacıbey, այստեղ այժմ ուկրաինական Օդեսան է), իսկ 1791թ. Անապան: Այս ամենը նշանակում էր, որ նա ուներ այս հակառակորդի դեմ կռվի բավականին հարուստ փորձ, որը և օգտագործեց Անդրկովկասում՝ թուրքերի և պարսիկների դեմ պատերազմում:

---

[46] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 166-167:

[47] Ա.Պ. Տորմասովի գործունեությանն առայժմ անդրադարձել են միայն ընդհանուր բնույթ կրող գործերում՝ հանրագիտարաններում: Այս կապակցությամբ մենք կարող ենք նշել միայն Վ.Ա. Պոտտոյի ուսումնասիրությունը: Տես Потто В.А., Նշվ. աշխ., Т. 1.

Համարյա հայտնի չէ ընթերցողին ռուսական բանակի գեներալ Ն.Ֆ. Ռտիշչևի անունն ու գործը (1754-1835թթ.) [48]: Նա Կովկաս եկավ պատերազմի եզրափակիչ փուլում՝ 1810թ., բայց այստեղ մնաց բավականին երկար, մինչև 1816-1817թթ: Մեծ և անուրանալի էր Ն.Ֆ. Ռտիշչևի դերը Գյուլիստանի պայմանագրի ստորագրման հարցում, այդ թվում և Արցախի ու մյուս հայկական տարածքների՝ Ռուսատանին միավորելու կապակցությամբ: Պայմանագիրն ստորագրվեց հենց նրա կողմից 1813թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում:

Այս պայմանագրի ստորագրումն բարձր գնահատականի արժանացավ նաև պարսից պետության կողմից և նրանք վերջինիս պարգևատրեցին Առյուծի և Արևի 1-ին աստիճանի շքանշանով: Ն.Ֆ. Ռտիշչևը Անդրկովկասում մնաց մինչև 1816թ. և նրան հաջորդեց Ա.Պ. Երմոլովը (1777-1861թթ.): Վ.Ա. Դիլոյանի կողմից քննարկվում է այսպես կոչված «սեպարատ ակտի (լատ. separatus)» ունեցած բացասական հետևանքները, որ ստորագրվել էր մինչև Գյուլիստանի պայմանագիրը՝ պատերազմող երկու կողմերի միջև: Հետագայում Պարսկաստանի կողմից հենց այս պատճառով էլ Գյուլիստանը պետք է ստանար տարբեր մեկնաբանությունների՝ շարժառիթներ՝ կախված հանգամանքներից: Ռուսաստանի համար միանգամայն պարզ է, որ XIX դ. ամենասկզբին՝ իր շուրջը ձևավորված միջազգային իրադրության պայմաններում նման պայմանագրի ստորագրումը ուղի էր ժամանակ շահելու և նոր բախումներից խուսափելու

---

[48] Բարեբախտաբար աղբյուրներում Ն.Ֆ. Ռտիշչևի մասին կան բավականին մանրամասն հիշատակումներ: Տես՝ АКАК, Под ред. Берже А.П., Тифилис, 1873, Т. 5, Кавказ и Закавказье за время управления генерала от инфантерии Н.Ф. Ртищева; Նույն տեղում՝ Тифилис, 1884, Т. 9, Список главных деятелей на Кавказе; Հովհաննիսյան Հ.Ժ., Հայագիտությունը Ռուսաստանում, էջ 382 և հաջ:

համար: Ռուսաստանը միաժամանակ կռվում էր Պարսկաստանի, Թուրքիայի, Նապոլեոնի, իսկ 1808-1809թթ. նաև Շվեդիայի դեմ [49]:

Գյուլիստանից անմիջապես հետո պարսիկները իրենց ներկայացուցիչներին ուղարկեցին Ալեքսանդր I-ի մոտ (1801-1825թթ.), որպեսզի վերանայեն սահմանը այդ երկու պետությունների միջև: Օգտագործելով այս հարցին առնչվող փաստաթղթերը Վ.Ա. Դիլոյանը նշում է, որ պարսիկներն այն համարում էին «..աննշան խնդիր, որը չի մերժվի..» ռուսական իշխանությունների կողմից [50]: Անհնարին է բացատրել, թե ինչ տրամաբանությամբ էին նրանք առաջնորդվում, քանզի գտնում էին, որ մինչև Թերեք գետն ընկած տարածքները պետք է պատկանեն միայն Պարսկաստանին: Այստեղ հարկ է անդրադառնալ հետևյալ պարզ թվաբանությանը. Հյուսիսային Կովկասը տարածքային առումով կազմում է 258 հազ. կմ.², իսկ Հարավայինը՝ 190 հազ. կմ.², այսինքն՝ երկու Կովկասները միասին առնվազն՝ 448 հազ. կմ.²: Թե ինչ դրույթներով էին առաջնորդվում պարսիկները, երբ ընդունել էին նման կեցվածք՝ մնում է անհասկանալի: Այս պահին, ինչպես նկատում է Վ.Ա. Դիլոյանը պարսիկների թիկունքում էին Ֆրանսիան, իսկ առավել ևս Անգլիան: Վերջինս նրանց հետ 1814թ. պայմանագիր էր ստորագրել Թեհրանում [51]: Ուսումնասիրողն հատկապես

[49] Ռուս-շվեդական պատերազմն հայտնի է նաև Ֆինլանդական պատերազմ անվամբ, քանզի արդյունքում Ֆինլանդիան և հարակից այլ տարածքներն ընդմիշտ, ինչպես նշվում էր պայմանագրի տեքստում, միացվեցին Ռուսաստանին (Ալանդական կղզիները, Լապլանդիան և այլն):

[50] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 189:

[51] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 190: Տես նաև՝ Collection of Treaties, Engagements and Sanads Relating to Neighboring Countries / Compil. by Aitchison C.U. 5th ed. Calcutta, 1933, Vol. 13; Գրիգորյան Զ.Տ., Ռուս և հայ ժողովրդի ռազմական համագործակցությունը XIX դարի սկզբին, Երևան, 1957; Меликян В.Г.

մանրամասն անդրադառնում է պարսկա-անգլիական այդ «գործարքի» 4-րդ և 6-րդ հոդ., որոնց իրականացումը ճակատագրական կարող էր լինել նաև մեր համար, քանզի հայերն էլ հրեաների և շատ այլ հնագույն ժողովուրդների նման կարող էին վերածվել հայրենազուրկ ազգի: Արդեն այդ պահին Հայաստանը այս կապակցությամբ կանգնած էր անդունդի եզրին: Եթե Անգլիան մտածում էր իշխել համայն աշխարհում, ապա Պարսկաստանը՝ նպատակ ուներ գոնե Մ. և Մ. Արևելքում ձեռք բերել գերտերության կարգավիճակ, հաղթել այս տարածաշրջանի իր համար մեկ հակառակորդին՝ Օսմանյան Թուրքիային: Նշանավոր հետազոտող Ա.Ռ. Հովհաննիսյանը ստեղծված իրադրության վերաբերյալ նշում է. «Անգլիան պետք է, հետևաբար, մասնակցեր ռուս-իրանական սահմանի որոշմանը, ընդ որում այդ կարելի էր երկակի մեկնաբանել. և՛ որպես Անգլիայի մասնակցություն սահմանածրմանը Գյուլիստանի պայմանագրի հիման վրա, և՛ որպես նրա մասնակցություն նոր սահմանների որոշմանը՝ այդ պայմանագրի տարածքային որոշումների վերանայման հետևանքով: Իսկ դրանից բխում էր, որ Անգլիան միշտ կարող էր, ռուս-իրանական սահմանին համաձայն չլինելու պատրվակով, պարսիկների հարձակումը

Дипломатическая подготовка завоевания Закавказья в 1801-1828гг., Вестник РАУ, Конф. посвящ. присоединению Вост. Армении к России, Ереван, 2003; Քյուրքչյան Ա., 1826-1828թթ. Ռուս-պարսկական պատերազմը, Երևան, 2000, էջ 26 և հաջ; Тунян В.Г., Россия и армянский вопрос, Ер., 1998, էջ 40-49; Балаян Б.П., Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ер., 1988, էջ 30; Васильев С.Д., Васильев Д.В., Гюлистанский мир и российско-иранские отношения в 1810-хгг., Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики, Тамбов, 2017, № 5 (79) С. 44-46; Панеш А.Д., Гюлистанский мирний договор и геополитическая ситуация на Восточном Кавказе в первой трети XIX века, История, археология, этнография Кавказа, Майкоп, 2013 № 4, С. 10-13.

ռուսական տարածքի վրա դիտել ոչ թե իբրև ագրեսիա, այլ պաշտպանություն և այդ հիման վրա ռազմական օգնություն ցույց տալ Իրանին» [52]:

Վ.Ա. Դիլոյանը հատուկ ուշադրություն է հատկացնում պատմագրության մեջ այս պայմանագրին առնչվող տեսակետներին և դրանցից հատկապես դիպուկ և ուշագրավ է պարսիկ հետազոտող Աբբաս-Էգբալի կարծիքի վերլուծությունը: Ըստ վերջինիս այդ պայմանագիրը. «Պարսից պատմության մեջ ամենից չարագուշակներից և վատթարագույններից մեկն էր, քանի որ Պարսկաստանը վերածվում էր մի պարզ գործիքի Անգլիայի ձեռքին» [53]:

Ողջ Կովկասի, ինչպես և ցարի համար փրկարար նշանակություն ունեցավ Ա.Պ. Երմոլովի այստեղ գալը, որտեղ նա մնաց, ինչպես արդեն նշվել է, բավականին երկար: Լինելով գաղափարական առումով հակասական մարդ, քանզի նա կիսում էր ֆրանսիական հեղափոխականների լուսավորչական գաղափարները, այսուհանդերձ նա ունեցավ բախտորոշ դերակատարություն մեր ժողովրդի կյանքում [54]: Ալեքսանդր I-ին ուղղված իր բազմաթիվ զեկուցագրերում նա մշտապես կրկնում էր, որ Ռուսաստանի հարավային սահմանները պետք է հասնեն մինչև Կուր-Արաքսյան տարածքները՝ հակառակ դեպքում

[52] Иоаннисян А.Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столети, Ер., 1958, С. 433. Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 189:

[53] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 191-192; Մուրադյան Մ.Ա., Մինասյան Է.Գ., Նշվ. աշխ., էջ 248 և հաջ:

[54] Լիովին պատահական չէ, որ ուսումնասիրողներից Ա.Վ. Շիշովը՝ Ա.Պ. Երմոլովին նվիրված հոդվածին տվել է հետաքրքիր և խոսուն վերնագիր: Տես՝ Шишов А.В., Смирись, Кавказ! Идёт Ермолов! Генерал от артиллерии и инфантерии Алексей Петрович Ермолов // Полководцы кавказских войн, М., 2001, С. 135-182.

պարսկական վտանգին պետք է սպասել ցանկացած պահին: Սա նման էր հռոմեացի Կատոն Ավագի (լատ. Marcus Porcius Cato – 234-149թթ., մ.թ.ա.)՝ Կարթագենի նկատմամբ ունեցած վերաբերմունքին, որը իր բոլոր ելույթներն հռոմեական սենատում ավարտում էր նույն նախադասությամբ՝ նշելով. «Այնուամենայնիվ ես կարծում եմ, որ Կարթագենը պետք է կործանել «Ceterum censeo Carthaginem esse delendam»: Համեմատությունը կարող է թվալ, թե ինչ որ տեղ, ոչ կոռեկտ է, քանզի Կատոնը կոչ էր անում կործանել թշնամուն, իսկ Ա.Պ. Երմոլովը՝ փրկել Հայաստանն ու Անդրկովկասը Պարսկաստանի և Թուրքիայի անտանելի գերիշխանություններից:

Կատոնի երազանքն իրականացավ, քանզի նրա վախճանից 3 տարի անց Կարթագենն իսկապես կործանվեց և հավասարեցվեց հողին (նույն 146թ. հռոմեացիների կողմից կործանվեց նաև Կորնթոսն Հունաստանում, ուստի այդ տարին համարվում է Հռոմի պատմության ամենասև թվականը), իսկ Ռուսաստանի և հայերի այն ժամանակի թշնամիներ Պարսկաստանը և Թուրքիան՝ կան նաև այսօր: Ավելին, ներկայիս միջազգային բարդ և խրթին իրադրության պայմաններում նրանք խաղում են կարևորագույն գործոնի դեր: Հատկապես պետք է շեշտել Պարսկաստանի անունը, որը զսպում է մեծ տերությունների մեծապետական մղումներն ողջ Ա. և Մ. Արևելքի տարածաշրջաններում: Այդ մասին են խոսում նաև այստեղ ներկայումս տեղի ունեցող գործընթացները, որոնք արժանի են հատուկ ուշադրության:

Աշխարհը միաբևեռ դարձնելու միտումներն սկսվեցին երկու աշխարհամարտերի միջև ընկած շրջանում՝ ԱՄՆ-ում Ֆ.Դ. Ռուզվելտի (1882-1945թթ.) նախագահության շրջանից (1933-1945թթ.): Միաբևեռության միտումներն ժամանակին հասկացան և առաջիններից մեկը, որ սկսեցին արգելակել այդ երևույթը Քեմբրիջյան հնգյակի (Cambridge Five) անդամներն էին՝ Կիմ Ֆիլբի (Kim Philby), Դոնալդ Մաքլեյն (Donald Duart Maclean), Էնթոնի

Բլանտ (Anthony Blunt), Գայ Բյորջես (Guy Burgess), Ջոն Կերնքրոս (John Cairncross): Նրանք մեծապես օգնում էին ԽՍՀՄ-ին՝ հայտնելով մի շարք գաղտնի տեղեկություններ [55]: Ահա համարյա սրան էր ձգտում նաև Պարսկաստանը երկու Ռուս-պարսկական պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում:

Ա.Պ. Երմոլովի Կովկաս ժամանելը էապես փոխեց հարցադրումներն Ռուսաստանի՝ Անդրկովկասյան սահմանների վերաբերյալ, որը ուղակի նշեց. «.. այժմ խաղաղությունը ու բարի համաձայնությունը Պարսկաստանի հետ խիստ օգտակար է, բայց առաջին իսկ պատերազմը, որին մեզ կմղի անհրաժեշտությունը, պետք է սահման տա Արաքս գետը..» [56]: Ա.Պ. Երմոլովը 1817թ. Պարսկաստան այցելելուց և դիվանագիտական բանակցություններից հետո վերջնականապես համոզվեց, որ երկու գերտերությունների հարաբերությունների կարգավորման միակ բանաձևը էպամինոնդասյան՝ «Si vis pacem, para bellum» տարբերակն է [57]: Սա առաջին հերթին փրկություն էր մեր համար, քանզի համարյա բոլոր կողմերից գտնվելով իսլամական շրջափակման մեջ՝ անհայտ է, թե ինչպիսի ապագա կարող էինք ունենալ:

Պարսակաստանի համար նոր «պատուհան», իսկ առավել ընդարձակ իմաստով «դուռ» էր բացվում Ռուսաստանի հետ

[55] Дамаскин И.А., Сто великих разведчиков, М., 2001, С. 268-276: Առավել մանրամասն տես նույն տեղում, էջ 234 և հաջ; Антонов В.С., Карпов В.Н., Тайные информаторы Кремля-2. С них начиналась разведка, М., 2003, С. 205 և հաջ:

[56] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին…, էջ 194:

[57] Էպամինոնդասը (Epameinondas-ը եղել է հին Հունաստանի Թեբե քաղաքի ռազմա-քաղաքական առաջնորդներից (մոտ. 418-362թթ., զոհվել է Մանտինեայի ճակատամարտում): Նրա մասին գրել են շատերը՝ Քսենոփոն, Պլուտարքոս, Դիոդորոս Սիցիլացի, Կոռնելիոս Նեպոտոս և այլոք: Նա է ղեկավարել Բեովտական միությունը, որը գոյություն է ունեցել 379-338թթ:

փախհարաբերություններում 1825թ. դեկտեմբերին: Այդ ամսի 14-ին Ռուսաստանում տեղի ունեցավ դեկաբրիստների ապստամբությունը, որից էլ որոշեցին օգտվել պարսիկները: 1826թ. հուլիսի 19-ին, առանց պատերազմ հայտարարելու պարսից զորքերն անցան սահմանը և սկսեցին պատերազմը Ռուսաստանի դեմ: Այստեղ Վ.Ա. Դիլոյանը մանրամասն քննարկում է, թե ինչ հանգամանքների բերումով է, որ հայ հասարակության բոլոր խավերը միահամուռ, մեկ մարդու նման ոտքի կանգնեցին, որպեսզի յուրաքանչյուրն իր հնարավորությունների սահմաններում օգնի՝ Ռուսաստանի հաղթանակն ապահովելու համար: Նրանք շատ լավ պատկերացնում էին, որ պարտության դեպքում պարսիկներն իրենց չեն ների, ինչպես հետագայում՝ 1915թ. նույնը կատարեցին թուրքերը:

Հայերի համար կարծես թե կար մեկ կոչ՝ կա՛մ հիմա, կա՛մ երբեք: Պայքարի առաջամարտիկ դարձավ մեր հոգևորականությունը: Եթե նրանք, որ մինչ այդ հնազանդության համար քարոզում էին խեղաթյուրելով. «***Եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյո՛ւսն էլ դարձրու***» աստվածաշնչյան արտահայտությունը, ապա այժմ՝ միայն կոչ էին անում զենքերը ձեռքին կռվել [58]: Խնդիրն այն էր, որ հոգևորականությունը խեղաթյուրել էր այս արտահայտությունը նաև այն պատճառով, որպեսզի կասեցնի նաև, մյուս հանգամանքներից զատ՝ տալիոն կոչված երևույթը (լատ. talio, նշանակում է նույնպիսին կամ այդպիսի) [59]:

[58] Աստվածաշունչ, Մատթ. 5:39:

[59] Հռոմեացիներն անվանում էին Lex talionis – Օրենք նույնպիսի (հավասար) փոխհատուցման մասին: Այս կարգը գործածվել է, ըստ հին արևելյան օրենքների տեքստերի վկայությունների, դեռ առաջին գրավոր օրենքների ստեղծման ժամանակաշրջանում, բայց պարզ է, որ եղել է նաև մինչ այդ, երբ հասարակություններն առաջնորդվել են սովորութային իրավունքով:

Իր հետագա շարադրանքում, մեր նշանավոր հետազոտողն, ժամանակից «առաջ է ընկնում»՝ այն իմաստով, որ քննարկում է վիրահայոց և մեր ժողովրդի արևմտյան հատվածի ազատագրման խնդիրները ևս: Ըստ նրա վիրահայերն արդեն գտնվում էին տարանջատված վիճակում, որտեղ կարևոր դեր ուներ նրանց սոցիալական կացությունը: Արևմտահայության շրջանում, մասնավորաբար այստեղի հայ ամիրայական խավը, մնում էր կառչած իր պաշտոններին և ունեցվածքին: Նրանք դեմ էին նույնիսկ 1839 և 1876թթ. թանզիմաթներին [60], գտնելով որ թուլանում են իրենց դիրքերը: Ա.Ա. Խառատյանը գտնում է, ամիրայական դասը, որի ամենանշանավոր ներկայացուցիչներն էին Տատյան (Դաղյան) և Պալյան ընտանիքները, ի վերջո իրենց դիրքերը կորցրին 1860-ական թթ [61]: Կարևոր դեր նրանց անկման հարցում ունեցավ նաև արևմտահայերի 1860 թվականի ազգային սահմանադրությունը, որը հայտնի է նաև որպես Ազգային սահմանադրություն Հայոց անվամբ: Այն Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից ընդունվեց 1860թ. մայիսի 24-ին, իսկ թուրքական իշխանությունների կողմից՝ 1863թ. մարտի 17-ին: Այդ ժամանակ արդեն արևմտահայ իրականության քաղաքական երկնակամարում կային մի շարք առաջադեմ գործիչներ՝ Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն) և այլոք: Չնայած այն հանգամանքին, որ ազգային սահմանադրությունը կրոնական, ազգային, մշակութային, հասարակական կյանքին վերաբերող կանոնադրություն էր, այսուհանդերձ ունեցավ կարևոր դեր ամիրաների դիրքերի թուլացման ասպարեզում:

Վերևում մենք նշեցինք, որ Վ.Ա. Դիլոյանն առաջ է անցնում ժամանակին տեղի ունենալիք դեպքերից, քանզի նա

[60] Խառատյան Ա., Ամիրաների դասը Կոստանդնուպոլսի հայ համայնքում (XVIII դ. II կես – 1860-ական թվականներ), ՊԲՀ, 2013 № 3, էջ 22-28; Barsoumian H. L., The Armenian Amira Class of Istanbul, Yerevan, 2007.

[61] Խառատյան Ա., Նշվ. աշխ., էջ 25:

իրավացիորեն նշում է. «Բնական է, որ նման հետևախորքի վրա առաջին հերթին դրվեր միայն Արևելյան Հայաստանի և ամենայն հայոց կաթողիկոսության ազատագրման խնդիրը: Սակայն դա էլ, ինչպես ցույց տվեցին Արևելյան Հայաստանի միացմանը հետևած իրադարձությունները, չէին կարող որոշակիություն մտցնել հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրների մեջ» [62]: Ինչ էլ որ լիներ հարցերից մեկը մնում էր պարզ և, չուներ ապացուցման որևէ խնդիր: Խոսքը արևմտահայերի ազատագրման մասին է, քանզի նրանք և՛ մինչև 1828թ., և՛ դրանից հետո ձգտելու էին անցնել ցարական Ռուսաստանի ենթակայության ներքո: Այսպիսի մտադրությունների անթիվ օրինակներից Վ.Ա. Դիլոյանը մեջ է բերում Կարսի հայոց Հովհաննես արքեպիսկոպոսի նամակն՝ ուղղված ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Կ.Ֆ. Կնորինգին. «Ի վեր աստուած եմք ապաւինեալ, և ի վայր զքեզ, որ եմք անօգնական ազգս հայոց, և դու փութացէրմեզ օգնութիւն առ ի վերուստ, և տէր օգնեսցէ ձեզ ի բարձուստ, միշտ՝ և հանապաղ, ամէն» [63]:

Հովհաննես արքեպիսկոպոսի այս նամակը կարելի է անվանել հանդգնության ծայրահեղ դրսևորումներից մեկը, քանզի դեռ հայտնի չէր, թե դեպքերն ինչպիսի զարգացում կստանան ապագայում: Նույնպիսի իրավիճակում էին նաև արևելահայերի այն հատվածը, որ 1804-1813թթ. Ռուս-պարսկական պատերազմից հետո շարունակում էին մնալ վերջինիս տիրապետության ներքո: Վ.Ա. Դիլոյանը ներկայացնում է նույնիսկ երևանահայերի նամակն՝ ուղղված վրացահայերին (ավելի ստույգ Մելիք Աբրահամին և Գաբրիել յուզբաշուն), որտեղ խնդրում էին ամեն կերպ միջամտել, որպեսզի իրենք ևս ազատագրվեն [64]: Սակայն ամբողջ խնդիրն այն էր, որ

[62] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 235:

[63] Նույն տեղում, էջ 241:

[64] Նույն տեղում, էջ 242-243:

վրացահայերն ևս գտնվում էին աննախանձելի վիճակում, որի հրահրող էր հանդիսանում վերոհիշյալ գեներալ Պ.Դ. Ցիցիանովը: Վ.Ա. Դիլոյանը ներկայացնում է նրա զեկուցագրերից մեկը կայսր Ալեքսանդր I-ին, ուր նշվում է. «...ուստի համարձակվում եմ ամենահպատակաբար հաստատապես զեկուցել ձ. կ. մ., որ հայ իշխանների նման համեմատությունը վրաց իշխանների հետ վերջիններիս համար վիրավորական կլինի, դատելով ըստ նրանց մտածելակերպի և սովորույթների, որոնք ինձ բավականաչափ հայտնի են դարձել» [65]: Ինչպես նշում է հեղինակը այսպիսի վերաբերմունքն ուներ իր արմատները և հավելում է Ի. Բարաթիշվիլու անունը, որը Պ.Դ. Ցիցիանովից մոտ 40 տարի առաջ ասում էր. «..անաստված հայերը... վաճառականները, չարչիաբար և մեր թագավորի մեղաց պատճառով ներխուժելով արքունիք ... հակառակ աստվածային կամքի Վրաստանում դարձել են տերեր» [66]: Նրա կարծիքով հայերն ամենուր էին, որը մեզ անհայտ պատճառներով նրան «անհարմարություն» էր պատճառում: Այո, հայերն ամենուր էին ոչ հաճույքի համար, այլ ճակատագրի բերումով: Այս մասին նրանից առաջ նշել է նշանավոր մտածող-փիլիսոփա Իմանուիլ Կանտը (1724-1804թթ.).

[65] Նույն տեղում, էջ 254: Համեմատության համար պետք է ընդգծել, որ նախկինում իդեալականացվում էր XII-XIIIդդ. սահմանագլխին ձևավորված հայ վրացական ռազմա-քաղաքական համագործակցությունը, որ տեղի ունեցավ Թամար թագուհու օրոք (1184-1213թթ.), սակայն ՀՊ-ի վերջին հրատարակության մեջ հեղինակները (Հ. Մարգարյան, Բ. Առաքելյան, Ա. Շահնազարյան) աշխատել են ցույց տալ հնարավորինս նաև դրա բացասական կողմերը: Տես՝ ՀՊ, Հ. II, Գիրք երկրորդ, (IX դարի կես - XIV դարի սկիզբ), Երևան, 2014, էջ 220 և հաջ: Տես նաև ՀԺՊ, Հ. III, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից – մինչև XIV դարի կեսերը), Խմբ. Առաքելյան Բ.Ն., Երևան, 1976, էջ 523 (հեղ. Լ.Հ. Բաբայան):

[66] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 255: Ավելի ուշ Ի. Բարաթիշվիլու խոսքերը պետք է կրկներ նաև վրաց բանաստեղծ Իլյա Ճավճավաձե (1837-1907թթ.):

«...Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ իշխում է ինչ-որ հատուկ տեսակի առևտրային ոգի, այն է՝ նրանք զբաղվում են փոխանակությամբ՝ ոտքով ճամփորդելով Չինաստանի սահմաններից մինչև Կորսոյի հրվանդանը Գվինեայի ափին. դա ցույց է տալիս այն բանիմաց և աշխատասեր ժողովրդի հատուկ ծագման մասին, որը հյուսիս-արևելքից մինչև հարավ-արևմուտք ուղղությամբ անցնում է գրեթե ողջ Հին աշխարհը և կարողանում գրկաբաց ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում են. դա ապացուցում է նրանց բնավորության (որի նախնական ձևավորումը մենք արդեն ի վիճակի չենք հետազոտել) զերազանցությունը ներկայիս հույների թեթևամիտ և ստորաքարշ բնավորության նկատմամբ» [67]:

Այս հարցով մեծապես զբաղված էին նաև սփյուռքահայերը, իսկ որպես ազատագրման ջատագով-«առաջամարտիկներ՝ բնականաբար Ռուսաստանում բնակվող հայերը և հնդկահայությունը: Դեռ 1805թ. նոյեմբերին Մադրասում Նազար Հակոբջան Շահամիրյանի գլխավորությամբ տեղի ունեցած հավաքի ժամանակ քննարկվում է ազատագրման խնդրի հետ առնչվող հանգամանքները: Այստեղ կարելի է դնել բազմաթիվ հարցական նշաններ, թե ի՞նչ հանգամանքների բերումով էր, որ Ռուսաստանը մեծագույն բարյացկամությամբ էր վերաբերվում հնդկայերի դիմումներին: Դա երևում է, ինչպես օրինակ Ա.Յա. Իտալինսկու՝ Ալեքսանդր I-ին հղված գրությունից. «Ռուսական հպատակություն ընդունելու և իրենց հայրենի Հայաստան վերադառնալու վերաբերյալ մադրասաբնակ հայերի խնդրագիրը արժանի է որոշ ուշադրության» [68]: Լինելով դիվանագետ (նա այդ պահին Ռուսաստանի դեսպանն էր Կ. Պոլսում), բնականաբար Ա.Յա. Իտալինսկին իր գրության մեջ չէր կարող բացել բոլոր չակերտները: Նա ամեն ինչ Ալեքսանդր I-ին կարող էր հայտնել միայն դեմառդեմ, կամ ինչպես ընդունված է

[67] Кант И., Соч. в шести томах, Т. 6, М., 1966, С. 572-573.

[68] Նույն տեղում, էջ 245:

tête-à-tête խոսակցության դեպքում (անգլիացիներն այս դեպքում ասում են «head-to-head»):

Ռուսաստանում սկսել էին ձևավորվել կոպիտ ասած «հավակնություններ» Հնդկաստանի նկատմամբ: Եթե Ա.Յա. Իտալինսկին նշում էր առևտրական կապերի մասին, հատկապես հնդկահայ առևտրականների հնավորություններն ի նպաստ դնել Ռուսաստանի շահերին, ապա հետագայում այդ շահերն ստանալու էին այլ երանգավորումներ ևս: Երևի առաջին ռուսն, որ եղել էր Հնդկաստանում Աֆանասիի Նիկիտինն էր (Афанасий Никитин - XV առաջին կես – մոտ. 1475թթ.), որը գրեց « Ճանապարհորդություն երեք ծովից այն կողմ» («Хожение за три моря») աշխատությունը [69], որը եղել է 1466թ: Հետաքրքրությունն Հնդկաստանի հանդեպ Ռուսաստանում ավելի մեծացավ և ծավալվեց XVIII դարի երկրորդ կեսին, երբ այստեղ եկավ Գ.Ս. Լեբեդևը (1749-1817թթ.), որին համարում են նաև առաջին ռուս հնդկագետը: Ռուսաստանի համար այս և հետագա ժամանակներում որպես ծավալման հիմնական ուղղություններ էին հանդիսանում մասամբ արևելքը, իսկ հիմնականում՝ հարավը: Ցարական կառավարական շրջաններում դա շատ լավ հասկանում և պատկերացնում էին, որ իրենց պետք է դիմակայեին Անգլիան ու մյուս մեծ տերությունները՝ այս տարածքներում ռուսական գաղութներ հիմնելուն: Սա բնական էր: XIXդ. վերջերին (1880-ական թթ.) հնդկագիտությունը վերջնականապես Ռուսաստանում ստացավ «քաղաքացիություն», հիմնվեց բուդայագիտության կենտրոնը: Այստեղ առաջին հերթին պետք է

[69] Այս գիրքն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ: Տես՝ Лихачёв Д.С., Хожение за три моря Афанасия Никитина // Великое наследие: Классические произведения литературы Древней Руси, Заметки о русском, 2-е изд., СПб., 2007; Хожение за три моря Афанасия Никитина, Л., 1986; Бобров А.Г., Что искал в Индии Афанасий Никитин?, Rossica antiqua? 2017, 1/20, С. 124-143.

հիշատակել Ի.Պ. Մինաևի (1840-1890թթ.), Ֆ.Ի. Շչերբատսկու (1866-1942թթ.) և Ս.Ֆ. Օլդենբուրգի (1863-1934թթ.) անունները, իսկ որոշ գիտնականների գործը առայժմ համարյա մնացել է «ստվերում»: Օրինակ՝ Կ.Ա. Կոսսովիչի (1814-1883թթ.), Պ.Յա. Պետրովի (1814-1875թթ.), Վ.Պ. Վասիլևի (1818-1900թթ.), Օ.Պ. Միլլեռի (1833-1889թթ.), Վ.Ս. Միլլեռի (1848-1913թթ.) և այլոց անունները: Անհայտ են նաև Օ.Ն. Բյոտլինգկի (1815-1904թթ.) անունը, որը կազմեց սանսկրիտերենի բառարան գերմանացիներ Ռ. Ֆոն Ռոտի (1821-1895թթ.) և Ա.Ֆ. Վեբերի (1825-1901թթ.) հետ: Արդեն ավելի ուշ հանդես եկավ Ա.Պ. Բարաննիկովը (1890-1952թթ.): Ստացվում է, որ Ռուսաստանի ապագա ծրագրերի մեջ էր մտնում նաև Հնդկաստանի ընգդրկումն իր սահմանների մեջ, քանզի XIX դարի սկզբներից այստեղ մեծապես ակտիվացել էր Մեծ Բրիտանիան (այն որպես գաղութ վերջինիս կազմում մնաց 1858-1947թթ.):

Հայերի հեղինակությունն Ռուսաստանում մեծապես աճեց նապոլեոնյան 1812թ. պատերազմի ժամանակ: Հայերն իրենց հերթին մեծագույն դառնությամբ են խոսում բոլոր այն ավերածությունների վերաբերյալ, որ կատարեցին ֆրանսիացիներն այստեղ, հատկապես Մոսկվայում [70]: Իզուր չէ, որ հետագայում Երևանի ազատագրումը պարսիկներից Խ. Աբովյանը պետք է համեմատեր ռուսական զորքերի Փարիզ մտնելու հետ, չնայած մի շարք հանգամանքների բերումով՝ դրանք անհամեմատելի են:

Ազատագրման հիմնական գործոններից Վ.Ա. Դիլոյանը համարում էր լուսավորության տարածումը, որը դանդաղ, բայց հաստատուն քայլերով սկսել էր տարածվել նաև Հայաստանում: Դրա առաջին բեկորներն իրենց հաստատումն ունեցան նախ

[70] Այս հարցը բավականին մանրամասն քննարկվում է նաև Վ.Ա. Դիլոյանի կողմից, որը նա անվանում է ռուսահայոց պատերազմ: Տես՝ Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 249:

հայկական գաղթավայրերում, ապա ավելի ուշ՝ նաև բուն Հայաստանում: Այս գաղափարներն իրենց արտացոլումը գտան «Յորդորակ», «Որոգայթ փառաց», «Նշաւակ (նշանակում է - ծաղրանքի առարկա, նշանակետ, նշան, թիրախ, ծաղրուծանակ, խաղք ու խայտառակ)» աշխատություններում [71]: Մենք արդեն նշեցինք, թե իր՝ Լազարյաններին նվիրված մենագրությունում Վ.Ա. Դիլոյանը ինչպիսի մեծ կարևորություն էր տալիս նրանց ծավալած լուսավորչական գործունեությանը:

Համաձայնվելով այն ժամանակների նշանավոր գործիչների առաջադրած մտքերին հեղինակը ևս հանգում է այն իրավացի մտքին՝ որ կրթությունը պետք է տարանջատել եկեղեցուց: Սա բավականին բարդ, կարելի է նշել՝ համարյա անլուծելի խնդիր էր: Անլուծելի ոչ թե միայն այն պատճառով, որ հայ մարդը չափազանց աստվածասեր և աստվածապաշտ էր, այլև, որ դա համարյա անկարելի էր իրականացնել պետականության բացակայության պայմաններում: Ճիշտ է կարող էին բացվել դպրոցներ, սակայն դրանք քանակական առումով չէին կարողանա բավարարել բոլոր պահանջները: Պետք է լիներ պետականություն, իսկ միայն որոշ պետականորեն մտածող գործիչների խանդավառության կամ ոգևորություն (էնտուզիազմի) շնորհիվ անհնարին էր հեռու գնալ: Լազարյանները պատմության մեջ պատահական մարդ չէին, այս պատճառով էլ նրանք գերազանց հասկանում էին, թե ինչպիսի հայրենա և ազգանվեր գործունեություն են իրենք ծավալել ապրելակերպի բազմաթիվ բնագավառներում: Դպրոցաշինության վերաբերյալ նրանք նշում էին. «..զի ուսումնարանն մեր եղիցի գլուխ հայոց դպրոցացն ողջոյն ըստ

[71] Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ (Նոր տետրակ որ կոչի յորդորակ), Երևան, 1991, թարգ. Խաչատրյան Պ.Մ; Շահամիրյան Հ., Շահամիրյան Շ., Որոգայթ փառաց, Երեւան, 2002: Այս գործերի վերաբերյալ, հատկապես հայերենով, կան բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ:

օրինակի համալսարանին ռուսաց ունիվերսիդետ կոչեցելոյն, և այնք իբրու անդամք կախեսցին զամենայնէ...» [72]: Դպրոցների շարքում պետք է առանձնացնել նաև Ներսիսյան հոգևոր դպրոցը, որը Կովկասում հիմնված հայկական առաջին միջնակարգ դպրոցն էր և, բացվել էր 1824թ. (գործել է մինչև 1924թ.): Այն մայր հայրենիքին տարածքային առումով ամենամոտ գտնված ուսումնական հաստատությունն էր, ուստի նրա գոյությամբ և աշխատանքով շահագրգռված ու մտահոգված էին համայն հայության ներկայացուցիչները: Տարբեր առումներով այս դպրոցի հետ են առնչվել մեր մշակութային սերուցքի շատ նշանավոր գործիչներ՝ Ն. Աշտարակեցին, Ալ. Մանթաշյանցը, Հ. Ալամդարյանը, Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանը, հայ նոր

[72] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 273; Հայ դպրոցի և նրա պատմության մասին գրվել են բազմաթիվ կարևոր ուսումնասիրություններ, որոնք՝ բոլորն անհնարին է թվարկել: Տես՝ Երիցյան Ա., Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի, Հ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 271; Սանթրոսյան Մ.Հ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964; Նազիկյան Գ.Ա., Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից՝ մինչև 19-րդ դարի 50-60-ական թվականները), Երևան, 1969; Իգնատյան Ա.Հ., Լազարյան ճեմարան, Երևան, 1969, էջ 22 և հաջ; Մալխասյանց Ստ., Պատմութիւն Ներսիսեան հոգեւոր դպրոցի յոթանասունհինգ ամեայ, գոյութեան (1824—1899), Թիֆլիս, 1900, էջ 29 և հաջ; Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, С. 902-903; Историческая записка об Астраханском армянском Агабабовском уездном училище с 1810 по 1910 г., сост. Паремузов Л.И., Астрахань, 1913, С. 7 և հաջ: Վերոհիշյալ աշխատությունների շարքում մենք ցանկանում ենք առանձնացնել Ա. Ալպոյաճյանի հետազոտությունը, որ տալիս է հայ դպրոցի պատմությունն ամենավաղ ժամանակներից՝ հավաքելով պատմական աղբյուրներում պահպանված «փշրանքները»: Տես՝ Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ դպրոցին, Ա հատ., Կահիրե, 1947:

թատրոնի հիմնադիրներից Գ. Շերմազանյանը, Պ. Պոռշյանը, Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը, Ե. Քոչարը, Դ. Դեմիրճյանը, ազգագրագետ Ե. Լալայանը և շատ ուրիշները:

Ուշագրավ է Վ.Ա. Դիլոյանի այն միտքը, թե նա ինչպիսի հետաքրքիր համեմատականներ է անցկացնում մեր և ֆրանսիական եկեղեցիների միջև. «Եթե ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը ուղղված էր նաև կաթոլիկ եկեղեցու ու պապականության տիրապետության դեմ, ապա հայ իրականության մեջ, ստեղծված պայմանների բերումով, եկեղեցու հարցը ուրույն լուծում էր ստանում: Դրվում էր սոսկ եկեղեցու կառավարման բարենորոգության, դրանով իսկ պատմական նոր ժամանակաշրջանին նրա հարմարեցման հարցը» [73]: Հեղինակը լիովին իրավացի է, քանզի Ֆրանսիան դասային պետություն էր, որտեղ առաջին դաս էր համարվում հոգևորականությունը, երկրորդ՝ ազնվականությունը, երրորդ՝ մնացյալ ժողովուրդը [74]: Ավելին, պապերը 1309-1378թթ. քաղաքական հանգամանքների բերումով «հայտնվեցին» Ֆրանսիայում, որը պատմությունից հայտնի է «պապերի Ավինյոնյան գերություն» անվամբ (ֆրանս. Avignon, որը քաղաք է այժմյան Ֆրանսիայի հարավում՝ Պրովանս-Ալպեր-Լազուր ափ երկրամասում, Ռոն գետի արևելյան ափին) [75]: Ֆրանսիական եկեղեցին՝ դա կաթոլիկական

[73] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 277-278:

[74] Карлейл Т., Французская революция. История / Пер. с англ. Дубровина Ю.В., Мельниковой Е.А., М., 1991; Барг М.А., Черняк Е.Б., Великие социальные революции XVII-XVIII веков, М., 1990; Матьез А., Французская революция, Ростов н/Д., 1995; Նույնի՝ Как побеждала Великая французская революция? М., 2011; Чудинов А.В., Французская революция: история и мифы, М., 2007; Собуль А., Первая республика, 1792-1804, М., 1974; Ревуненков В.Г., История Французской революции, СПб., 2003.

[75] Лозинский С.Г., История папства, М., 1986, изд. третье; Andre J.-Fr. Histoire de la papaute a Avignon, Avignon, 1887; Favier J. Les papes d'Avignon, P., 2006; Mollat G. Les Papes d'Avignon, 1305-1378, P., 1950;

թեին պատկանող եկեղեցի էր (հուն.՝ καθολικός, լատ.՝ catholicismus, նշանակում է համընդհանուր, տիեզերական), որը մշտապես պապերի «գդակի» գերագույն հսկողության ներքո էր գտնվում: Դա տեղի ունեցավ եկեղեցիների 1054թ. պառակտումից կամ բաժանումից հետո, որը կոչվում է սխիզմա (հին հուն.՝ σχίσμα, նշանակում է պառակտում, անջատում (կրոնների կամ կրոնական կազմակերպությունների), որից հետո Ֆրանսիան դարձավ կաթոլիկ եկեղեցու հենասյուներից մեկը:

Կրոնի կազմակերպման առումով այլ իրավիճակում էր Հայաստանը, քանզի այն բացարձակապես ինքնուրույն էր, ինչպես և մյուս բոլոր ուղղափառ եկեղեցիները, որոնց բառացի անվանումն է ինքնագլուխ (հին հուն.՝ αυτόςκεφαλή բառից - αυτός – ինքնուրույն և κεφαλή – գլուխ բառերից) [76]: Ինչպես հայ եկեղեցու, այնպես էլ Ռուսաստանի ու նրանց կայսրերի հանդեպ հայերի ունեցած վերաբերմունքի լավագույն արտահայտություններից է համարվում ... ֆրանսիացի ճանապարհորդ Վ. Ֆոնտանյեի հայտնած վկայությունները. «Դպրոցում (խոսքը Երզրումի հայկական դպրոցի մասին է – լրացումը մերն է Հ.Հ.) նա պատին փակցված է տեսնում ռուսաց կայսեր և կայսրուհու պատկերները: Վ. Ֆոնտանյեն ասում է, որ «այդ հերձվածողները (լուսավորչական հայերը – Վ.Դ.)» նրանց

Renuuard Y., La Papaute d'Avignon, P., 2004; Vingtain D., Avignon: le palais des Papes, Saint-Leger, 1998.

[76] Прот. Цыпин Вл., Автокефалия. // Православная энциклопедия, М., 2000, Т. I, С. 199-202. Երբեմն այս եկեղեցիների բաժանման պատճառ են համարում տարածքային վեճերը՝ հատկապես Հարավային Իտալիայի կապակցությամբ, բայց դարերի ընթացքում գաղափարա-դավանաբանական հակասություններն հասել էին մի այնպիսի մակարդակի, որ նրանց միասնությունն ուղղակի այլևս անհնարին էր: Տես նաև՝ Поснов М.Э., История христианской Церкви (до разделения Церквей – 1054 г.), Брюссель, 1964, С. 27 և հաջ:

համարում են իրենց օրինական սուվերենները» [77]: Այս առումով հատկապես հատկանշական էր Ներսես Ե Աշտարակեցու (իսկական անունը՝ Թորոս Հարությունի Շահազիզյան) ծավալած գործունեությունը, որի կապակցությամբ Վ.Ա. Դիլոյանը պատկերավոր գրում է. «1826թ. բռնկված ռուս-պարսկական պատերազմը կարծես թե ***սանձազերծեց*** (ընդգծումը մերն է – Հ.Հ.) Ներսես Աշտարակեցու ողջ եռանդը» [78]:

Մեր մի քանի հազարամյակների պատմության ընթացքում հայրենասեր և նվիրյալ կաթողիկոսների և այլ աստիճաններ զբաղեցրած հոգևորականների պակաս երբեք չենք զգացել: Այս պատճառով էլ պատահական չէ, որ Ն. Աշտարակեցու գերեզմանաքարին փորագրվել են հետևյալ երկու բառերը՝ «Պաշտպան հայրենյաց»: Նրան չճանաչողը կարող է մտածել, որ ամենայն հավանականությամբ դա որևէ նշանավոր զինվորականի գերեզմանն է: Նրա կողքին էր մշտապես Հ. Ալամդարյանը և, ինչպես օրինակ, ռուս գեներալ՝ Ն.Մ. Միպյագինը (1785-1828թթ., 1827-1828թթ. եղել է Թիֆլիսի նահանգապետը), որը հայերին քաջալերում և կոչ էր անում կազմել ջոկատներ և անվախ կռվել՝ ատելի պարսիկների դեմ: Նույնը պետք է նշել նաև ռուս զինվորական-գեներալ, դիվանագետ և ճանապարհորդ Ն.Ն. Մուրավյովի վերաբերյալ (1794-1866թթ., նա հայտնի է նաև Մուրավյով-Կարսեցի անվամբ), որից մեզ են հասել նաև կարևոր գրառումներն՝ Կովկասում և Հայաստանում կատարված ռազմա-քաղաքական

[77] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 285: Այս ճանապարհորդությունը տեղի է ունեցել 1821-1828 թթ., երբ Արևմտյան Հայաստանը Թուրքիայի ենթակայության ներքո էր: Վ. Ֆոնտանյեն հիշատակում է նաև իր կողմից տեսած բազմաթիվ եկեղեցիների մասին:

[78] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 286:

իրադարձությունների վերաբերյալ [79]: Այս և այլոց կատարած գործերը, համարյա առանց չափազանցության, գտնվում էին պատմության մոռացության մատնված «արխիվներում», որոնք իրենց տեղը վերագտան շնորհիվ Վ.Ա. Դիլոյանի: Այժմ այդ գործը մեծագույն հաջողությամբ և նվիրվածությամբ շարունակում է տողերիս հեղինակի մերձավոր ընկեր և բարեկամ՝ Հայկազ Ժորայի Հովհաննիսյանը:

Վ.Ա. Դիլոյանը առանց չափազանցության եզրակացնում է, որ XIX դարի առաջին երեսնամյակին Անդրկովկասում տեղի ունեցած իրադարձությունները բախտորոշ նշանակություն ունեցան մեր ժողովրդի կյանքում: Ազատագրվեց մեր տարածքների մի փոքրիկ հատվածը՝ 20.720 կմ. քառ., որի հիմքի վրա էլ այսօր գոյություն ունի Հայաստանի հանրապետությունը՝ զբաղեցնելով պատմական Մեծ Հայքի թագավորության ընդամենը 1/10 մասը [80]:

[79] Муравьёв-Карсский Н.Н., Собственные записки: 1811—1816 / Вступ. ст. Ваньковича А.М., М., 2015 (Военные мемуары); Муравьев Н.Н., Из записок генерала-адъютанта Николая Николаевича Муравьева-Карсского // Русский архив, 1868, М., 1869, Стб. 733-794; Задонский Н.А., Жизнь Муравьёва, М., 1985; Европеус И.И., Николай Николаевич Муравьева // Русская старина, 1874, Т. 11, № 9, С. 181-184; Остен-Сакен Д.Е., Николай Николаевич Муравьев в 1828-1856 гг. // Русская старина, 1874, Т. 11, № 11, С. 534-543.

[80] Երեմյան U.S., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963; Акты Кавказской Археографической Комиссии., Т. VII, док. № 437.

ԳԼՈՒԽ II

Վ.Ա. ԴԻԼՈՅԱՆԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ.

Ա. Վ.Ա. Դիլոյանը և հայոց պատմության նորովի պարբերացման հիմնահարցը.

Մեզանում գաղտնիք չէ, իսկ ավելի ստույգ ակնհայտ փաստ է, որ նախկինում (Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերից) Հայաստանի, ինչպես և խորհրդային մյուս ժողովուրդների պատմությունների պարբերացումն արհեստականորեն հարմարացվել էր երկու հանգամանքների հետ: Այստեղ հարկ է նշել, որ կային այնպիսիները, որոնք նույնիսկ չունեին իրեն պատմությունը, ինչպես օրինակ մեր արևելյան հարևանը: Որպես Նորագույն պատմության սկիզբ սկսեցին համարել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, չնայած այն հանգամանքին, որ մյուս 14 հանրապետությունների խորհրդայնացումները տեղի ունեցավ ավելի ուշ: Այս դեպքում նրանց պատմությունները անհրաժեշտ էր սկսել ավելի ուշ ժամանակից (Բելեռուսիան և Ուկրաինայի արևելյան մասերը խորհրդայնացվեցին Ռուսաստանի հետ համարյա միաժամանակ, Անդրկովկասյան հանրապետությունները՝ 1920թ., Մերձբալթիկան՝ 1939-1940թթ., Մ. Ասիան, կամ ինչպես ընդունված է այժմ՝ Կենտրոնական Ասիան՝ 1930-ական թթ. և այլն): Երկրորդ կարևոր գործոնը՝ դա հեղափոխությունների հետ «հարմարեցնելու» տակտիկան էր: Այստեղ կարևոր չէր, թե այն երբ ու որտեղ էր տեղի ունեցել:

Խոսքը վերաբերում և առնչվում էր ինչպես Սավմակի մ.թ.ա. 110-108թթ. տեղի ունեցած ապստամբությանը Բոսֆորի թագավորությունում (ներկայիս Ղրիմում), 74-71թթ. Սպարտակի՝ Հռոմեական հանրապետությունում տեղի ունեցածին, այնպես էլ հավասարապես մյուսներին: Հեղափոխությունների և ապստամբությունների տեսադաշտից պատմության շարադրանքն հանգեցրեց նրանից ածանցված մեկ այլ գործոնի ձևավորմանը: Պատմությունը շարադրվում էր ըստ ֆորմացիաների: Այս դեպքում անտեսվում էին զարգացումների ազգային առանձնահատկությունները: Թե ինչ է պետք հասկանալ վերջինիս ներքո պարզ և հասկանալի է նույնիսկ պատմությունը չիմացողներին (նկատի ունենք նրանց, ովքեր չգիտեն բազմաթիվ թվեր, փաստեր և անուններ): Բայց յուրաքանչյուրը գիտեր, որ ֆորմացիոն առումով մինչև խորհրդայնացումը Մ. Ասիան գտնվել էր ստրկատիրա-ֆեոդալական շրջանում, Մերձբալթիկայում ավելի հասուն կապիտալիզմ էր, քան Ռուսաստանի արևմտյան շրջաններում, Անդրկովկասը ուներ միջանկյալ դիրք Ռուսաստանի և Մ. Ասիայի միջև և այսպես շարունակ: Հենց բուն Ռուսաստանում կարելի էր տեսնել տարբեր ֆորմացիաների առկայությունը: Անհնարին էր իրար հետ համեմատել Ուրալից արևելք և արևուտք ընկած տարածաշրջանները: Տվյալ դեպքում Ուրալը մեր կողմից դիտարկվում է որպես մոտավոր ջրբաժան կամ սահմանագիծ, քանզի այս երկիրն ապրում էր բազմակացութաձևության (կենսաձև, ապրելակերպ, կենսապայման) պայմաններում: Փաստորեն ֆորմացիաների կամ կացութաձևերի տեսանկյունից դիտարկելն ևս սխալ էր, քանզի բոլոր այս և մյուս ժողովուրդների պատմությունները լցվում էր մեկ ընդհանուր կաթսայի մեջ, խոսվում երևույթների մասին, որ նրանց մոտ երբեք չէր եղել:

Այս և նմանատիպ այլ երևույթների մասին է խոսվում Վ.Ա. Դիլոյանի «Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի

շուրջ» հոդվածում [81]: Նա նշում է. «Հասարակական-տնտեսական արտադրաեղանակների կամ կազմաւածքների (ֆորմացիաների) ուսմունքի հիման վրա կազմուած ուրուագիծը (սխեման) բացարձականացուեց եւ պարտադրուեց պատմական գիտութեանը: Բանն այն է, որ Խ.Ս.Հ.Մ.ի կազմի մէջ մտնում էին նաեւ ժողովուրդներ, որոնք դեռեւս ապրում էին տոհմատիրական կամ աւատատիրական կացութաձեւերին բնորոշ կարգավիճակում եւ ստիպուած էին միանգամից սոցիալիզմ կառուցել» [82]: Փաստորեն խախտվում էր «Ծանիր զքեզ (հին հուն. Γνῶθι σεαυτόν, լատ. Nosce te ipsum կամ Temet nosce)»-ի սկզբունքը [83]: Փաստորեն ստացվում է, որ նրանք ապրում էին (քնում և արթնանում) մի կացությամբ, ապրելակերպով, բայց այն գրականության մեջ գնահատվում էր լիովին այլ մոտեցումներով: Այս անհամասնությունն առավել նվազ չափաբաժնով կար նաև մեր ժողովրդի անցած պատմական ուղու գնահատման բնագավառում: Վ.Ա. Դիլոյանը նշում է նաև, որ այդ ուղու գնահատման վրա մեծապես ազդել է Պատմահայր Խորենացու «Հայոց պատմության» եզրափակիչ գլուխը՝ «Ողբ»-ը [84]: Նա գրում է. «...Ողբի» շունչն է զգացվում մեր պատմաբանների գրեթէ բոլոր աշխատութիւններում, թէեւ Քերթողահօր «Ողբը» նկատի ուներ 5-

[81] Դիլոյան Վ.Ա., Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ, Դրօշակ, 1998, թիւ 16, օգոստոս 13-26, էջ 26-33:

[82] Դիլոյան Վ.Ա., Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ, էջ 26:

[83] Այս արտահայտությունը վերագրվում է հույն յոթ իմաստուններից և՛ Թալես Միլեթացուն (624-546թթ.), և՛ Քիլոն (Խիլոն) Սպարտացուն (620-520թթ.):

[84] Տես՝ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածութիւնը Աբեղյան Մ. եւ Յարութիւնեան Ս., լրացումները՝ Սարգսյան Ա.Բ., Երևան, 1991, III, ԿԸ: Գլխի լրիվ անվանումն է «Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց, եւ եպիսկոպոսապետութեանն յազգէց սրբոյն Գրիգորի»:

րդ դարում ստեղծված յստակ կացութեան անաչառ պատկերացումը, երբ հայ ժողովուրդը դեռեւս նոր էր կորցրել իր ազգային պետութիւնը եւ պետական անկախ կեանքը» [85]:

Անհարին է պատկերացնել որևէ ժողովրդի կամ ազգի պատմություն, որը բոլոր ժամանակներում այն կերտած լինի գտնվելով բոլորից մեկուսացված կարգավիճակում: Այսպես չի եղել, իսկ առավել ևս ներկայիս պայմաններում անհնարին է, որ տեղի կունենա: Այս մասին մեզ հուշում է թեկուզ համաշխարհային քաղաքակրթությունների պատմությանն վերաբերող ցանկացած դասագիրք կամ ուսումնասիրություն: Հայաստանը, իսկ ամբողջության մեջ վերցրած հայ ժողովուրդը (ժողովուրդ արտահայտությունը մենք պետք է շեշտադրենք, քանզի մեր պատմության ամենավաղ ժամանակներից գոյություն է ունեցել նաև սփյուռքը) նույնպես ենթարկվել է այդ ազդեցություններին և փոփոխություններին: Սա լինելու է ցանկացածի մոտ՝ իր իսկ կամքից անկախ: Այս ազդեցությունները, եթե ներկայացնենք ամփոփիչ տեսքով կարող են լինել սոցիալ-տնտեսական, զաղափարա-քաղաքական, կրոնա-մշակութային և այլն:

Միանգամից և հանպատրաստ դժվար է պատասխանել այն հարցին, թե վերոհիշյալներից յուրաքանչյուրն օրինակ տոկոսային փոխհարաբերությամբ ինչպիսի չափաբաժին է ունեցել: Հակառակ եզրից լիովին անթույլատրելի է որևէ այլ ժողովրդի մոտ տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունն համարել բեկումնային նաև մեր պատմության լուսաբանման համար: Վ.Ա Դիլոյանի կողմից իրավացիորեն քննադատվում է, որ խորհրդահայ պատմագրության մեջ մեր նոր պատմության սկիզբ է համարվել 1801թ. հունվարի 8-ը, երբ Քարթլի-Կախեթիի թագավորությունը միացվել է Ռուսաստանին (այդ օրը ցար

[85] Դիլոյան Վ.Ա., Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ, էջ 27:

Պավել I-ը ստորագրեց հրամանագիրը՝ միացման վերաբերյալ) [86]: Իհարկե, Վրաստանի համար դա միանշանակ շրջադարձային իրադարձություն էր, բայց Հայաստանը մնում էր Պարսկաստանի և Թուրքիայի լծի ներքո: Վրաստանի միավորումը Ռուսաստանի կազմի մեջ շարունակվեց նաև հետագա տարիներին և միայն 1810թ. այն համարյա ամբողջովին միավորվեց: Վրաստանի հետ միասին Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկվեցին նաև Լոռին, Փամբակը, Շամշադինը և որոշ այլ հայկական տարածքներ, բայց սա անհնարին է համարել որպես Հայաստանի ազատագրում: Կարելի է ասել, որ դրանով դրվեց միայն մեր ազատագրման անկյունաքարը: Մեր ժողովուրդը պետք է սպասեր ևս 27 տարի: Ինչպես իրավացիորեն մատնանշում է Վ.Ա Դիլոյանը այս դեպքում. «.. բոլորովին անտեսվում է 17-րդ դարի վերջերից ծաւալուած հայ ազգային ազատագրական պայքարի աւելի քան հարիւրամյա ժամանակահատուածի սերտ կապը 19-րդ դարի ընթացքում կատարուած իրադարձութիւնների հետ» [87]:

Նույնը պետք է ասել նաև հայոց պատմության պարբերացման հետագա բաժանումների վերաբերյալ: Լիովին անհասկանալի է ՀԺՊ-ի VI հատորի պարբերացման սկզբունքը, քանզի այստեղ նշված է «Հայաստանը 1870-1917 թվականներին» [88]: Անհասկանալի է, թե ինչ նպատակ է հետապնդվել, որ 1870թ. համարվել է սահմանագիծ: Գուցե նկատի են ունեցել Ֆրանս-պրուսական պատերազմը, կամ Փարիզյան կոմունան, Գերմանիայի կամ էլ Իտալիայի միավորումը, որպես հայոց պատմության համար առաջընթացի ուղենիշ? Տեքստում նշվում է՝

[86] Դիլոյան Վ.Ա., Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ, էջ 31:

[87] Դիլոյան Վ.Ա., Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ, էջ 31: Հեղինակն այստեղ խոսում է այդ պայքարի մասին սկսած 1677 թ. և համառոտակի ներկայացնում նաև XVIII դարում տեղի ունեցած ազատագրական ելույթները:

[88] Տես՝ ՀԺՊ, Հ. VI, Խմբ. Աղայան Ծ.Պ. և ուրիշների, Երևան, 1981:

«Հայաստանը արդյունաբերական կապիտալիզմի օրոք», որի, Հայաստանում գոյության մասին խոսելն իրականում դեռ շատ վաղ է... Նույն հատորի Բ բաժնի վերնագիրն է «Հայաստանը իմպերիալիզմի օրոք»: Վերջինիս մասին պատմագիտությունն այժմ ընդհանրապես մոռացել է: Մեզանից յուրաքանչյուրը կարող է ասել, թե ինչ է իմպերիալիզմը հետևելով Վ.Ի. Լենինին, բայց չի կարողանա տալ վերջինիս սեփական բացատրությունը, որովհետև այդպիսի երևույթ չի եղել:

Նախորդ հատորներից էապես չի տարբերվում նաև VII-ը, որը կոչվում է «Հայաստանը սովետական իշխանության հաղթանակի և սոցիալիզմի կառուցման տարիներին (1917-1941թթ.)» [89]: Եթե խոսքը Հայաստանի խորհրդայնացման կամ սովետական կարգեր հաստատելու մասին է, ապա այն եղել է 1920թ. նոյեմբերի 29-ին (վերջնականապես դեկտեմբերի 2-ին), և չկա ոչ մի օրգանական կապ 1917թ. հետ: Փաստորեն, սպորտային լեզվով ասած «խաղից դուրս» վիճակում է գտնվել Հայաստանի Առաջին հանրապետությունը: Հայ ժողովուրդը 1045թ. հետո (եթե նկատի չունենաք Կիլիկիայի Հայկական իշխանության և թագավորության պատմությունը 1080-1375թթ.) վերականգնել է սեփական պետականությունը՝ Առաջին հանրապետությունը, որը մատնվել է մոռացության: Այս ամենի հիմքում ընկած էր խորհրդային գաղափարախոսությունը և մենք բացարձակապես նպատակ չենք հետապնդում մեղադրանքի սյունին գամել այդ հատորների հեղինակներից և ոչ մեկին: Ավելին՝ մեր կարծիքով նրանք կատարել են ահռելի աշխատանք, որի պտուղները տարիների ընթացքում ավելի ու ավելի թանկ են գնահատվում:

Ահա այս հանգամանքներն էին, որ դրդեցին Վ.Ա. Դիլոյանին իր այդ հոդվածում անդրադառնալ նախկինում կատարված ժամանակագրական բաժանումներին: Այդ

[89] Տես՝ ՀԺՊ, Հ. VII, Խմբ. Աղայան Ծ.Պ. և ուրիշների, Երևան, 1967:

բաժանումները լիովին անտեսում էին մեր անցած պատմական երկարատև ու դժվարին ուղին: Պատմությունը, ինչպես տեսանք կապվում էր այնպիսի դեպքերի հետ, որոնք մեզ կամ բերել էին առանց որևէ չափազանցության դժբախտություն, կամ ուղղակի անցել էին մեր կողքով: Փաստորեն մեր պատմությունն զգում էր կանոնակարգման պահանջ և Վ.Ա. Դիլոյանի այս հոդված այդ առումով ունեցավ վճռական նշանակություն: Դրա արգասիքն է ներկայումս հրատարակվող Հայոց պատմության նոր բազմահատորյակը (այն ևս, ինչպես և ակադեմիական առաջին հրատարակությունը կազմված է 8 գրքերից), որի հրատարակումն առայժմշարունակվում է:

Բ. Վ.Ա. Դիլոյանը և հայոց պատմության XVI-XIX դարի հիմնահարցերի նորովի մեկնաբանությունները.

1. XVI դ. հայ ազատագրական շարժումների լուսաբանումը.

2014թ. «Զանգակ» հրատարակչության կողմից տպագրվեց ՀՊ-ն Երկրորդ հատորի՝ Գիրք երկրորդը, որը բոլոր առումներով, նոր խոսք էր հայագիտության մեջ [90]: Այստեղ մի փոքրիկ հատված շարադրվել էր նաև Վ.Ա. Դիլոյանի կողմից, որը վերաբերում է թուրք-իրանական տիրապետությունների դեմ XVI դարում ծավալված հայկական ազատագրական շարժումներին: Ազատագրական շարժումներն ու ելույթներն մեր իրականության մեջ նորություն չէին, քանզի դրանք ինքնաբերաբար, առանց արտաքին միջամտության ազդեցության (սպոնտան) տեղի էին ունեցել նաև նախկինում: Հարց է առաջանում, որակական ի՛նչպիսի փոփոխություններ կրեց ազգային-ազատագրական

[90] ՀՊ, Հ. II, Միջին դարեր (IVդար-XVIIդարի առաջին կես), Գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Երևան, 2014, Բազմահատորյակի խմբ. խորհրդի նախագահ՝ Բարխուդարյան Վ.Բ.

շարժումը այս նոր ժամանակահատվածում: Վերոհիշյալ ինքնաբերաբարից անցում կատարվեց կազմակերպվածին: Երևի 450-451թթ. ապստամբությունից հետո, այլևս երբեք, մեր ժողովրդի կողմից մղված ազատագրական պատերազմներն չէին ունեցել կազմակերպվածության այդ մակարդակը [91]: Այս ապստամբությունը ևս, ունենալով նախապատրաստվածության սպոնտան բնահող՝ հետագայում «գտավ» իր կազմակերպիչներին ու ղեկավարներին: Վերապահումներով նույնը պետք է ասել նաև հետագայում տեղի ունեցած 481-484 և 850-85թթ. ապստամբությունների կապակցությամբ [92]: XVI-XVIIդդ. կապակցությամբ արդեն պետք է արձանագրել, նախապես լրջորեն կազմակերպված լինելու հանգամանքը: Վ.Ա. Դիլոյանը իրավացիորեն այս ձգտումները կապում է նաև Եվրոպայում նույն

[91] Քանի որ խոսք գնաց Ավարայրի մասին, ապա նշենք, որ մինչև վերջերս իրանական պատագրությունն շրջանցում էր այս հարցը: Միայն XXդ. վերջերից միջազգային իրանագիտության շնորհիվ սկսեցին գրել 450-451թթ. իրադարձությունների մասին: Տես՝ Hewsen R.H., Avarayr, Encyclopedia Iranica, 2011, Vol. III, Fasc. 1, P. 32; The Cambridge Ancient History of Iran, Vol. 3, P. 1, The Seleucid, Parthian and Sasanian Periods / Ed. by Yarshater E., Cambr., 2008, P. 146-147 (հեղ. Thomson R.W.).

[92] Մանրամասն տես՝ ՀԺՊ, Հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, խմբ. Երեմյան Ս.Տ. և ուրիշների, Երևան, 1984, էջ 176-192, 198-206, 353-361; Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Հ. 1, Հայ ազատագրական լեգենդը: Լեգենդի սոցիալական միջավայրը, Երևան, 1957; Նույնի՝ Հ. 2, Հայ ազատագրական մտքի դեգերումները 15-17-րդ դարերում: Տրորված ուղիներով: Նոր ճանապարհի վրա, Երևան, 1959: Հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարն իր արտացոլումն է գտել նաև գեղարվեստական ստեղծագործություններում: Այս առումով մենք ցանկանում ենք մատնանշել հատկապես Դ. Դեմիրճյանի (1877-1956թթ.) «Վարդանանք» պատմավեպը: Տես՝ Դեմիրճյան Դ., Վարդանանք, Գիրք 1, Երևան, 1968, Նույնի՝ Գիրք 2, Երևան, 1968 (պատմա-գեղարվեստական այս ստեղծագործության երկու հատորներն միասին կազմում են մոտ 1.000 էջ):

ժամանակաշրջանում տեղի ունեցած գոնե երկու կարևորագույն իրադարձությունների հետ՝ 1566-1609թթ. հոլանդական (Նիդեռլանդների) բուրժուական հեղափոխության, որը նաև ազատագրական պայքար էր իսպանական տիրապետության դեմ: Երկրորդ այսպիսի իրադարձություն նա համարում է Անգլիական 1640-1660-ական թթ. բուրժուական հեղափոխությունը: Նա իրավացիորեն բոլոր այսպիսի ազատագրական շարժումները, որոնցով հեղեղված էր գոնե այն ժամանակների քաղաքակիրթ օյկումենայի մեծ մասը կապում է. «Պատմության թատերաբեմում հայտնված և որպես համազգային դասակարգ կազմավորվող ու զարգացող բուրժուազիային, որը առաջին հերթին առաջադրում էր համազգային խնդիրներ և ձգտում համազգային շուկայի ստեղծմանը, որը կարող էր լավագույնս ապահովել նրա առաջընթացը» [93]: Սա մի երևույթ էր, որը Լեոյի մոտ ստացել է խոջայական կապիտալ անվանումը (խոջան պարս. բառ է, և նշանակում է տեր, հարուստ և այլն): Հայկական այս կապիտալը կամ որ միևնույնն է նրա ներկայացուցիչները գտնվում էին Մայր հայրենիքից դուրս՝ հայկական հեռավոր գաղթօջախներում:

Լեոն գրում է. «XVI դարեր, ուրեմն ճիշտ այն ժամանակից, յերբ Արևմտյան Յեվրոպան մտնում էր առևտրական կապիտալի իշխանության տակ, Արևելյան Հայաստանում իր վերելքի դարն էր սկսում հին հայ առևտրական կապիտալի այն ճյուղավորումը, վոր ամփոփված էր Արաքս գետի ձորում, նրա քարավաններից դեպի արևմուտք և վորին մենք տալիս ենք Խոջայական Կապիտալ անունը:

Յեթե Արևմտյան Յեվրոպայում առևտրական կապիտալի տիրապետությունը բերում էր իր հետ մի շարք խոշոր քաղաքական-հասարակական շարժումներ (նիդերլանդական, անգլիական, ֆրանսիական հեղափոխություններ, գերմանական ռեֆորմացիա և այլն), հայերի մեջ էլ, չնայած վոր սրանք ապրում

[93] ՀՊ, Հ. II, Միջին դարեր, էջ 631:

եին բոլորովին տարբեր քաղաքական մշակույթային միջավայրում, խոջայական կապիտալը ծնող, դաստիարակող, ղեկավար դարձավ խոշոր և յերկարատև մի յերևույթի, վոր նույնպես ազատագրական հեղափոխություն էր, բայց արդեն Առաջավոր Ասիայի հողի վրա, ասիական մեծ բռնապետություններից սեփական ազգային անկախություն խլելու համար» [94]: Քանի որ հայկական խոջայական կապիտալ կար ինչպես Եվրոպայի, այնպես էր Ասիայի մի շարք երկրներում, չնայած որ վերջինումս դեռ վաղ էր խոսել կապիտալիզմի մասին, այսուհանդերձ բոլորին միավորում էր Հայաստանը ազատագրված տեսնելու ցանկությունը:

Ասիական երկրների հայ բուրժուազիան գաղափարական առումով գտնվում էր գաղութատեր-բուրժուաների ազդեցության ներքո: Ըստ Վ.Ա. Դիլոյանի բուն հայկական միջավայրում առաջիններից մեկը, որ կարողացավ ճշտորեն գնահատել ստեղծված նոր իրադրությունն կաթողիկոս Ստեփանոս Ե Սալմաստեցին էր (կոչվում է նաև Կոստանդնուպոլսեցի, ծննդյան թ. անհայտ – 1567, Ամենայն Հայոց կաթողիկոս 1545-1567թթ.): Նրա կարծիքով XVI-XVIդդ. տեղի ունեցող թուրք-իրանական անվերջանալի (պերմանենտ) պատերազմները ստեղծում էին նպաստավոր իրավիճակ ազատագրման համար: Բավական է մեր կողմից ներկայացնել այդ կռիվների ժամանակագրական աղյուսակը կամ ցանկը՝ 1) 1514-1555թթ., 2) 1578-1590թթ., 3) 1603-1612թթ., 4) 1616-1618թթ., 5) 1623-1639թթ: Եթե սրան հավելենք, որ պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմ էին հայկական տարածքները, ապա ամեն ինչ կդառնա լիովին պարզ ու հասկանալի: Կատարելով համապատասխան վերլուծություններ Վ.Ա. Դիլոյանը գալիս է այն եզրահանգման, որ. «Այն տեսակետը, թե իբր Ստեփանոս Ե Սալմաստեցու պատվիրակության նպատակը Հռոմի պապի և եվրոպական

[94] Լեո, Խոջայական կապիտալը յեվ նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934, էջ 5:

թագավորությունների օգնությամբ ոչ թե ամբողջ, այլ միայն Արևելյան Հայաստանի ազատագրումն է եղել, հիմնավոր չէ: Խնդիրն այն է, որ այդ ժամանակ թուրք-իրանական շարունակվող պատերազմի պարագայում Հայաստանի տարածքային պատկանելիության հարցը դեռևս վերջնականապես լուծված չէր» [95]:

Թեպետ պատվիրակության գործունեությունը ոչինչ չտվեց Հայաստանի ազատագրմանը, բայց առավել կարևոր էին ստացված «դասերը»: Միանգամայն հասկանալի է, որ առաջադրված նպատակներին նրանք մեկ օրում կամ միանգամից չէին կարողանալու հասնել: Ազատագրման ճանապարհին, որը տևեց 1547թ. մինչև 1828թ., կամ համարյա երեք դար պետք էր դեռ շատ «դասեր» քաղել, որոնել նոր ուղիներ և ձևեր: Կարևորն այն էր, որ այս ճանապարհը դրվեց «օրինական» ռելսերի կամ մայրուղու վրա: Ճիշտ է այդ ժամանակ չկար հայկական պետականություն, ուստի նաև բացակայում էր քաղաքական իշխանությունը, բայց կար ամենակարևորը՝ եկեղեցական իշխանությունը, որը և դարձավ ուղղություն ցույց տվող ուժը:

Եկեղեցին իր այս ցանկությունները իրականացնում էր հայ հասարակության երևելի և նվիրյալ անհատների հետ համագործակցելով: Այսպիսի մի անհատականություն էր, օրինակ Ստեփանոս Ե Սալմաստեցու կրտսեր ժամանակակից՝ Աբգար դպիր Թոխաթեցին (երբեմն նշվում է նաև Աբգար Եվդոկացի, Աբգար Դպիր, Աբգար Սաֆար Թոխատցի (մոտ 1520-մոտ 1572թթ.), որը ոչ միայն քաղաքական գործիչ էր, այլև տպագրիչ ու հոգևորական [96]: Վ.Ա. Դիլոյանը իրավացիորեն

[95] ՀՊ, Հ. II, Միջին դարեր, էջ 633:

[96] Լեո, Հայկական տպագրություն, Հ. Ա, Թիֆլիս, 1904; Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958; Անասյան Հ., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., Հտ. Ա, Երևան, 1959, էջ 18-25; Դեվրիկյան Վ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, Մասն Ա, Վենետիկից Հռոմ (16-րդ դար), Երևան, 2012:

նկատում է, որ Թոխաթեցու գործունեությամբ. «..Հայաստանի ազատագրությանն առնչվող բանակցությունները կարծես թե դրվում էին իրական հիմքերի վրա» [97]: Սակայն Հռոմի Պիոս (լատ. Pius – բարեպաշտ բառից, այդ պաշտոնում եղել է 1559-1565թթ.) IV պապի հետ բանակցությունները՝ չտվեցին և ոչ մի դրական արդյունք: Այս, ինչպես և նախորդ (Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակների), այնպես էլ հաջորդ բոլոր պապերին առաջին հերթին հետաքրքրում էր Հայոց առաքելական եկեղեցու կաթոլիկանացումը: Աբգար Դպիր գործը շարունակեց նրա որդին՝ Սուլթանշահը: Այս բանակցությունների նախնական ընթացքը կարելի է անվանել բացասման բացասումների ճանապարհ: Բանակցելով տարբեր երկրների, բազմապիսի իրավասությունների շրջանակներ ունեցող գործիչների հետ Հայաստանի ազատագրմամբ մտահոգված վերոհիշյալ անհատներն գոնե իրենց համար պարզում էին, թե այլևս ու՛մ ապագայում չպետք է դիմել: Սա խոսում է այն մասին, որ մեր բանագնաց-դիվանագետները լինելով քաղաքական և կրոնա-մշակութային նշանավոր գործիչներ՝ դիվանագիտության բնագավառում դեռևս չէին հասել կատարելության:

2. XVIIդ. երկրորդ կեսի – XVIIIդ. սկզբների հայ ազատագրական պայքարի լուսաբանումը.

Վերոհիշյալ հարցերի վերաբերյալ Վ.Ա. Դիլոյանի շարադրանքն հանդիսանում է նախորդ պարագրաֆի օրգանական շարունակությունը: Ինչպես XVI դ. էր, այնպես էլ այժմ, այդ շարժման և պայքարի բուրգի բոլոր մասերում դեռևս կանգնած էին կրոնա-հոգևորական նշանավոր գործիչները, որոնք մեծ եռանդով շարունակում էին նախորդների աշխատանքը:

[97] ՀՊ, Հ. II, Միջին դարեր, էջ 633; տես նաև՝ ՀԺՊ, Հ. IV, էջ 92-93; Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Հ. 2, էջ 43 և հաջ:

Չնայած նախկինում կրած բոլոր անհաջողություններին, դա անկարելի է սիզիփոսյան աշխատանք դիտարկելը, քանզի այս գործիչները, գոնե իրենց համար, պարզում էին դիվանագիտության բազմաթիվ նրբությունները և գաղտնիքները: Նրանք, առանց որևէ կասկածանքի իրենց ձեռքբերած գիտելիքներն հաղորդում էին հաջորդներին, որոնք իրենց հերթին որոնում էին նորանոր ճանապարհներ: Այսպիսի մի գործիչ էր նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցին (1655-1680թթ.) [98]:

1639թ. Կասրե-Շիրինի պայմանագրի (հայտնի է նաև Գասր-ե Շիրին անվամբ, նշվում է նաև Զոխաբի, Զունաբի պայմանագիր անվամբ) ստորագրմամբ վերջապես ավարտվեցին թուրք-իրանական երկարատև պատերազմները: Հայաստանը երկատվեց այս երկուսի միջև, որից հետո, չնայած ռազմական գործողությունների բացակայությանը, հայության իրավիճակն գնալով գլորվում էր անդունդը: Մինչև 1677թ. ժողովը Հակոբ Ջուղայեցին Հռոմ էր ուղարկել վարդապետ Առաքել Բոպիկ (Բոկոտն) Շոռոթեցուն: Նա ուղերձով դիմել էր նաև Ռուսաստանի ցար Ալեքսեյ Միխայիլովիչին (1645-1676թթ.), սկսել էր տարածել հայկական գրատպությունն Արևմտյան Եվրոպայում: Այս տեսանկյունից առանձնապես հիշատակության է արժանի Ոսկան Երևանցու անունն ու կատարած աներևակայելի աշխատանքը (հայտնի է նաև Ոսկան Ջուղայեցի, Ղլիճենց, Ոսկան

[98] Հովհաննիսյան Ա.Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Հ. 2; Թերզյան Մ., Յակոբ Դ Ջուղայեցի (1655-1680), Պեյրութ, 1956; Քիւրտեան Յ., Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցի, Բեյրութ, Անթիլիաս, 1965; Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Երևան, 2003; Միրզոյան Հ., Արդյո՞ք եղել են հակահակոբյան ժողովներ (հնատիպ սկզբնաղբյուրների քննական վերլուծություն), ԲԵՀ, Հայագիտություն, 2013, 138, 1, էջ 14-15; Casimiro Roszko T.O.P., Il Katholikos Giacomo IV Patriarca degli Armeni e i Medici nel XVII secolo, Tre lettere armene del Katholicos Giacomo IV, «Archivio Storico Italiano», 1967, (disp. I), Firenze, anno CXXV, P. 365–372.

վարդապետ անուններով, 1614-1674թթ., վախճանվել է Մարսելում) [99]: Հայ գործիչները տարբեր խնդիրներով առնչվել են Եվրոպայի այն ժամանակների մի շարք նշանավոր պետական-քաղաքական գործիչների հետ, որոնցից պետք է հիշատակել՝ Ավստրիայի Լեոպոլդ I (գերմ. Leopold) կայսրի և Հռոմի Ալեքսանդր VII պապի անունները: Առաջինն հանդիսանալով այն ժամանակի Եվրոպայի նշանավոր արքաներից մեկը տառապում էր իշխանամոլությամբ: Նա 1655թ. Հունգարիայի, 1656թ. Չեխիայի, իսկ 1658թ. Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության կայսրն էր միաժամանակ: Մի կողմից նա անզիջում պայքար էր մղում Լյուդովիկոս XIV-ի (գրվում է նաև Լուի, ֆրանս. Louis XIV Le Roi Soleil, քանզի մականունն էր Արև, 1643-1715թթ.) դեմ՝ հանուն եվրոպական գերիշխանության, իսկ մյուս կողմից զբաղված էր իր պետությունն, իսկ ավելի ստույգ Եվրոպան թուրքական համաճարակից փրկելով: 1683թ. սեպտեմբերի 12-ին նա կարողացավ վերջիններիս ջախջախել Վիեննայի ճակատամարտում [100]: Եթե սրան հավելենք նաև, որ Ավստրիան, ինչպես և ողջ Եվրոպան միայն վերջերս էր ազատագրվել համաեվրոպական առաջին արհավիրքից՝ Երեսնամյա պատերազմից (1618-1648թթ.), ապա պատկերն առավել ևս պարզ և հասկանալի է դառնում: Այստեղ պապերի և պապականության

[99] Հ. Անանեան Պ., Ոսկան Վրդ.ի նամականին, Բազմավէպ, 1966, թիւ 11-12, էջ 293-308, 1967, թիւ 6-8, էջ 130-134; Ոսկանյան Ն.Ա., Կորկոտյան Ք.Ա., Սավալյան Ա.Մ., Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան, 1988; Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, Հ. 1, Հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում, Երևան, 2012; Ղուկասյան Հ., Ոսկան Երևանցի, Պատմավեպ: Երևան, 1988:

[100] Финкель К., История Османской империи. Видение Османа, М., 2010, С. 292-296; Подхородецкий Л., Вена 1683, М., 2002, С. 67-68; Schumann J., Die andere Sonne. Kaiserbild und Medienstrategien im Zeitalter Leopolds I, Berlin, 2003 (Colloquia Augustana, 17). Տես նաև՝ Борисов Ю.В., Дипломатия Людовика XIV (Из истории дипломатии), М., 1991.

մասին խոսելն դառնում է ընդհանրապես անտեղի, քանզի նրանց միակ ցանկությունն էր Հայաստանում, իսկ առավել ևս ամենուր կաթոլիկություն տարածելը [101]:

Դիվանագիտական այս ելույթներին համատեղ, ինչպես նշում է Վ.Ա. Դիլոյանը, Հակոբ Ջուղայեցին դիմում է նաև ռուսաց կայսրին, գրելով. «Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա պարսից պաշտոնյաների կողմից դրվում են ահա օտարոտի հարկեր, և մեզ, որ չենք կարողանում մեր չքավորության և աղքատության պատճառով հատուցանել այդ հարկերը, քշում են դեպի բանտ, չարչարում են, տանջում և վերջապես, որ մահմեդականների հետապնդած նպատակների հետինն ու գլխավորն է, հարկադրում են ընդունել իրենց դավանանքը: Եթե այդչափ հալածանքները մեզ զրկեին միայն հարստությունից ու աշխարհային ստացվածքներից, չարիքը փոքր կլիներ, և ես լռության կտայի այն, բայց երբ օր օրի վրա մեր ի Քրիստոս սնվող զավակներին տեսնում եմ հեռացած (մայրական) ստինքներից, խաբված դեռահասներին (հարազատ)՝ եկեղեցուց հեռանալիս, իսկ չափահասներին ու խելահասներին՝ բռնությամբ մղված դեպի փրկումին դեմընթաց դավանանքը, այդ մեծ կորուստը տոկալու անկարող...» [102]:

Շարունակելով նախորդների նման մնալ հավատարիմ եվրոպամետ քաղաքականությանը Հակոբ Դ Ջուղայեցին դիմեց նաև նախկինում փորձված և լիովին նոր մեթոդների ևս: Փորձված էր այն, որ XII-XIII դդ. հայ-վրացական ուժերն համատեղ պայքար էին մղել սելջուկ-թուրքական տիրապետության դեմ, որը պսակվել էր հիմնականում հաջողությամբ: Այժմ ևս կարելի էր դիմել նույն քայլին, բայց այս դեպքում ուժերի

[101] Պապերի վարած քաղաքականության մասին տես՝ Տաքսիլ Լ., Զվարճալի Ավետարան, կամ Հիսուսի կյանքը, Երևան, 1967 // Թարգ. ռուս. Դավթյան Հ.Մ:

[102] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, 2010:

հարաբերակցությունը չափազանց անհավասար էր: Սա հասկանում էր նաև Հակոբ Դ Ջուղայեցու նման հեռատես գործիչը: Քարթլիի Գեորգի XI թագավորի (1675-1709թթ.) հետ բանակցելուց զատ նրա դեսպանորդները պետք է դիմեին նաև պապին, Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմ II-ին (գերմ.՝ Johann Wilhelm von der Pfalz, 1690-1716թթ., նրա իշխանությանն կենտրոնն էր Դյուսելդորֆ քաղաքը): Հակոբ Ջուղայեցու կազմած պատվիրակության կազմում են եղել վեց հոգի, բայց ստույգ հայտնի է Առաքել վրդ. Շոռոթեցու և Սիսիանի՝ մելիք Իսրայելի անունները: Վերջինս իր հետ վերցրել էր նաև որդուն՝ Իսրայել Օրուն, որը և հետագայում, առանց չափազանցության, դառնալու էր այս դիվանագիտական որոնումների ու դեգերումների ամենակարևոր դերակատարներից մեկը: Վրացիների հետ գալիս են այն եզրահանգման, որ հայերը շարունակեն «բախել» եվրոպական դռները, իսկ վրացիները՝ դիմեն Ռուսաստանին: Սա մտածված, բայց խորամանկ քայլ էր հօգուտ հայերի: Հայաստանի և Ռուսաստանի միջև երբեք չի եղել ընդհանուր սահման: Մինչև չազատագրվեր և Ռուսաստանին չմիացվեր Վրաստանը, բնական է, որ Հայաստանի մասին որևէ խոսք անգամ չէր կարող լինել:

Այս պատվիրակության առանձնահատկություններից էր նաև այն, որ ցանկանում էին որոնել, գտնել ազատագրման նոր ուղիներ: Այսպիսի մի քայլ հանդիսացավ նաև բանակցությունների կազմակերպումը Լեհաստանի թագավոր Յան III Սոբեսկիի հետ (լեհ.՝ Jan III Sobieski, թագավորել է 1676-1696թթ.):

Այդ ժամանակ ձևավորված Լեհ-Լիտվական պետությունը, որն առավել հայտնի է Ռեչ Պոսպոլիտա անվամբ (1569-1795թթ., լեհ. ճիշտ անվանումն է Rzeczpospolita) Եվրոպայում հանդիսանում էր կարևորագույն «դերակատարներից» մեկը և կարող էր ունենալ բավականին ծանրակշիռ ազդեցություն: Այս հարցը ևս բավականին հանգամանալից մեկնաբանվել է

աշխատության այդ գլխի հեղինակ Վ.Ա. Դիլոյանի կողմից [103]: Հակոբ Դ Ջուղայեցու պատվիրակության ներկայացուցիչները միաժամանակ եղել են նաև Արևմտյան Հայաստանի նշանավոր քաղաքներից Տրապիզոնում, Սեբաստիայում, Դիարբեքիրում, Կարինում և այլուր՝ ցանկանալով կազմակերպել հանգանակություն: Այստեղ հնարավոր է և, ամենայն հավանականությամբ, պետք է դնել բազմակետեր: Այս բնակավայրերի, իսկ ավելի ստույգ, արևմտահայության սոցիալական վիճակն այնքան նողկալի էր, որ հազիվ թե նրանք կարողանային ֆինանսապես աջակցել վերջիններիս: Թվում է, որ նրանք հավաքել են նյութեր և տեղեկություններ այդ վայրերի հայերի գոյության մասին: Ճիշտ է Արևելյան Եվրոպան տեսել էր թուրքական տիրապետությունը, բայց հայ բանագնացները իրավացիորեն ենթադրում էին, որ միայն խոսքերով եվրոպացիներին համոզելն կարող էր անբավարար լինել:

Ինչպես առանց որևէ կանխավ նախապատրաստվածության ստեղծվել էր Հակոբ Դ Ջուղայեցու այս պատվիրակությունը, այնպես էլ այն լուծարվեց, երբ 1680թ. օգոստոսի 1-ին վախճանվեց նրա հիմնադիրը: Այստեղ կարելի է կատարել վերապահում, որ պատվիրակության ստեղծման նախագիծն Հակոբ Ջուղայեցու մտքում կարող էր արդեն վաղուց հղացած լինել, սակայն այս կապակցությամբ՝ վկայություններ դեռևս չկան: Պատվիրակության անդամները դադարեցրին իրենց գործունեությունը, բայց ոչ Սիսիանից մեկնած մելիք Իսրայելի

[103] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 17 (Տես նաև այդ էջի 9-րդ հղումը); Иванова Л.И., Ян Собеский – легенда и реальность, Вестник СПбУ., 2018, Т. 63, Вып. № 4, С. 1177-1202; Varvounis M., Jan Sobieski: The King Who Saved Europe, Bloomington (Indiana), 2012; Stone D., The Polish-Lithuanian State 1386-1795, Washington, 2001, P. 236 և հաջ; The Cambridge History of Poland / Halecki O., Reddaway W.F., Pen-son J.H., Vol. 1, Cambridge, 1950, P. 542:

որդին՝ Իսրայել Օրին (1658/59-1711թթ.), որի մասին նշվեց արդեն վերևում [104]: Հակոբ Դ Ջուղայեցու մոտ բացակայում էր փորձի պակասը, այն փորձի, որ ունեին իր ավագ, բայց եվրոպացի ժամանակակիցները: Մեր խոսքը Ֆրանսիայի կարդինալ Ռիշելեյի (ֆրանս.՝ duc de Richelieu 1624-1642թթ.) և Մազարինիի (ֆրանս.՝ Jules Mazarin, 1643-1651, 1653-1661թթ.) մասին է:

Այսպիսով, Հակոբ Ջուղայեցին «ծնեց» Իսրայել Օրուն, դարձավ ազատագրման պայքարի նրա «կնքահայրը»: Վ.Ա. Դիլոյանը հատկապես մեծ ուշադրություն է հատկացրել Օրու գործունեության վերլուծությանը՝ դրան նվիրելով երկու ամբողջական բաժիններ: Հեղինակի կողմից ներկայացված է առանձին-առանձին ինչպես նրա կողմից ծավալած դիվանագիտական աշխատանքները Եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում: Օրուց ևս, ինչպես և նախորդներից պահանջվեց որոշակի ժամանակահատված ստեղծված միջազգային իրադրությունը ճիշտ գնահատելու տեսանկյունից, բայց Օրին առաջինն էր, որ այս ամենը կանգնեցրեց «ոտքերի» վրա: Այստեղ նպատակ չկա քարկոծել նախորդներից որևէ մեկին, քանզի նրանք անփորձ էին և ինչպես լիցքավորման համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ, այնպես էլ այս խնդրում էր:

Օրու գործունեությունը ժամանակագրորեն համընկնում էր նաև ցարական Ռուսաստանի ծավալապաշտության հետ դեպի Սև ու Կասպից ծովերի միջև գտնված տարածքներում հաստատվելուն: Ընձեռած հնարավորության սահմաններում

[104] Асадов Ю.А., 1000 офицерских имен в армянской истории, Историко-биографические очерки, Пятигорск, 2004; Востриков С.В., Карабахский кризис и политика России на Кавказе // Общественные науки и современность, 1999, № 3 С. 73-86. Օրու կերպարն արտացոլումն է գտել նաև գեղարվեստական գրականության մեջ: Այստեղ հիշատակության է արժանի Մ. Արազու նշանավոր վեպը: Տես՝ Արազի Մ., Իսրայել Օրի (պատմական վեպ), Երևան, 1964 (Նույնի ռուս. թարգ. Арази, Исраэл Ори, М., 1959).

վերլուծված է Օրու «Պֆալցյան ծրագիրը», որը կազմված էր 36 կետերից: Այս ծրագրի առկայությունն արդեն խոսում է շատ բաների մասին: Նախկին բոլոր գործիչների մոտ սա բացակայում էր ընդհանրապես: Լիովին այլ խնդիր է, թե որքանով էր այն իրականանալի, քանզի, ըստ Օրու, հարվածային ուժը կազմելու էր «Եռյակ միության» զորքերը (Պֆալցը, Տոսկանայի դքսությունը և Պապական պետությունը): Օրու գործունեության մեջ կարևոր էր այն պահը, որ նա մեծ տեղ էր հատկացնում հայկական ռազմական ուժերի առկայությանն՝ ազատագրման պայքարի այս քառուղիներում: Քննարկելով Օրու Պֆալցյան ծրագիրը Վ.Ա. Դիլոյանը իրավացիորեն եզրակացնում է. «Նախագծում երկրորդ ելակետային սկզբունքն այն էր (հեղինակը առաջին սկզբունք համարում է «Եռյակ միության» կամ «Դաշնակցության» հիմնումը, որտեղ մեծ էր նաև հայ զինվորական ուժի դերը), որ նա նախապես դնում էր Արևելյան Հայաստանի ազատագրության հարցը՝ միանգամայն իրավացիորեն նկատի ունենալով մի կողմից, այն իրողությունը, որ Պարսկաստանը մեծապես թուլացել և անկում էր ապրում, մյուս կողմից՝ այն, որ դարեր շարունակ Արևելյան Հայաստանը եղել էր հայկական պետականության բնօրրանը, և, որ այնտեղ էր գտնվում ամբողջ հայ ժողովրդին համահավաքող Հայոց եկեղեցու աշխարհաճանաչ կենտրոնը՝ Մայր աթոռ Ս. Էջմիածինը» [105]:

Օրու ծրագրում ռոմանտիզմ պետք է համարել այն պահը, որ դաշնակից ուժերը Հայաստան էին հասնելու՝ անցնելով Լեհաստանի և Ռուսաստանի տարածքներով, որը այդ երկրների համար անհանդուրժելի էր բոլոր դեպքերում: Սա ևս մի փորձություն էր: Եթե նախորդների մոտ լիներ այսպիսի առաջարկ, ապա Օրին ավելի շուտ հասած կլիներ իրեն ցանկալի եզրագծին: Միանգամայն իրավացի է Վ.Ա. Դիլոյանը նշելով. «Իսրայել Օրին իր «Պֆալցյան ծրագրով» արդեն հանդես էր գալիս

[105] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 20-21:

քաղաքական մի նախագծով, որը մշակվել էր ինչպես միջազգային, այնպես էլ բուն Արևելյան Հայաստանի և պարսկական տերության ներքին քաղաքական և հասարակական իրադրության համակողմանի իմացության և վերլուծության հիմքի վրա: Հատկանշական է, որ 1720-1730-ական թթ. ռազմաքաղաքական իրադարձություններն ապացուցեցին ոչ միայն նրա իրատեսությունն ու իրադրության քաջիմացությունը, այլև նրա նախանշած ուղիով ընթացան հետագայի հայ ազգային-ազատագրական շարժման շատ գործիչներ» [106]:

Օրու այս ծրագիրը, ինչպես հայտնի է բոլորին, հօդս ցնդեց, բայց նա առաջինն էր, որ չբավարարվեց և, Մինաս վարդապետ Տիգրանյանի (կոչվել է նաև Խարբերդցի, 1658-1740թթ.) հետ եկան Մոսկվա: Այստեղ պետք է ըստ արժանվույն գնահատել նաև Հովհան-Վիլհելմի կեցվածքը: Հրաժարվելով օգնել նա կարող էր ոչ մի կերպ չմիջամտել, բայց վերջինս հասկանալով, թե ինչպիսին է կացությունը Եվրոպայում՝ միանշանակ խորհուրդ տվեց դիմելու մոսկովյան թագավորությանը: Այսպիսով, ազատագրման քառուղիներում անցում էր կատարվում ռոմանտիզմից ռեալիզմին: Վ.Ա. Դիլոյանն այստեղ այդ նոր մերձեցման նախնական գրավական է դիտարկում նաև 1677թ. Նոր Ջուղայի հայկական վաճառականական ընկերության հետ առևտրական պայմանագրի ստորագրումը [107]: Այստեղ

[106] Նույն տեղում, էջ 21:

[107] Մինասեան Լ.Գ., Նոր Ջուղան աւելի քան մէկ եւ քառորդ դարում, Ս. Էջմիածին, 1999; Դիւան Ս. Ամենափրկիչ վանքի 1606-1960, Կազմ. Մինասեան Լ.Գ., Նոր Ջուղա, 1983; Թաջիրյան Է., Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եւրոպական աղբյուրներում, Մաս I, Երեւան, 2012; Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, Երեւան, 2007: Տես նաև՝ Ա. Դավրիժեցի, Պատմություն, Գլ. Ե, Երևան, 1988: Այս գլխի վերնագիրն արդեն հուշում է ամեն ինչ՝ կոչվելով. «Ամենափարթամ գյուղաքաղաք Ջուղայից դեպի պարսից երկիրը տարագրելու մասին»:

անհրաժեշտ է կատարել մեկ ընդմիջարկում: Չի բացառվում, որ այդ ժամանակ Ռուսաստանում իշխող Ալեքսեյ Միխայիլովիչ արքայի (1645-1676թթ.) և Նոր Ջուղայի հայերի միջև խոսակցություններ են եղել Մայր հայրենիքի ազատագրման խնդրի կապակցությամբ:

Մի շարք պաշտոնական հանդիպումներից հետո (կայսր Պետրոս I (Պյոտր 1682-1725թթ.) կանցլեր Ֆ. Գոլովին և այլոք, Օրին կազմում է իր նոր ծրագիրը, որը, բնականաբար, ստանում է «Մոսկովյան ծրագիր» անվանումը: Ինչն է առավել ուշագրավ, եթե մենք թռուցիկ հայացք ենք գցում նրա կազմած այս երկու ծրագիր-նախագծերի վրա: Օրին Հայաստանը և հայերին չէր դիտարկում որպես դիտորդների, այսինքն՝ նրանք չպետք է ունենային «կրավորական» կեցվածք: Երկու դեպքերում էլ հայերը, որպես ամենաշահագրգիռ կողմ պետք է մասնակցեին ռազմական գործողություններին: «Մոսկովյան» կամ «Ռուսաստանյան ծրագրում» նշվում էր, որ նրանց կողքին կռվելու է նաև հայկական 116 հազ. բանակը: Այս թիվը կարող է թվալ անհամոզեցուցիչ, ուռճացված, գործող իրականությանը չհամապատասխանող և այլն, քանզի պետք է գոնե հաշվի առնել նրանց զինելու հանգամանքը: Սա տարրական մի փաստարկ է, որին կարելի է հավելել բազմապիսի այլ փաստարկներ ևս:

Այն հանգամանքը, որ հայերը կռվելու էին և ոչ մեկի մոտ տարակուսանք չէր կարող առաջացնել: Նրանք դա ապացուցել էին շատ անգամներ իրենց ողջ երկարատև պատմության ընթացքում: Ամփոփելով այս ծրագիր դրույթները Վ.Ա. Դիլոյանը պատմա-գեղարվեստորեն, ինչպես բնորոշ էր իրեն, և իր շարադրանքի ոճին՝ գրում է. «Իսրայել Օրու «Մոսկովյան ծրագիրը» որոշակիորեն ընդգծված քաղաքական նոր ուղեծիր էր հայ ազգային-ազատագրական մտքի ոլորտում, որը հետագայում պետք է դառնար նրա հրահրած շարժման ուղենիշ աստղը» [108]:

[108] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 23:

Հեղինակը բարձր է գնահատում Օրու գիտելիքների այն «պաշարը», որ նա ուներ կապված Հայաստանի պատմական անցյալի հետ: Դա երևում է թեկուզ, երբ նա անդրադառնում է վերջինիս կողմից կազմված և ռուսական իշխանություններին ներկայացրած Հայաստանի պատմական քարտեզին անդրադառնալիս: Այստեղ մեր հայրենիքի սահմանները նա ներկայացրել էր Սև, Կասպից և Միջերկրական ծովերի միջև ընդգրկված տարածքներում: Փաստորեն, Օրին Հայաստանի պատմական անցյալի անբաժանելի մասերից էր համարում նաև Կիլիկիայի հայկական իշխանության և թագավորության դարաշրջանները: Շահագրգռելու համար նա ներկայացնում էր, որ Արևմտյան Հայաստանում բնակչության հիմնական զանգվածն հայեր և հույներ էին, որը կարող էր ունենալ կարևոր նշանակություն ազատագրման համար մղված պատերազմի ընթացքում: Սակայն պատմությունից քաջ հայտնի է, որ Պյոտր I-ը պատերազմ էր սկսել Շվեդիայի դեմ՝ Ռուսաստանի համար Բալթիկ ծով ելք ունենալու համար: Այս անգամ ևս մեզ բախտը «չժպտաց», քանզի պատերազմը ձգձգվեց 21 տարի (1700-1721թթ.) [109]: Հետաքրքիր է այն փաստը, որ Վ.Ա. Դիլոյանը Պարսկաստան իրականացրած դեսպանագնացության նախաձեռնող և

[109] Պավլենկո Ն.Ի., Պետրոս Առաջին, Երևան, 1984 // Ռուս. թարգ. Խոցանյան Մ; Секретные письма серезных людей о замечательных предметах государственного и ученого мира, состоящие из двенадцати различных почт, на 1701 / Перевод и коммент. Витберга Ф. // Русская старина, 1893, Т. 79, № 8, էջ 268-286 (Под загл. Мнения иностранцев-современников о великой Северной войне; Северная война 1700-1721гг., Сб. документов, Т. 1 (1700-1709), М., 2009; История Северной войны, 1700-1721гг., М., 1987; Костомаров Н.И., Русская история в жизнеописаниях ее главнейших деятелей, Кн. III, Вып. Шестой и седьмой, М., 1992, էջ 537-786; Ростунов И.И., Авдеев В.А., Осипова М.Н., Соколов Ю.Ф., История Северной войны 1700-1721гг., М., 1987; Тарле Е.В., Русский флот и внешняя политика Петра I, СПб., 1994; Նույնի՝ Северная война и шведское нашествие на Россию, Сочинения, М., 1959.

«հեղինակ» է համարում հենց Օրուն: Նա հասկանում էր, որ իր նպատակներն դեռևս հեռու էին իրականացումից և հայերի փրկության առաջին քայլ էր համարում գոնե տիրող անօրինակությունների թեթևացումը, որ կար քրիստոնյաների և հատկապես հայերի հանդեպ մահմեդական Պարսկաստանում, իսկ առանձնապես Թուրքիայում: Միաժամանակ արևմուտքին հայկական հարցի լուծման հարցում շահագրգռելու համար նա աշխատում էր հարթել կրոնա-դավանական տարակարծությունները: Դրան էին վերաբերում Օրու նամակներն՝ ուղղված Կղեմես XI պապին (լատ. Կլիմենտ (Clemens), պաշտոնավարել է 1700-1721թթ.):

Օրու գործունեությունն, որին իրավացիորեն մեծ տեղ է հատկացնում Վ.Ա. Դիլոյանը իր շարադրանքում, իսկապես խառնում էր բոլոր խաղաթղթերը և, այս պատճառով էլ առայժմ անհայտ են մնում նրա «պատահական» վախճանի հանգամանքները [110]:

Օրու ծավալած ազատագրական շարժման առաջին արձագանքն հանդիսացավ զինված պայքարի միաժամանակյա կազմակերպումն Արցախում և Սյունիքում: Սկսվեց հայ ազգային-ազատագրական պայքարի անընդհատական (պերմանենտ) էտապը, որը տևեց մինչև արևելահայաստանի՝Ռուսաստանին միացելն ընկած ժամանակաշրջանը:

Դրա առաջին արձագանքներն տեղի ունեցան, ինչպես արձանագրվեց վերևում Արցախում և Սյունիքում: Հեղինակի կողմից առավել մեծ ուշադրություն է հատկացված 1720-1730-ական թթ. Արցախում տեղի ունեցած ազատագրական պայքարի նկարագրությանն ու վերլուծությանը: Սա առաջին հայացքից կարելի է շաղկապել մերօրյա Արցախում տեղի ունեցած գործընթացների հետ, որոնց սկիզբ հանդիսացավ 1988թ.

[110] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 23-27:

փետրվարյան իրադարձությունները: Սակայն արմատներն առավել քան խորն են և այսօր ՀՀ-ի յուրաքանչյուր քաղաքացի ավելի շատ բան գիտի Արցախի անցած պատմական ուղու վերաբերյալ, քան նախկինի 100 հազարավորները՝ միասին վերցրած: Քանի որ ԽՍՀՄ տարիներին Արցախի թեման առնվազն «յոթ փականքների» տակ էր, համարվում էր արգելված, ապա այս պատճառով էլ նրա մասին գրելն ու խոսելը անցանկալի էր հայ և ադրբեջանական ժողովուրդների «եղբայրական» կապին ու բարեկամությանը չվնասելու համար: Վ.Ա. Դիլոյանը ներկայացնում է ոչ միայն բուն ազատագրական պայքարը, այլև դրան նախորդած XVIIIդ. առաջին երկու տասնամյակներին տեղի ունեցած իրադարձություններն այս տարածաշրջանում: Համեմատության համար նշենք, որ ակադեմիական այս հրատարակությունում Արցախին նվիրված է երկու անգամ ավելի ծավալուն շարադրանք, քան Սյունիքում տեղի ունեցած պայքարին [111]:

Եթե այս ամենն համեմատում ենք ՀԺՊ-ի առաջին հրատարակության հետ, ապա պատկերն, առավել քան զավեշտալի է, բայց այդ ամենն բացառապես կապ ու աղերս չունի այն շարադրողների անվան և գիտական հեղինակության հետ (գլուխն հիմնականում գրվել էր հարգարժան Ա.Գ. Հովհաննիսյանի կողմից, իսկ մի փոքրիկ հատված՝ Հ.Դ. Փափազյանի) [112]: Ա.Գ. Հովհաննիսյանը լինելով Արցախում ծնված և նախնական կրթություն ստացած անձնավորություն, անկասկած չէր կարող շրջանցել այս խնդիրը, բայց դա գտնվում էր կուսակցական և պետական գրաքննության վերահսկողության

[111] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 27-42՝ ազատագրական պայքարն Արցախում, էջ 43-51՝ ազատագրական պայքարն Սյունիքում:

[112] ՀԺՊ, Հ. IV, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ., Խմբ. Խաչիկյան Լ.Ս., Երևան, 1972, էջ 138 և հաջ:

ներքո: Այստեղ արդեն ավելորդ է խոսել այն դասական բարձրագույն կրթության մասին, որ նա էր ստացել (վերջինս, ինչպես նշվեց ամենասկզբում 1906-1913թթ. սովորել էր Ենայի, Հալեի և Մյունխենի համալսարաններում): Իհարկե, բոլորն էլ գիտեին որ դեռ Ստրաբոնն իր «Աշխարհագրությունում» Արցախը ներկայացնում էր որպես Մեծ Հայքի թագավորության անբաժանելի նահանգներից մեկը՝ անվանելով Օրխիստենե (Ὀρχιστηνή) [113]: Սակայն, երբ ընթերցում ես ՀԺՊ-ի համապատասխան գլուխը (գլուխ III), ապա գոնե քողարկված ձևով հեղինակը աշխատում է ներկայացնել Արցախում տեղի ունեցած ազգային-ազատագրական կռիվների մասին՝ անդրադառնալով հատկապես Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի գործունեությանը (ծ.թ. անհայտ-1728թ.) [114]:

[113] Страбон, География, М., 1994, XI,XIV,4; Ստրաբոն, Քաղեց և թարգ. Ամառյան Հ., Յերեվան, 1940, էջ 55: Պատմիչը Արցախն համարում էր Մեծ Հայքի թագավորության ձիաբուծության կենտրոնը: Арутюнян А.Ж., Административно-территориальное деление Аршакидской Армении согласно «Географии» Клавдия Птолемея (северные губерни), Каспийский регион: политика, экономика, культура. Научный журнал, Астраханский гос. университет, Астрахань 2014, № 2, էջ 14-21; Նույնի՝ Административно-территориальное деление Аршакидской Армении согласно «Географии» Клавдия Птолемея (южные губерни), Каспийский регион: политика, экономика, культура. Научный журнал, Астраханский гос. университет, Астрахань 2014, № 3, էջ 15-23.

[114] Տես՝ ՀԺՊ, Հ. IV, էջ 143-144, 147 և հաջ: Իհարկե, Ե. Հասան-Ջալալյանի մասին գրվել էին բազմաթիվ աշխատություններ: Տես՝ Эзов Г.А., Сношения Петра Великого с армянским народом. Документы, извлеч. Из Моск. Глав. И С-Петерб. Архивов мин. Ин. Дел, СПб., 1898; Ռաֆֆի, Երկերի ժողովածու, Հ. տասներորդ, Խամսայի մելիքությունները, Երևան, 1959, էջ 254; Աղուանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Ստեփանակերտ, 2007; Esayi Hasan Jalaleants', A Brief History of the Aghuank' Region (Patmut'iwn Hamarot Aghuanits' Erkri), A History of

Սակայն հետազոտողների ուսումնասիրության «կիզակետում» էր մնում Սյունիքում մղված պայքարի ղեկավար Դավիթ Բեկի (1669-1728թթ.) պայքարը [115]: Այսպիսով, շնորհիվ Վ.Ա. Դիլոյանի ՀՊ-ում տրված ծավալուն շարադրանքի, հայալեզու ընթեցողն առաջին անգամ օբյեկտիվ և ամբողջական գաղափար է կազմում Արցախում և Սյունիքում տեղի ունեցած ազատագրական կռիվների մասին:

3. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացնելու խնդիրը Վ.Ա. Դիլոյանի պատմահայեցողության մեջ.

Այս հարցերին է վերաբերում ՀՊ-ի ակադեմիական ներկայիս հրատարակության III հատորի առաջին գիրքը [116]: Ակադեմիական հրատարակության վերոհիշյալ շարադրանքը պետք է համարել այս հիմնախնդրի առաջին օբյեկտիվ մեկնաբանություններից մեկը, քանզի այլևս չկար այն

Karabagh and Ganje from 1702-1723, Introduction and Annotated Translation by Bournoutian G.A., Mazda Pub; 2009.

[115] Սեբաստացի Ղ., Դավիթ-Բեկ կամ պատմություն դպիանցոց, Երևան, 1992; Հովհաննիսյան Ա.Գ., Դավիթ բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը, ԲԵՀ, 1970, № 1, էջ 96-111; Կնյազյան Հ., Ազատագրական պայքարը Դավիթ բեկի գլխավորությամբ, Երևան, 1963; Աբրահամյան Ա.Գ. «Դավիթ-Բեկի պատմություն» նախագաղափար բնագրի շուրջ, ՊԲՀ, 1974, № 4, էջ 184-206; Օրբելյան Ս., Դաւիթ բեկի ծագումնաբանության հարցի շուրջ, ԲՀԱ, 1971, № 1; Փափազյան Հ.Դ., Դավիթ բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ, ՊԲՀ, 1987, № 1, էջ 89-102; Арутюнян П., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., М., 1954.

[116] Պետք է նշել, որ գլուխը շարադրվել է Ն.Բ. Սարուխանյանի հետ, որը այս հարցերի լավագույն գիտակներից մեկն էր մեզանում: Տես՝ Սարուխանյան Ն.Բ., Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Երևան, 1971:

գրաքննությունը, որ գոյություն ուներ մինչ այդ, չնայած որ նախկինում Վ.Հ. Ռշտունին և Զ.Տ. Գրիգորյանը աշխատել էին «հնարավորինս» օբյեկտիվորեն ներկայացրել այս հարցերը: Որքան էլ թուրքերն ու պարսիկները ցանկանային Հայաստանը և հայերին անջատել Ռուսաստանից, այնուհանդերձ դա մնում էր անհնարին, թեկուզն մի պարզ հանգամանքի բերումով: Վերոհիշյալ հեղինակները նշում են. «Ռուսաստանին միացման նախօրյակին Արևելյան Հայաստանում, ըստ էության, իսկական օրենսդրական մարմին չկար, քանի որ որպես մահմեդական պետության հպատակ երկիր՝ այստեղ ևս բոլոր հիմնական օրենքները Մոհամեդինն էին և սրբագրման կարիք չունեին: Լավագույն դեպքերում դրանք կարող էին ենթարկվել մեկնաբանությունների, որոնք որպես կանոն, տարբեր տեղերում ու տարբեր պայմաններում միանգամայն տարբեր կերպ էին ընկալվում» [117]: Միայն այս մի հանգամանքի առկայությունն բավարար էր, որպեսզի հայերը ցանկանային ազատվել այդ անտանելի պայմաններից:

Ամբողջ խնդիրն այն էր, որ ժամանակին Ա. Ասիան, իսկ առավել մեծապես Միջին Արևելքն է հանդիսացել օրենսդրության հայրենիքը [118]: Այս տարածքների մահմեդականացմամբ կարծես թե ամեն ինչ գլխիվայր շուռ տրվեց: Տեղի էր ունեցել հետընթաց կամ ռեգրես: Փաստորեն այլևս չէր գործում հնագույն ժամանակներից եկած Ex Oriente lux (Լույսն Արևելքից) հանրահայտ թևավոր արտահայտությունը: Այս տեսանկյունից

[117] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 181:

[118] Кечекьян С.Ф., Всеобщая история государства и права, Ч. I, Древний мир, Вып. I, Древний Восток и древняя Греция, М., 1944; История древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации, Ч. Первая, Месопотамия, Под ред. Дьяконова И.М., М., 1983, էջ 207-210, 351 և հաջ; Шарпен Д., Хаммурапи, царь Вавилона, М., 2013, էջ 197-270.

բխում է մի կարևոր խնդիր ևս. նախկինում համեմատության եզրեր էին դրվում Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետությունների միջև, և վերջինս համարվում էր առավել տանելի: Բարեբախտաբար ՀՊ-ի ներկա հրատարակությունում մենք այսպիսի եզրույթներ չենք տեսնում: Չնայած այն հանգամանքին, որ պատմությունը չի սիրում պայմանականություններ, բայց անհայտ է, թե ինչ կարող էր տեղի ունենալ հայերի հետ հետագայում: Այս դեպքում, ինչպես և գեղջատիկնիկի ժամանակ է (ռուս. матрешка) ի վերջո պարզվում է, թե ինչպիսի տեսք ունի դրանցից վերջինը: Իսկ վերջը հայերի համար լինելու էր, մեղմ ասած, ողբերգական: Այստեղ կարիք չկա համեմատություններ անցկացնել հայերի կացության վերաբերյալ ներկայիս և այն օրերի Պարսկաստանում: Արդեն անցել են մոտ 200 տարիներ, որոնց ընթացքում «հոսել են շատ ջրեր»: Հեղինակները բերում են բազմաթիվ օրինակներ, ինչպես օրինակ ընտանիքների ներսում սեփականությունների ժառանգման մասին, որոնք տրվում էին միայն նրա անդամներից՝ «.. մահմեդականներին հավատարիմ դիտվածներին..» [119]:

Այստեղ գնում էր մի գործընթաց, որը պետք է անվանել Հայաստանը՝ հայերից հայաթափելու քաղաքականություն: Դրա խոսուն վկայություններն են հանդիսանում բերված այլ օրինակները ևս, որոնցից մենք առանձնացնում ենք երկուսը: Այսպես, նրանք նշում են, որ XIX դ. սկզբներին արևելահայաստանի 1111 բնակավայրերից 359 արդեն անմարդաբնակ էին: Մարդիկ վճարում էին 40-ից ավելի տարբեր հարկեր: Փաստորեն արդեն հայաթափվել էր բնակավայրերի 1/3-ը, իսկ 40 հարկերի, միայն թվաքանակից, կարելի է սարսափել [120]:

Ռուսաստանը առանց երկնչելու ձգտում էր ողջ Անդրկովկասը և Հայաստանը միացնել իրեն, որին խանգարում

[119] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 181:

[120] Նույն տեղում, էջ 182-183:

էին ոչ միայն այստեղ հաստատված Պարսկաստանն ու Թուրքիան, այլև նրանց համախոհները՝ արևմտյան մեծ տերությունները: Նրանց նպատակն էր ուրիշների ձեռքով կրակից շագանակներ հանելը: Արևելյան այս տարածքներում նրանք երևի ձգտում էին պահպանել անվանական անկախություն, որի ետնախորքում նրանց (առայժմ Անգլիայի և Ֆրանսիայի միահեծան, իսկ XIX դարի վերջերից նաև մյուս մեծ տերությունների, հատկապես Գերմանիայի) գերիշխանությունն էր: Փաստորեն արևելյան այս տարածաշրջանում կիրառվում էր գաղութայնացման մի նոր մեթոդ, որը տարբերվում նրանց ավանդական գաղութային քաղաքականությունից (Ամերիկա, Հ. Արևելք, առավել ևս Աֆրիկա):

Պարսկաստանն իր հերթին, որպես իր «բնական» սահմաններ էր համարում Կովկասից հարավ ընկած տարածքները: Ինչպես նշվում է իրավացիորեն ՀՊ-ում Ռուսաստանը ձգտում էր առաջիկայում նվազագույնն հաստատվել Կուր-Արաքս սահմանագծում: Հետագայում, ապագան ապացուցեց, թե ինչպիսի փրկարար դեր ունեցավ Ռուսաստանի կողմից նախագծված այդ սահմանագծի հաստատումը: Խոսքը վերաբերում է հատկապես Երկրորդ աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցած իրադարձություններին՝ կապված Պարսկաստանի հետ, երբ այն բաժանվեց խորհրդային ու անգլիական ազդեցության գոտիների: Դա փրկարար նշանակություն ունեցավ ՀԽՍՀ-ի համար: Սա պատմության մեջ այն եզակի դեպքերից էր, որ Հայաստանի տարածքը չվերածվեց ռազմական գործողությունների հորձանուտի:

XIXդ. առաջին քառորդին Անդրկովկասում տեղի ունեցած բուռն իրադարձությունները ոտքի էր հանել նաև հայ ժողովրդի բոլոր հատվածներին: Անդրկովկասը նմանվում էր մեղվի փեթակի և, համաշխարհային ամենակարևոր գործընթացներից մեկը Նապոլեոնյան պատերազմներից հետո, տեղի էր ունենում

հենց Հայաստանի երկու հատվածների շուրջը: Այդ ժամանակի նշանավոր ռազմա-քաղաքական գործիչներից մեկը՝ հայազգի Դմիտրի Իվանի Ախշարումովը (իսկակ. Հայկ Հովհաննեսի Ախշարումով, 1785-1837թթ.), որը մասնակցել էր 1806-1812թթ. Ռուս-թուրքական և Նապոլեոնյան պատերազմներին՝ նույնպես կարծես թե «տեսնում» էր իր մայր հայրենիքի մոտալուտ ազատագրումը: Նա էր, որ 1819թ. գրեց «1812 թվականի պատերազմի նկարագրությունն աշխատությունը», գտնելով, որ հաջորդ քայլն Անդրկովկասի, հատկապես իր հայրենի Հայաստանի ազատագրումն է [121]:

Վերևում արդեն նշվեց այն ոգևորության «ալիքի» մասին, որ պատել էր հայերին և, այս պատճառով էլ աշխատությունում մեծ ուշադրություն է հատկացված հայ կամավորական շարժմանը [122]: Եթե նրանք կռվում էին հանուն իրենց վաղվա լավ օրերին հասնելու համար, ապա լիովին այլ էր իրենց կամքին հակառակ՝ պարսից զորքում հայտնված հայերի վիճակը: Չունենալով նրանց համար կռվելու և ոչ մի ցանկություն նրանք հարկադրանքի ազդեցության ներքո հարկադրված էին կռվել իրենց արյունակից և հարազատ եղբայրների դեմ: Այս առումով ուշագրավ է պարսկական բանակում հարկադրաբար կռվող Հակոբ Հարությունյանի սխրանքը, որը տեղի ունեցավ 1827թ. օգոստոսի 17-ին Օշականի ճակատամարտի ժամանակ [123]: Հեղինակները մեծ ուշադրություն են հատկացնում այդ ժամանակի ռազմա-քաղաքական զենիթում հայտնված մի շարք անձանց ծավալած գործունեությանը (Ա. Երմոլով, Հ. Ալամդարյան, Ն. Աշտարակեցի, Ի. Պասկևիչ, Ա.Ս. Գրիբոեդով, Ա.

---

[121] Բալյան Ի.Ս., Բաղինյան Շ.Ս., Դմիտրի Ախշարումով (հասարակական-քաղաքական հայացքների վերլուծություն), Երևան, 1979:

[122] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 196 և հաջ., նաև էջ 205-212:

[123] Մանրամասն տես՝ ՀԺՊ, Հ. V, էջ 152:

Կրասովսկի, Խ. Աբովյան և ուրիշ.): Այս գլուխը նրանք ավարտում են Խ. Աբովյանի հանրահայտ խոսքերով, որը վերածվել է թևավոր արտահայտության. «Դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր կարող ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար...» [124]:

4. Արևելյան Հայաստանը Ռուսաստանյան կայսրության կազմում գտնվելու հիմնահարցը Վ.Ա. Դիլոյանի պատմահայեցողության մեջ (իրավա-քաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը).

Արևելյան Հայաստանի՝ ցարական կայսրության կազմում հայտնվելուց հետո հասարակական-քաղաքական շրջաններին առաջին հերթին հետաքրքրում էր, թե ինչպիսի կարգավիճակ է տրամադրվելու ազատագրված հայերին: Սա նրանց համար հանդիսանում էր հարցերի-հարցը: Սակայն ռուսական իշխանություններն ունեին իրենց նախագծված ծրագրերն, որով էլ բնականաբար պետք է առաջնորդվեին ապագայում: Վ.Ա. Դիլոյանի շարադրանքում մենք առաջին անգամ ենք լիովին տեսնում այն պատկերը, որ իրավացիորեն գոյություն ուներ Հայկական մարզում: Եթե խորհրդային պատմագրությունը թույլ էր տալիս «ցեխ շպրտել» ցարական իշխանությունների վրա, բայց թույլատրելի սահմաններում, ապա արգելում էր քննադատել ազգամիջյան փոխհարաբերությունների խնդիրն ընդհանրապես, առավել ևս բացասական առումով:

Հայաստանի միացումից հետո նախկին նայիբներին ցարական կառավարման նորաստեղծ համակարգում պահելը իրավացիորեն առաջացրեց հայերի անսահման դժգոհությունը: Իզուր չէ, որ հեղինակը ստեղծված կացությունն անվանում է «..

[124] Աբովյան Խ., ԵԼԺ, Հ. 3, Երևան, 1948, էջ 179: Տես նաև ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 212-213:

հնի և նորի խառնուրդ» [125]: Այս հարցերը նա բավականին համարձակորեն քննարկել է նաև «Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին...» իր մենագրությունում, քանզի, մենք արդեն վերևում մի անգամ նշեցինք, որ տպագրման ժամանակը՝ հեղինակին արդեն ընձեռում էր այսպիսի հնարավորություն: Նա նշում է այն ինքնավարության մասին, որ նախկինում արդեն ունեին Ռուսաստանի որոշ հայաշատ քաղաքներ՝ Նոր Նախիջևանը, Գրիգորիոպոլը, Աստրախանը և այլն [126]... Սրանք առանձին կղզյակներ էին ահռելի ռուսական տարածքներում և, ոչ մի կերպ չէին սպառնում պետության անվտանգության շահերին: Հակառակ երևույթ էր հայերով բնակեցված 20.720 կմ. քառ. տարածքին ինքնավարություն շնորհելը (բնակչության թիվը մոտ 160 հազ. մարդ): Դա կարող էր ունենալ վարակիչ ազդեցություն նաև մյուս ազգային տարածքների վրա, որը հետագայում կարող էր վերածվել շղթայական ռեակցիայի:

1830-1838թթ., երբ Հայկական մարզը ղեկավարվում էր ռուսական բանակի հայազգի գեներալ Վասիլ (Բարսեղ) Հովսեփի Բեհբութովի (Վասիլ Բեհբության, 1791-1858թթ.) կողմից, ապա կատարվեցին վճռական քայլեր, որպեսզի այստեղ հաստատվեն ռուսական օրենքները [127]: Այս ընթացքում էլ ինչպես ողջ

[125] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, 2010, Խմբ. Մելքոնյան Ա.Ա., էջ 263:

[126] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին..., էջ 304-305:

[127] Шопен И.И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоедининия к Российской империи, СПб., 1852; Присоединение Восточной Армении к России, Сб. документов, Материалы по истории армянского народа, Т. I, 1801-1813гг., (Введение Агаяна Ц.П. и Дилояна В.А.), Ер., 1972, С. 5-32; Присоединение Восточной Армении к России, Сб. документов, Материалы по истории армянского народа, Т. II, 1814-1830 гг., (сост. Дилоян В.А., Алексанян А.В.), Ер., 1978, С. 51-53; Դարբինյան Մ.Ղ., Արևմտահայերի 1829-1830

Անդրկովկասում, այնպես էլ հայկական տարածքներում՝ հիմնական պաշտոններն հանձնվեցին ռուս աստիճանավորներին: Ցարական կառավարությունը գոնե առերես ցուցադրման համար հիմնել էր «Անդրկովկասի բարեկարգման հատուկ կոմիտե», որը ավելի շատ պետք է օգտագործեր իր հնարավորությունները, որպեսզի այստեղ իր օրենքներն ու բարքերը տարածեր: Ամեն ինչ եղավ այնպես, ինչպես արդեն վաղուց ծրագրավորվել և նախագծվել էր պետերբուրգյան իշխանությունների կողմից: Այսպես էլ եղավ և, 1840թ. ապրիլի 10-ին Անդրկովկասը ենթարկվեց վարչա-տարածքային նոր բաժանումների: Հիմնվեցին Վրացա-Իմերեթական նահանգը և Կասպիական մարզը, որոնց կենտրոններն էին համապատասխանաբար՝ Թիֆլիսը ու Շամախին: Վ.Ա. Դիլոյանն իրավացիորեն սա անվանում է ազգային առանձնահատկությունների լիակատար անտեսում [128]: Այս հարցին միանշանակ պատասխանելն անհնարին է, քանզի արդեն մի քանի դար հայերն անմասն նվիրված էին ռուսական իշխանություններին: Գուցե նրանց «կատաղեցնում» և զայրացնում էր հատկապես հայկական սփյուռքի միջամտություններն իրենց ներքին գործերին, իսկ հակառակ եզրից նաև ռուսահպատակ հայերի չափազանց ակտիվությունը:

Եթե վրացիների դեպքում այդ ակտիվությունը ներվեց, կարելի է ասել իշխանությունները որոշ ըմբռնումով մոտեցան հարցին, ապա մեր դեպքում՝ ոչ: Իշխանությունների հաջորդ

թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, 1974, № 2, էջ 91-100; Парсамян В.А. Генерал В.О. Бебутов, Ер., 1943; Тунян В.Г., Матералы об организавции управления Восточной Армении в 1827-1828 гг., ՊԲՀ, 1986, № 2, էջ 209-219; Նույնի՝ Волнения поселян Армянской области, ՊԲՀ, 1990, № 4, էջ 229-235. Համեմատության համար տես՝ Маркова О.П., Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, 1966.

[128] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին, էջ 267:

քայլն եղավ Հայ Առաքելական Եկեղեցուն (Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի) վերաբերող օրենքների հրապարակումը: Խոսքը վերաբերում է 1836թ. մարտի 11-ի օրենքին, որն առավել հայտնի է «Պոլոժենիե (Положение)» անվամբ: Այս հարցի արծարծումն խորհրդային պատմագրության մեջ մեծապես շրջանցվում էր, քանզի օրենք էր ընդունվել «Եկեղեցին պետությունից և դպրոցը եկեղեցուց անջատելու մասին» (1918 թվականի հունվարի 23-ի ԺԿԽ-ի դեկրետը) [129]: Այս օրենքը հետապնդում էր միայն մեկ նպատակ՝ որքան հնարավոր է հայ եկեղեցուն և հոգևորականությանը զցել կախման մեջ իշխանություններից: Փաստորեն, իշխանությունը նրա նկատմամբ վերածվում էր պորտալարի և համարյա բոլոր հարցերը լուծելու էր վերջինիս հետ նախապես համաձայնեցնելուց հետո:

Անհրաժեշտ է արձանագրել, որ բոլոր դեպքերում էլ դժգոհություններ լինելու էին, սակայն, ամենայն հավանականությամբ, ցարական իշխանություններին ներվայնացնում էր հայերի չափից ավելի ակտիվությունը: Վ.Ա. Դիլոյանը իրավացիորեն նշում է այդ մասին ևս, որ Ի. Պասկևիչի կենսագիր Ա.Պ. Շչերբատովը (1836-1904թթ.) ամեն կերպ

[129] Դիվան Հայոց պատմության, Գիրք Բ, Թիֆլիս, 1893, էջ 203 և հաջ; Акты, собранные Кавказской Археографической Комиссией (далее АКАК), Т. VII, Тифлис, 1878, № 214; Օրմանյան Մ., Ազգապատում, Գիրք 3, Երուսաղեմ, 1927, էջ 3601—3602; Լեո, Երկերի ժողովածու, Հ. IV, Երևան, 1984, էջ 489; Երիցյան Ալ., Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար, Թիֆլիս, 1877, էջ 6-8 և հաջ; Նույնի՝ Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, Մ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 550; Ալեքսանյան Կ.Վ., «Պոլոժենիեի» ստեղծման պատմությունից, ԼՀԳ, № 4, էջ 3-11; Бозоян А.А., Юзбашян К.Н. и др., Армянская Апостольская Церковь // Православная энциклопедия, Т. III, М., 2001, С. 340; Тунян В.Г. «Положение» армянской церкви, Ер., 2001; Նույնի՝ Армяно-русские отношения в церковной сфере 1836-1917, Ակունք, գիտ. հոդվածների ժողովածու, 2013 № 2, С. 3-23.

նսեմացնում է. «...սևացնում Ներսես Աշտարակեցուն՝ նրան հակադրելով մահմեդական «բարձր առաքինության տեր» հոգևորականությանը» [130]: Մեր հոգևորականները ուղղակի չէին ցուցաբերում դիվանագիտություն, ասում էին այն ինչ մտածում էին: Նրանք ավելի մեծ օգուտ կտային, եթե առաջնորդվեին՝ թալեյրանյան (Շառլ Մորիս դե Թալեյրան-Պերիգոր, Charles Maurice de Talleyrand-Périgord, 1754-1838թթ.) «Լեզուն մարդուն տրված է մտքերը թաքցնելու համար» նշանաբանով: Այս պատճառով էլ որոշ քաղաքական գործիչներ, ինչպես օրինակ կոմս Ե.Ֆ. Կանկրինը (1774-1845թթ., 1823-1844թթ. ֆինանսների մինիստր) գտնում էր, որ Անդրկովկասը և Հայաստանը մի տարածք է, որտեղից պետք է միայն հարկեր հավաքել: Սա համարյա նույն մտքի կրկնությունն էր, որ 1841թ. Իտալիայի վերաբերյալ պետք է ասեր Ավստրիայի պետական գործիչներից Կ.Լ.Վ. Մետտեռնիխը (Metternich, 1773-1859թթ.): Նա ուղղակի նշեց. «Իտալիան՝ միայն աշխարհագրական հասկացություն է»: Երևի սա գերմանացիների վարկի բնորոշ կողմերից էր, քանզի և՛ Ե.Ֆ. Կանկրինը, և՛ Կ.Լ.Վ. Մետտեռնիխը գերմանացիներ էին: Քննադատելով «Պոլոժենիե»-ի բազմաթիվ հարցադրումները, այնուամենայնիվ Վ.Ա. Դիլոյանը գտնում է, որ այն «.. ինչ-որ առումով նպաստել է հայոց եկեղեցու ներսում որոշակի կարգ ու կանոնի հաստատմանը» [131]:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացմամբ սկսվեց նաև լուսավորության տարածումը մեր հայրենիքում, որին վերաբերում է ՀՊ-ի՝ Հ. III, Գիրք առաջինի համապատասխան բաժիններից մեկը [132]: Հեղինակը կարևոր տեղ ու դեր է

[130] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին, էջ 264: Տես նաև՝ Щербатов А.П., Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятелность, Т. 3, СПб., С. 321-322. Այս աշխատությունը բաղկացած է 7 հատորներից և, 9-ը գրքերից:

[131] ՀՊ, Հ. III, Գիրք առաջին, էջ 271:

[132] Նույն տեղում, էջ 271-274:

հատկացնում հայ առևտրական բուժուազիայի ծավալած գործունեությանը, որպեսզի Հայաստանը ևս զարգանա և, որքան հնարավոր է նմանվի ոչ միայն Ռուսաստանի կենտրոնական շրջաններին, այլև արևմուտքին: Վերջինս, իհարկե երազանքների «ժանրից» էր, քանզի կենտրոնական իշխանությունները դա չէին հանդուրժի: Լուսավորիչները (Հովի. Լազարյան և այս ընտանիքի մյուս ներկայացուցիչները, Շ. Շահամիրյան, Հ. Ալամդարյան, Մ. Թաղիադյան, Մխիթարյան միաբանները) գործադրեցին բոլոր հնարավոր ջանքերը, որպեսզի գոնե կատարեն նվազագույնը: Սակայն Հայաստանին հարկավոր էր բավականին ժամանակ, որպեսզի վերացվեր հետամնացությունը, որը բառիս բուն իմաստով ժառանգություն էր մնացել Պարսկաստանից:

Որոշակի առաջընթաց և զարգացում տեղի ունեցավ նաև սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունների բնագավառում: Այստեղ ևս, ինչպես կրթա-լուսավորական բնագավառում, անհրաժեշտ էր ուժերի գերագույն լարում, որպեսզի երկիրը դուրս բերվեր այդ հետամնացությունից, որը կուտակվել էր նախկինում: Բայց երևի այստեղ քայլերն ավելի արագ էին՝ ի տարբերություն կրթականի, որը ընթանում էր «կրիայի» քայլքին համապատասխան: Մենք արդեն խոսել ենք հայ առևտրականների ու նրանց ունեցած դերի մասին միջազգային ասպարեզում, որը շարունակվեց հաջողությամբ նաև այժմ: Հայաստանում սկսեց զարգանալ գյուղատնտեսությունը, ավելացան մշակելի տարածքները, վերելք ապեցին արհեստները և արտադրությունը: Հայաստանը վերածվեց տարանցիկ երկրի միջազգային առևտրա-շրջանառության ասպարեզում՝ իրար կապելով արևելքն ու արևմուտքը:

Այս ընթացքում տեղի ունեցան նաև գյուղացիական հուզումներ, որոնք ուղղված էին ցարական իշխանությունների ներկայացուցիչների կամայականությունների դեմ, որոնք հաջողությամբ ճնշվում էին վերջիններիս կողմից: Բայց բոլոր դեպքերում Հայաստանն ապրում էր վերելք և զարգացում:

Համեմատության համար նշենք, թե ինչ կարող էր տեղի ունենալ հայերի հետ, եթե ընդվզեին Պարսկաստանի, իսկ առավել ևս թուրքական իշխանությունների դեմ: Թե ինչ եղավ Թուրքիայում հայտնի է 1915 թ. դեպքերից: Կարելի է ենթադրել, որ համարյա նույնը կարող էր կրկնվել նաև Պարսկաստանում:

5. Վ.Ա. Դիլոյանը որպես թարգմանիչ և խմբագիր.

Վ.Ա. Դիլոյանը մեծ ավանդ և ներդրում ունի նաև տարբեր կարևոր աշխատությունների թարգմանության, ինչպես նաև խմբագրման բնագավառներում: Նրա կողմից դրվեց XXդ. նշանավոր ստեղծագործող Սոմերսեթ Մոեմի (William Somerset Maugham, 1874-1965թթ.) ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների անկյունաքարը: 1965թ. հրատարակվեց Ս. Մոեմի հանրահայտ «Ստրկություն մարդկային» ստվարածավալ վեպի հայերեն թարգմանությունը, որ կատարել էր Վ.Ա. Դիլոյանը:

Սա Ս. Մոեմի կողմից 1915թ. գրված ամենահայտնի վեպերից էր (անգլ. «Of Human Bondage»): Ստեղծման տարեթիվն արդեն տալիս է շատ հարցերի պատասխանը: Վեպի գլխավոր հերոս Ֆիլիպ Կերին ուներ ոչ միայն ֆիզիկական արատ, քանզի կաղում էր, այլև որբ էր: Նրա դեգերումները շարունակվեցին նաև ուսանողական տարիներին: Սակայն Ֆիլիպը չէր ընկճվում ամենուր որոնելով իր տեղն աշխարհում և, փորձում էր հասկանալ կյանքի իմաստը: Այս ընթացքում նա ապրեց մի շարք հիասթափություններ, հրաժարվեց մի շարք պատրանքներից, մինչ կկարողանար գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները: Այս վեպի թարգմանությունն ու հրապարակումը նրա կողմից կոչ էր 1915թ. սարսափներն ապրած իր հայրենակիցներին և նրանց ժառանգներին: Այստեղ խորհրդանշական է այն հանգամանքը, որ Վ.Ա. Դիլոյանը թարգմանությունն իրականացրել էր 1965թ., այսինքն՝ դա նրա

կողմից յուրահատուկ հարգանքի տուրք էր Մեծ եղեռնի ժամանակ զոհվածների հիշատակին: Սա մի կողմից: Մյուս եզից նա կոչ էր անում բազմաթիվ հայկական գաղթօջախներում հաստատվածների երբեք չընճվել, չհանձնվել, չկապիտուլացվել բոլոր դժվարությունների դեպքում, որոնք կարող են հայտնվել կյանքի երկարատև ճանապարհի քառուղիներում: Փաստորեն Վ.Ա. Դիլոյանը իր ընթերցողին այս թարգմանությամբ տրամադրում էր, որ «Կյանքը՝ դա պայքար է» (Vivere militare est կամ Vivere est militare) և չպետք է հանձնվել: Հասարակության պատմության ընթացքում և՛ առաջադեմ, և՛ հետադիմական տարբեր գործիչներ՝ սկսած հին հռոմեացիներից մինչև երիտթուքերն ու Հիտլեր, ունեցել են այս արտահայտության իրենց յուրօրինակ մեկնաբանությունները: Վերջին երկու դեպքերում դա հասավ հոմոֆոբիայի աստիճանի (հին հուն.՝ ὁμός՝ նման, միատեսակ և φόβος՝ վախ, երկյուղ բառերից), երբ մարդը՝ մարդկանց հանդեպ տածում է ատելություն, անվստահություն վախ և այլն... Դրանք երիտթուրքերի և ֆաշիստների դեպքերում զուգակցվեցին պարանոյայի (հին հուն.՝ παράνοια խելագարություն) և քսենոֆոբիայի տարածմամբ (հին հուն.՝ ξένος – օտար և φόβος – վախ բառերից):

Վ.Ա. Դիլոյանից հետո հայերեն թարգանվեցին Ս. Մոեմի նաև մյուս կարևոր ստեղծագործությունները՝ «Լուսին և վեցպենսանոց (The Moon and Sixpence, թարգմ.՝ Ա. Խաչատրյան, խմբ.՝ Գ.Վ. Վիրապյան, Երևան, 1976)», «Թատրոն» (Theatre, թարգմ.՝ Ջ. Հովհաննիսյան, խմբ.՝ Ա.Ս. Հովսեփյան, Երևան, 1985) վեպերը, «Անձրև» պատմվածքը (Rain, թարգմ.՝ Ռ. Ավետիսյան; խմբ.՝ Գ.Գ. Հովսեփյան, Երևան, 1981) և այլն:

Կարևոր էին նաև Գայոս Սվետոնիոս Տրանքվիլոսի (Gaius Suetonius Tranquillus մ.թ. 70-122 թ. հետո) «Տասներկու կեսարների կյանքը» (թարգ. ռուսերենից, Եր., 1986; լատ.՝ «De vita Caesarum», բառացի թարգ. է «Կեսարների կյանքի մասին») և Ա.Պ. Բազիյանցի

«Էջեր Լազարյանների դիվանից (Ակնարկ)», (Եր., 1986) հայերեն թարգմանությունները:

Կատարված գործերից պետք է առանձնացնել Ն.Գ. Ադոնցի երկու կարևոր աշխատությունների թարգմանությունները՝ «Հայկական հարցի լուծման շուրջ (թարգ. անգլերենից, Եր. 1989)» և «Հայկական հարց (հ. Ա, թարգ. անգլերենից, Եր., 1996)»: Թարգմանությունների ժամանակն ընտրված էր այդ պահին ճիշտ համապատասխան, քանզի հենց նոր ավարտվել էր պայքարը Արցախի համար: Ներկայումս հայկական հարցի բաղկացուցիչ մասերից օրակարգային է հանդիսանում Արցախի հիմնահարցի լուծումը: Այստեղ մեզ անհրաժեշտ է Ադրբեջանին կապել Թուրքիայի հետ, քանզի դա իրենց կարգախոսն է. «Մեկ ազգ, երկու պետություն»: Այս հարցերին Ն.Գ. Ադոնցն անդրադառնում է «Առաջավոր Ասիայի հիմնահարցի լուծման շուրջ» հոդվածում [133]: Հեղինակավոր պատմաբանը շարադրանքն սկսելով Ռուսաստանի խորհրդայնացման իրադարձություններից, այնուհետև կանգ է առնում թուրքական ցեղերի՝ Փ. Ասիա ներթափանցելու պատմության վրա: Եթե Եվրոպան ժամանակին կարողացավ պատռել կաթոլիկության քողը և ընթանալ վերելքի ճանապարհով՝ թևակոխելով նոր դարաշրջան, ապա Թուրքիան ընդհակառակը՝ ինչպես և նախկինում մոնղոլները ոչինչ չտվեց համաշխարհային պատմությանը - գրում է Ադոնցը [134]: Նրանց բնորոշ էր միայն հետադիմությունը, վայրէջքը և նորի կործանումը: Չնայած այն հանգամանքին, որ «..մարդկության պատմությունը չի ճանաչում բացարձակ հետընթաց...» [135], սակայն սուլթանական Թուրքիան այս առումով բացառություն

[133] Ադոնց Ն., Հայկական հարց, Հ. Ա, թարգ. անգլ., Երևան, 1996, էջ 70-94: Այս աշխատությունը ծանոթագրվել է Պ. Հովհաննիսյանի կողմից, իսկ հրատ. - խմբ. Ա. Իսոյան:

[134] Նույն տեղում՝ էջ 78 և հաջ:

[135] История древнего мира, Т. I, Ранняя древность, Под ред. Дьяконова И.М., М. 1989, С. 269.

կազմեց: Նույնպիսի բացառություն են նաև նրանց կրտսեր եղբայրները՝ ադրբեջանացիները: Ն.Գ. Ադոնցը գտնում էր, որ փրկությունը Թուրքիան անդամահատելու-մասնատելու մեջ է: Նույնը պետք է տարածել նաև Ադրբեջանի վրա: Ահա այսպիսի հոդվածների ժողովածու է Ն.Գ. Ադոնցի այս աշխատությունը, որը ճիշտ ժամանակին հայտնվեց ընթերցողների գրասեղանին, որը և թարգմանվել էր Վ.Ա. Դիլոյանի կողմից [136]:

Վ.Ա. Դիլոյանը խմբագրել է նաև մեկ ու կես տասնյակ աշխատություններ: Դրանք վերաբերում են հայոց պատմության տարբեր հիմնահարցերին՝ սկսած Լազարյաններից և վերջացրած Ղրիմի ու Եգիպտոսի հայկական գաղթօջախներով, հայ-ռուսական փոխհարաբերությունների պատմությամբ և այլն (այս ցուցակն ավելի մանրամասն տրված է նրա կողմից հրատարակած աշխատությունների համապատասխան բաժնում):

[136] Հարությունյան Հ.Ժ., Ն. Ադոնց, Հայկական հարց, Երկ. Չորս հատորով, Կազմ. Պ. Հովհաննիսյանը, Երևան, 1996, Իրան-Նամե, 1997 № 2-3, էջ 43 (գրախոսություն):

ՎԵՐՋԱԲԱՆ

Անուրանալի է Վալտեր Արտաշեսի Դիլոյանի (1930-2005թթ.) ավանդը ինչպես հայագիտության, այնպես էլ նրա հետ սերտորեն առնչված համաշխարհային պատմության մի քանի բնագավառների ուսումնասիրության ասպարեզներում: Մոտավորապես 50 տարիների ընթացքում նրա կողմից գրվեցին մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ, որոնք կարևոր նշանակություն ունեցան վերոհիշյալ բնագավառների համար: Այս ուսումնասիրություններն կարելի է բաժանել մի քանի խմբերի. ա) Լազարյանների սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային գործունեության ոլորտներին վերաբերող հետազոտություններ, որոնք իրենց ամփոփումն ստացան նրանց վերաբերող մենագրությունում, բ) հայ-ռուսական առնչություններին պատկանող աշխատություններ: Այս խմբին վերաբերող հետազոտություններն բավականին բազմաշերտ և բազմաբովանդակ էին, ուստի հնարավոր չէ դրանց տալ մեկ-միասնական գնահատական: Այստեղ առաջին հերթին պետք է մատնանշել 1989թ. Վ.Ա. Դիլոյանի կողմից հրատարակած մենագրությունը, որը առնչվում է XIX դարի առաջին երեսնամյակին գոյություն ունեցած ռուս-հայկական փոխհարաբերություններին:

Հայ-ռուսական փոխհարաբերությունների խնդիրը Վ.Ա. Դիլոյանի մտահորիզոնում իրավացիորեն միաձուլվում էր հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրության հետ: Ժամանակագրորեն դա ընդգրկում է պատմության բավականին մի մեծ հատված՝ XVI դարից մինչև Արևելյան Հայաստանի՝ ցարական Ռուսաստանին միացումը: Նա մեծ ուշադրություն է դարձրել նաև XVIIդ. երկրորդ կեսի – XVIIIդ. սկզբների հայ ազատագրական պայքարի լուսաբանմանը՝

նպատակ հետապնդով ցույց տալ այն թերությունները, որոնց պատճառով էլ Արևելյան Հայաստանն ազատագրվեց ավելի ուշ միայն 1828թ: Միաժամանակ ուսումնասիրողը իրեն ընձեռված հնարավորությունների սահմաններում լուսաբանում է Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդիրները, նշում այն հանգամանքները, որոնք խանգարեցին դրա կենսագործմանը: Իրավացիորեն, որպես իրականացմանը խանգարող առաջին արգելք նա դիտարկում է մեծ տերությունների «թուրքամետությունը», քանզի նրանք ամեն կերպ կանխում և խանգարում էին Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանն Անդրկովկասում:

Վ.Ա. Դիլոյանը վճռորոշ դեր ունեցավ նաև հայոց պատմության հատկապես Նոր և Նորագույն դարաշրջանների պարբերացման և նախկին ժամանակագրությունների վերանայման հարցերում: Նախկինում այդ պարբերացումն իրականացվել էր հայ ժողովրդի հետ բացարձակապես կապ և առնչություն չունեցած իրադարձությունների շաղկապմամբ: Երևի ամենավիրավորականն այն էր, որ համարյա ոչինչ չկար Հայաստանի Առաջին հանրապետության պատմության վերաբերյալ (1918-1920թթ.), իսկ եղածն էլ ուներ միայն խեղաթյուրված կերպարանք,:

Վերջապես Վ.Ա. Դիլոյանը նորովի մեկնաբանություններ տվեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանյան կայսրության կազմում գտնվելու հիմնահարցին: Խոսքը վերաբերում է խնդրի ինչպես իրավա-քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական կացությունների մեկնաբանություններին:

Ահա բոլոր այս և բազմաթիվ այլ նորամուծությունների պատճառով Վ.Ա. Դիլոյանի գիտական ժառանգությունը պետք է դիտարկել որպես մի նոր երևույթ հայագիտության ողջ պատմության մեջ:

ЗАКЛЮЧЕНИЕ

Неоценим вклад Вальтера Арташесовича Дилояна (1930-2005 гг.) как в арменоведение, так и в тесно связанные с данной наукой некоторые сферы всемирной истории. В течение 50 лет ученым были написаны монографии и многочисленные статьи, которые имеют большое значение для исторической науки.

В.А. Дилоян свои исследования проводил в нескольких научных направлениях: а) изучение социально-экономической, политической, культурной деятельности Лазарянов; основные результаты этих работ обобщены в его монографии; б) труды, посвященные армяно-русским связям. Данные исследования весьма многоаспектны и разноплановы, поэтому невозможно дать им однозначную оценку. Здесь, в первую очередь, следует отметить монографию В.А. Дилояна, опубликованную в 1989 г., которая посвящена первому 30-летию армяно-русских отношений с XIX в.

Армяно-русские отношения в мировоззрении В.А. Дилояна справедливо сливались с историей национально-освободительного движения армянского народа. Во временном ракурсе это охватывает довольно большой отрезок, начиная с XVI в. до присоединения Восточной Армении к царской России. Ученый большое внимание уделял также изучению вопросов, связанных с национально-освободительной борьбой армянского народа во второй половине XVII в. – начале XVIII в. Целью этих исследований было выявление недочетов этого освободительного движения, из-за которых Восточная Армения была освобождена лишь в 1828 г. В.А. Дилоян одновременно в пределах своих возможностей освещает проблему освобождения Западной Армении, отмечая те обстоятельства, которые помешали

реализации намеченных задач. Первоначальной причиной крушения планов освобождения Западной Армении автор видит в протурецкой ориентации западных держав, ибо они любыми способами препятствовали и мешали укреплению позиций России в Закавказье.

В.А. Дилоян сыграл решающую роль в пересмотре вопросов периодизации истории армянского народа, в частности, Нового и Новейшего периодов, равно как и в пересмотре старой хронологии. Раннее эта хронология была представлена во взаимосвязи с событиями, не имевшими никакого отношения к истории Армении. Возможно, самым оскорбительным было то, что исследователями практически ничего не было представлено относительно истории Первой Республики Армения (1918-1920 гг.), а то что было представлено, носило искаженный характер.

Наконец, В.А. Дилоян дал новую оценку проблеме пребывания Армении в составе Российской Империи. Это касается интерпретации как юридических и политических вопросов, так и социально-экономического строя.

Вышеназванный круг вопросов, а также другие проблемы, исследуемые В.А. Дилояном, дают основание считать научное наследие ученого новым явлением как в арменоведении, так и во всей исторической науке в целом.

CONCLUSION

The contribution of Walter Artashesovich Diloyan (1930-2005) to both Armenian studies and some areas of world history closely related to this science is invaluable. For 50 years, scientists have written monographs and numerous articles that are of great importance for historical science.

V.A. Diloyan conducted his research in several scientific areas: a) the study of the socio-economic, political, cultural activities of the Lazaryans; the main results of these works are summarized in his monograph; b) works dedicated to the Armenian-Russian relations. These studies are very multidimensional and diverse, therefore it is impossible to give them an unambiguous assessment. Here, first of all, the monograph by V.A. Diloyan, published in 1989, which is dedicated to the first 30th anniversary of Armenian-Russian relations from the 19th century.

Armenian-Russian relations in the worldview of V.A. Diloyan rightly merged with the history of the national liberation movement of the Armenian people. From a time perspective, this covers a rather large segment, starting from the 16th century. before the accession of Eastern Armenia to Tsarist Russia. The scientist also paid great attention to the study of issues related to the national liberation struggle of the Armenian people in the second half of the 17th century. - beginning of the XVIII century. The purpose of these studies was to identify the shortcomings of this liberation movement, due to which Eastern Armenia was released only in 1828. V.A. At the same time, Diloyan, within the limits of his capabilities, covers the problem of the liberation of Western Armenia, noting the circumstances that hindered the implementation of the tasks outlined. The author sees the initial reason for the collapse of the plans for the liberation of Western Armenia in the pro-Turkish orientation of the Western powers, because by any means they impeded and hindered the strengthening of Russia's positions in the Transcaucasus.

V.A. Diloyan played a decisive role in revising the issues of periodization of the history of the Armenian people, in particular, the New and Latest periods, as well as in revising the old chronology. Earlier this

chronology was presented in conjunction with events that had no relation to the history of Armenia. Perhaps the most offensive was the fact that the researchers practically did not present anything about the history of the First Republic of Armenia (1918-1920), and what was presented was distorted.

Finally, V.A. Diloyan gave a new assessment of the problem of the stay of Armenia in the Russian Empire. This concerns the interpretation of both legal and political issues, as well as the socio-economic system.

The above range of issues, as well as other problems investigated by V.A. Diloyan, they give reason to consider the scientific heritage of the scientist a new phenomenon both in Armenology and in historical science as a whole.

Վ.Ա. ԴԻԼՈՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1 Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, 274 էջ.

2 Присоединение Восточной Армении к России, Сб. документов, Материалы по истории армянского народа, т. I, 1801-1813гг., (Введение Ц.П. Агаяна и В.А. Дилояна), Ер., 1972, с. 5-32, 715 с.

3 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում (XIV-XVIIIդդ.), խմբ. Ծ.Պ. Աղայանի և ուրիշ., Եր., 1972, էջ 428-432, 680 էջ.

4 Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Հայաստանը 1801-1870 թվականներին, խմբ. Ծ.Պ. Աղայանի և ուրիշ., Եր., 1974, էջ 13-60, 201-272 (համահեղ. Վ.Հ. Ռշտունի), 732 էջ.

5 Присоединение Восточной Армении к России, Сб. документов, Материалы по истории армянского народа, т. II, / Введение Ц.П. Агаяна и В.А. Дилояна, Ер., 1978, 661 с.

6 Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989. 356 էջ.

7 Հայոց պատմություն, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Եր., 2010, խմբ. Վ.Բ. Բարխուդարյանի և ուրիշ., էջ 13-52, 179-200 (համահեղ. Ն. Սարուխանյան), 261-283, 701 էջ.

8 Երևանի պետական համալսարան. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ 1945-1953, Ազատյան Հ., Դիլոյան Վ., Լյուլիկյան Ա., Երևան, 2004.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱԳՐԵՐ

1 Хозяйственная, политическая и культурная деятельность Лазаревых в России, автореф. дисс. на соиск. уч. степени к.и.н. Ер., 1962.

2 Восточная Армения в первой трети XIX столетия и армяно-русские отношения, автореф. дисс. на соиск. уч. степени д.и.н. Ер., 1976 [137].

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1 Մեկ նորահայտ նկարի մասին, ՊԲՀ, 1960, № 1, էջ 265-266.

2 Լազարյան ճեմարանի հիմնադրման պատմությունից, Տեղեկագիր, 1961, № 7, էջ 55-68.

3 Լազարյանների լեռնարդյունաբերական ձեռնարկությունների պատմությունից (XVIII դար), Տեղեկագիր 1962, № 9, էջ 33-48.

4 Հայ գործիչների վերաբերմունքը դեպի 1812 թ. Հայրենական պատերազմը, Տեղեկագիր 1962, № 10, էջ 3-12.

5 Էջեր Ռուսաստանում հայ վաճառականների կապիտալի պատմությունից, ՊԲՀ, 1962, № 4, էջ 69-82.

6 Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությանը նվիրված գիտական նստաշրջան, ՊԲՀ, 1963, № 4, էջ 264-265.

---

[137] Քանի որ, ատենախոսությունների սեղմագրերը չեն պահպանվել, նույնիսկ ՀՀ Ազգային գրադարանի պահոցներում, ուստի և դրանց էջերի քանակը մեր կողմից չեն մատնանշվել:

7 Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թվականներին (նոր փաստաթղթեր), ՊԲՀ, 1964, № 2, էջ 249-251 (համահեղ. Վ.Կ. Ոսկանյան).

8 Գիտությանը նվիրված կյանք, Սովետական Հայաստան, 1964, № 1, էջ 25-26.

9 Նոր վավերագրեր Իսրայել Օրու մասին, Տեղեկագիր, 1965, № 3, էջ 87-90.

10 Հայկական եղեռնի 50-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, Տեղեկագիր, 1965, № 5, էջ 96-97.

11 Լազարյան ճեմարանը, Տեղեկագիր 1965, № 12, էջ 37-52.

12 Армяно-русские отношения в первой трети XVIIIв, Сб. док., ч. I, под. ред. А. Иоаннисяна, Ер., 1964, - Գրախոսական ՊԲՀ, 1966, № 1, էջ 281-286.

13 Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան, ՊԲՀ, 1967, № 2-3, էջ 179-186.

14 Ականավոր գիտնականը և քաղաքացին, Բանբեր Հայաստանի արխիվների, 1967, № 3, էջ 267-272.

15 Աշոտ Հովհաննիսյան, ԼՀԳ, 1967, № 6, էջ 114-117.

16 Историографический очерк новой истории Армении, ԼՀԳ,, 1967, № 3, էջ 24-43 (соавторы Г.М. Казарян, Д.А. Мурадян).

17 Վահան Ռշտունի, ԼՀԳ, 1970, № 2, էջ 117-118.

18 Աշոտ Հովհաննիսյան, «Մեր անվանի դասախոսները» գրքում, Եր., 1970, մաս 1, խմբ. Ս.Գ. Ներսիսյանի, էջ 135-137.

19 Против фальсификации истории, Литературная Армения, Ер., 1970 № 2, էջ 34-36.

20 Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան, «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» - գրքում, Խմբ. Վ.Բ. Բարխուդարյանի, Վ.Ա. Հակոբյանի, Եր., 1971, էջ 9-28.

21 Էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դարի սկզբին, «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» - գրքում, Խմբ. Վ.Բ. Բարխուդարյանի, Վ.Ա. Հակոբյանի, Եր., 1971, էջ 153-179.

22 Վ.Ս. Մարտիրոսյան, «Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում XIX դարի 20-ական թթ.»- Գրախոսական ԼՀԳ, 1972, № 7, էջ 103-104.

23 D. M. Lang. Armenia Cradle of Civilization. London, 1970 – Գրախոսական ՊԲՀ, 1972, № 3, էջ 276-280.

24 D. M. Lang. Armenia Cradle of Civilization. London, 1970 Armenia today, 1972.

25 Աշոտ Հովհաննիսյան, Մատենագիտություն, Կազմ. Վ.Ա. Դիլոյանը, Եր., 1973, 64 էջ.

26 Լուսավորության շարժման առաջին քայլերը հայ իրականության մեջ, ԼՀԳ, 1973, № 3, էջ 13-24.

27 Հայ ժողովրդի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը. Խմբ. պրոֆ Ս.Գ. Ներսիսյանի), Եր., 1972 - Գրախոսական ԲԵՀ, 1973, № 2, էջ 250-253.

28 Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (պատմական քարտեզ), Եր., 1974 (համահեղ. Հ.Ս. Ղազարյան, Լ.Հ. Վալեսյան).

29 Հայկական մարզ (պատմական քարտեզ), Եր., 1974 (համահեղ. Հ.Ս. Ղազարյան, Ս.Ս. Դուլյան).

30 Ս.Ս. Պողոսյան, «Հայ-ռուսական բարեկամության պատմությունից (XIX դարի Ռուս-թուրքական պատերազմների Կովկասյան ռազմաճակատում)», Եր., 1974 - Գրախոսական ԼՀԳ, 1974, № 10, էջ 117-119.

31 Վ.Ա. Բայբուրդյան, «Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914)», Եր., 1974 - Գրախոսական ԼՀԳ, 1975, № 6, էջ 91-93.

32 В.А. Дунаевский, «Советская историография новой истории стран Запада. 1917-1941 гг.» М., 1974 - Գրախոսական ԼՀԳ, 1975, № 8, էջ 114-116.

33 Ф.М. Алиев, «Антииранские выступления и борьба против турецкой агрессии в Азербайджане в первой половине XVIII века», Баку, 1975 - Գրախոսական ԼՀԳ, 1976, № 7, էջ 103-104.

34 Հայ ազգային-ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորումը, Սովետական Հայաստան, 1976, № 9, էջ 15-16.

35 Եղեռն և վերածնունդ, Հայրենիքի ձայն, 27 ապրիլի 1977, № 17, էջ 2-3.

36 Հայերի մասնակցությունը Պետրոս I-ի Կասպիական արշավանքին, Սովետական Հայաստան, 1977, № 9, էջ 18-23.

37 Ականավոր մարքսիստ-պատմաբանը, Լենինյան ուղիով, ՀԿԿ ԿԿ ամսագիր, 1977, № 7, էջ 92-96.

38 Ռուսաստանը և հայ ազատագրական միտքը XIX դարի 20-ական թվականներին, Պատմության հարցեր, միջբուհական ժողովածու, պրակ 1, Եր., 1978.

39 Присоединение Восточной Армении к России и его историческое значение, Ер., 1978, Сб. статей, Присоединение Восточной Армении к России и его историческое значение, էջ 6-30.

39 Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, ԲԵՀ, 1978, № 2, էջ 3-22.

40 Ռուսաստանը և հայ ազատագրական միտքը XVIII դարի երկրորդ կեսին, Ագիտատոր և պրոպագանդիստ, ՀԿԿ ԿԿ հանդես, 1978, № 5, էջ 30-34.

41 Հայկական լուսավորականությունը XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի սկզբին Ռուսաստանում և հայ ազգային-ազատագրական շարժումը, Ագիտատոր և պրոպագանդիստ, ՀԿԿ ԿԿ հանդես, 1978, № 11, էջ 39-43.

42 Հայ-ռուսական հարաբերությունները XIX դարի առաջին քառորդում, Սովետական Հայաստան, 1978, № 2, էջ 29-30.

43 1768-1774 թթ. Ռուս-թուրքական պատերազմը և Մ. Սարաֆյանի Հայաստանի ազատագրության ծրագիրը, Լրաբեր, Նյու-Յորք, 2. 09. 1978, № 8.

44 Հայ ազգային-ազատագրական պայքարը XVIII դարի սկզբին և Ռուսաստանը, Երևան շաբաթաթերթ, Սոֆիա, 18. 08. 1978, № 32.

45 Հերոսամարտ լինելիության, Հայրենիքի ձայն, 26. 05. 1978.

46 Հերոսամարտ լինելիության, Լրաբեր, Նյու-Յորք, 5. 08. 1978.

47 Дж.С. Киракосян, «Буржуазная дипломатия и Армения» - Գրախոսական, Литературная Армения, 1978, № 11, էջ 104-107.

48 Поборник свободы и братства. - Գրախոսական, Коммунист, 4. X. 1980, № 232.

49 Հայկական Սովետական Հանրագիտարանի 8-րդ հատորը. - Գրախոսական, Սովետական Հայաստան, 28. 09. 1983.

50 XVIII դարի հայ պատմափիլիսոփայությունը. - Գրախոսական, Սովետական Հայաստան, 4. 09. 1984.

51 Պատմական ճշմարտացիությամբ. - Գրախոսական, Սովետական Հայաստան, 28. 09. 1983.

52 «Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետումարը» Աշխ. Ռ.Ա. Աբրահամյանի. - Գրախոսական, ՊԲՀ, 1985, № 3, էջ 216-219.

53 Լազարյան տոհմը - Գրախոսական, Սովետական Հայաստան, 8. IX. 1985.

54 Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը (200-ամյակի առթիվ), ՊԲՀ, 1989, № 2, էջ 3-14.

55 «Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ», թարգ. Բնագրից և ծանոթագր. Պ.Մ. Խաչատրյանի - Գրախոսական, ԲԵՀ, 1989, № 1, էջ 222-231.

56 «Ազդարար» հանդեսի 200-ամյակի առթիվ, ԲԵՀ, 1994, № 3, էջ 15-21.

57 Հայ ազգային-ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջ, Պայքար, 1995, № 6-7, էջ 13-18.

58 Վերստին և նորովի անդրադարձ Հայկական հարցին, Ազգ, 1996, № 16.

59 Հայոց մեկ և կես-դարյա պատմության հայելին, Հայաստանի հանրապետություն, 18. 09. 1996.

60 Հայ ազգային գաղափարախոսության հարցի շուրջ, Դրոշակ, 1997, № 1, էջ 3.

61 Մեկ էջ Ներսես Աշտարակեցու հայրենասիրական գործունեությունից, Էջմիածին, 1998, № 7, էջ 81-88.

62 Հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ, Դրոշակ, 1998, № 16, էջ 26-33.

63 Հայոց պատմության պարբերացման հարցի շուրջ, ԲԵՀ, 1998, № 3, էջ 203-207.

64 Իմաստավորված և նպատակասլաց կյանք (ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի ծննդյան 75-ամյակի առթիվ), ԼՀԳ, 2000, № 1, էջ 240-443 (համահեղ. Հ.Ա. Ավետիսյան).

65 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Գրախոսական, ՊԲՀ, 2003, № 3, էջ 258-265.

ԳԻՏԱ-ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1 Лео, СИЭ, т. 8, М., 1965, էջ 584-585.

2 Мадрасский кружок, СИЭ, т. 8, М., 1965, էջ 899.

3 Нерсес Аштаракеци, СИЭ, т. 10, М., 1967, էջ 196.

4 Общественная мысль Армении с древнейших времен до начала XX века, БСЭ, т. 2, М., 1970, էջ 235-236 (համահեղ.Վ.Կ Չալոյան, Ա.Կ. Սուքիասյան, Խ.Գ. Գուլանյան).

5 Историческая наука в Советской Армении, БСЭ, т. 2, М., 1970, էջ 236-237 (համահեղ. Լ.Լ. Կարապետյան).

6 Աբամելիք Դավիդ Սեմյոնի, ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 13.

7 Աբամելիք-Լազարև Սեմյոն Սեմյոնի, ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 13.

8 Աբամելիք-Լազարև Աննա Դավիդովնա, ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 13-14.

9 Աբամելիքներ, ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 14.

10 Աբբաս-Միրզա, ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 16.

11 Ալխազով Հակոբ, ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 178.

12 Ակտի Կավկազսկոյ արխեոգրաֆիչեսկոյի կոմիսսիի, ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 230.

13 Աղանյան Գյուտ, ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 245.

14 Աջարական ՍՍՀ (պատմական ակնարկ), ՀՍՀ, հ. I, Եր., 1974, էջ 520.

15 Արղության-Երկայնաբազուկ Մովսես Զաքարի, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 86-87.

16 Արղության-Երկայնաբազուկ Կոնստանտին Բարսեղի, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 86.

17 Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 83-85.

18 Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (պատմական քարտեզ), ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 84 (համահեղ. Հ.Մ. Ղազարյան, Լ.Ս. Վալեսյան).

19 Բեհբուներ, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 382.

20 Բեհբության Բարսեղ Հովսեփի, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 382-383.

21 Բենկենդորֆ Ալեքսանդր Խրիստոֆորովիչ ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 395.

22 Բենկենդորֆ Կոնստանտին Խրիստոֆորովիչ, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 395.

23 Բուրցով Իվան Գրիգորևիչ, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 628.

24 Բուխարեստի հաշտության պայմանագրեր. 1912, 1913, 1918, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 605.

25 Գեղամյաններ, ՀՍՀ, հ. II, Եր., 1976, էջ 709.

26 Գոլովին Ե.Ա., ՀՍՀ, հ. III, Եր., 1977, էջ 148.

27 Դանիել Ա Սուրմատեցի, ՀՍՀ, հ. III, Եր., 1977, էջ 282.

28 Դավիթ-Դանիելյան վեճ, ՀՍՀ, հ. III, Եր., 1977, էջ 303-304.

29 Դավիթ Ե. Ենեգեթցի, ՀՍՀ, հ. III, Եր., 1977, էջ 404.

30 Դելյանով Դ.Ա., ՀՍՀ, հ. III, Եր., 1977, էջ 307.

31 Դիվանագիտություն, ՀՍՀ, հ. III, Եր., 1977, էջ 403-408 (հեղ. կոլեկտիվ).

32 Ենիկոլոփյաններ, ՀՍՀ, հ. III, Եր., 1977, էջ 517.

33 Եփրեմ Ա Զորագեղցի, ՀՍՀ, հ. III, Եր., 1977, էջ 645.

34 Թահիրյաններ, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 127.

35 Թամամշյաններ, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 132.

36 Իսրայել Օրի, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 417-418.

37 Լազարև Ի.Դ., ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 468-469.

38 Լազարյան Ա.Ն., ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 469.

39 Լազարյան Խ.Հ., ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 470.

40 Լազարյան Հովակիվ, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 470.

41 Լազարյան Հովհաննես, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 470.

42 Լազարյան Մինաս, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 470.

43 Լազարյաններ, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 559.

44 Հայերը Լենինգրադում, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 559.

45 Լոռիս-Մելիքյաններ, ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 664.

46 Լոռիս-Մելիքով Մ.Տ., ՀՍՀ, հ. IV, Եր., 1978, էջ 664.

47 Կովկասի փոխարքայություն, ՀՍՀ, հ. V, Եր., 1979, էջ 633-634.

48 Կրասովսկի Ա.Ի., ՀՍՀ, հ. V, Եր., 1979, էջ 632-633.

49 1817-1864 թթ. Կովկասյան պատերազմը, ՀՍՀ, հ. V, Եր., 1979, էջ 633-634.

50 Հայ ազատագրական լեգենդը, ՀՍՀ, հ. VI, Եր., 1980, էջ 121.

51 Հայկական մարզ, ՀՍՀ, հ. VI, Եր., 1980, էջ 188.

52 Հովհաննես Թութունջի, ՀՍՀ, հ. VI, Եր., 1980, էջ 564.

53 Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի, ՀՍՀ, հ. VI, Եր., 1980, էջ 568.

54 Մաղրասի խմբակը, ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 128.

55 Մահտեսի Մուրադ (Շահմուրադ Բաղիշեցի), ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 187.

56 Մարտիրոս դի Առաքել, ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 346.

57 Մելիք-Աղամալյան Ա.Ս., ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 386.

58 Մելիք-Աղամալյան Ս.Ա., ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 386.

59 Մելիք-Աղամալյաններ, ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 386.

60 Մեսրոպ Վայոցձորցի, ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 469.

61 Մինաս Տիգրանյան, ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 554.

62 Մխիթար Սպարապետ, ՀՍՀ, հ. VII, Եր., 1981, էջ 634.

63 Հայերը Մոսկվայում, ՀՍՀ, հ. VIII, Եր., 1982, էջ 29-31.

64 Նիկոլայ II, ՀՍՀ, հ. VIII, Եր., 1982, էջ 298.

65 Նիկոլայ Նիկոլաևիչ (Կրտսեր), ՀՍՀ, հ. VIII, Եր., 1982, էջ 298.

66 Շամիլ, ՀՍՀ, հ. VIII, Եր., 1982, էջ 410.

67 Շերեմետև Բ.Պ., ՀՍՀ, հ. VIII, Եր., 1982, էջ 485-486.

68 Չելեբիություն, ՀՍՀ, հ. VIII, Եր., 1982, էջ 688.

69 Պասկևիչ Ի.Ֆ., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 138.

70 Պարսկական արշավանքը 1722-1723թթ., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 208.

71 Պարսկական արշավանքը 1796թ., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 208.

72 Պետերբուրգյան պայմանագիր. 1723թ., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 352.

73 Պետրոս I Մեծ, ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 259-261.

74 Պոգոդին Մ.Պ., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 345.

75 «Պոլոժենիե» 1836, ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 364.

76 Պոտյոմկին Գ.Ա., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 387.

77 Պոտյոմկին Պ.Ս., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 387-388.

78 Պուշչին Մ.Ի., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 464.

79 Ջեֆերսոն Տ., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 511.

80 Ռշտունի Վ.Հ., ՀՍՀ, հ. IX, Եր., 1983, էջ 682.

81 Հայաստանը ՌՍՖՍՌ-ի կազմում, ՀՍՀ, հ. X, Եր., 1984, էջ 49-50.

82 Ռուս-թուրքական դաշնակցային պայմանագրեր, ՀՍՀ, հ. X, Եր., 1984, էջ 92.

83 Ռուս-թուրքական պայմանագիր. 1724թ., ՀՍՀ, հ. X, Եր., 1984, էջ 93.

84 Ռուս-թուրքական պատերազմներ. XVIII-XIXդդ., ՀՍՀ, հ. X, Եր., 1984, էջ 94-96.

85 Ռուս-թուրքական պատերազմներ. 1804-1813, 1828-1829, ՀՍՀ, հ. X, Եր., 1984, էջ 101-103.

86 Սարաֆյան Մովսես, ՀՍՀ, հ. X, Եր., 1984, էջ 215.

87 Հայ ազատագրական շարժումները XVII-XVIII դարերում, ՀՍՀ, Սովետական Հայաստան հատուկ հատոր, Եր., 1987, էջ 126-129.

88 Հայաստանը XIX դարի առաջին կեսին, ՀՍՀ, Սովետական Հայաստան հատուկ հատոր, Եր., 1987, էջ 129-144.

89 Հայ հասարակական-քաղաքական հոսանքները, ՀՍՀ, Սովետական Հայաստան հատուկ հատոր, Եր., 1987, էջ 142-144 (Համբարյանի համահեղ. Ա. Համբարյան).

90 Ադոնց (Տեր-Ավետիքյան Նիկողայոս Գևորգի), Հայկական հարց հանրագիտարան, Եր., 1996, էջ 18.

91 Արևելյան Հայաստան, Հայկական հարց հանրագիտարան, Եր., 1996, էջ 36-37.

92 Արևմտյան Հայաստան, Հայկական հարց հանրագիտարան, Եր., 1996, էջ 68-69.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Սոմերսեթ Մոեմ, Ստրկություն մարդկային, թարգ. անգլերենից, Եր., 1965, 608 էջ.

2 Գայոս Սվետոնիոս Տրանքվիլոս, Տասներկու կեսարների կյանքը, թարգ. ռուսերենից, Եր., 1986. 520 էջ.

3 Ա.Պ. Բազիյանց, Էջեր Լազարյանների դիվանից (Ակնարկ), Եր., 1986, 190 էջ.

3 Նիկողայոս Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, թարգ. անգլերենից, Եր. 1989, 116 էջ.

4 Նիկողայոս Ադոնց, Հայկական հարց, հ. Ա, թարգ. անգլերենից, Եր., 1996. 244 էջ.

ԴԱՍԱԳՐՔԵՐ

1 Միջին դարերի պատմություն, Դասագիրք 6-րդ դասարանի համար, Եր., 2000. 160 էջ (համահեղ. Գ.Ս. Հարությունյան).

2 Վ.Ա. Դիլոյան, Ա.Վ. Քոսյան, Ա.Է. Խաչիկյան և ուրիշ., Հին աշխարհի և միջին դարերի պատմություն, V-VI դասարաններ, Եր., 2000, 63 էջ.

3 Դիլոյան Վ. և ուրիշ., Պատմություն. Դասագիրք 10-րդ դասարանների համար, Եր., 2001, 303 էջ.

Վ.Ա. ԴԻԼՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԽՄԲԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ա.Հ. Իգնատյան, Լազարյան ճեմարանը, Եր., 1969, 354 էջ.

2 Հ.Խ. Թոփուզյան, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Եր., 1978, 359 էջ.

3 Վ.Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Եր. 1964, 425 էջ.

4 Վ.Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801-1917), Եր. 1970, 350 էջ.

5 С.А. Тер-Авакимова, Армяно-русские отношения в период подготовки персидского похода, Ер., 1980, 128 с.

6 Г.М. Казарян, Арутюн Свачян, Ер., 1981, 166 с.

7 Թ.Խ. Հակոբյան, Պատմական Հայաստանի քաղաքները (Սոցիոլոգիական, ազգագրական աշխատություն), Եր., 1987, 256 էջ.

8 Մ.Մ. Թելունց, Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավա-քաղաքական միտքը, Եր., 1995, 310 էջ.

9 Մ.Ա. Մուրադյան, Հայկական հարցը և ռուսական հասարակական-քաղաքական և պատմագիտական միտքը, Եր., 1998, 182 էջ.

10 Մ.Ս. Կարապետյան, Հայոց 1915-1916 թվականների ցաղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Եր., 1998, 372 էջ.

11 Ռ.Բ. Փիրումյան, Հայկական հարցի պատմություն. Հանրակրթական դպրոցի 9-10 դասարանների դասագիրք, Եր., 2002, 263 էջ.

12 Մ.Ս. Կարապետյան, Հայաստանը 1912-1920 թվականներին. Ուսումնական ձեռնարկ Բուհերի համար, Եր., 2003, 400 էջ.

13 Պ.Ս. Սիմոնյան, Հայկական հարցը և ռուսական հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թվականներին, Եր., 2003, 446 էջ.

14 Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը 1945-1953, խմբ. Ազատյան Հ., Դիլոյան Վ., Լյուլիկյան Ա. և ուրիշ., Եր., 2004, 230 էջ.

15 Ա. Գասպարյան, Իրանի պատմության հարցերը XVII-XVIII դարերի հայ պատմիչների երկերում, Եր., 2006, 201 էջ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Վ.Ա. ԴԻԼՈՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1 Դիլոյան Վալտեր Արտաշեսի, Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Եր., 1995, էջ 47.

2 Դիլոյան Վալտեր Արտաշեսի, Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը 1945-1953, խմբ. Ազատյան Հ., Դիլոյան Վ., Լյուլիկյան Ա. և ուրիշ., Եր., 2004, էջ 194-195.

3 Ով ով է, հայեր. Կենսագրական հանրագիտարան, խմբ. Հ.Մ. Այվազյանի, հ. 1, Եր., 2005, էջ 351-352.

4 Դիլոյան Վալտեր Արտաշեսի, ԵՊՀ կենսագրական հանրագիտարան, խմբ. Ա.Հ. Սիմոնյանի, Եր., 2009, էջ 209-210.

5 Դիլոյան Վալտեր Արտաշեսի, ԵՊՀ Պատմության 90-ամյա ֆակուլտետը, Եր., 2009, էջ 166.

6 Դիլոյան Վալտեր Արտաշեսի, Հայաստանի հանրապետություն, օրաթերթ, 14. 05. 2005, էջ 5 (մահախոսական).

7 Վալտեր Դիլոյան, ԲԵՀ, 2005, № 2, էջ 208-209 (մահախոսական).

8 Դիլոյան Վալտեր Արտաշեսի, Երևանի համալսարան թերթ, 2005 թ. մայիս:

9 ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ: Անվանի հայագետների 80-ամյակին http://www.armin.am/am/news/13.

10 Дилоян Вальтер Арташесович. Энциклопедия фонда Хайазг. См. http://ru.hayazg.info/%D0%94%.

11 Դիլոյան Վալտեր Արտաշեսի, Վիքիպեդիա, ազատ հանրագիտարան. https://hy.wikipedia.org/wiki/%D5%.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԵՀ – Բանբեր երևանի համալսարանի
ԲՀԱ - Բանբեր Հայաստանի արխիվների
ԵԼԺ – Երկերի լիակատար ժողովածու
ԺԿԽ – Ժողովրդական կոմիսարների խորհուրդ
Ձ.Կ.Մ. - Ձերդ Կայսերական Մեծություն
АКАК – Акты Кавказской Археографической комиссии
АВПР - Архив внешней политики России
ВОН – Вестник общественных наук
НЛО - Новое литературное обозрение
ЦГВИА - Центральный государственный военно- исторический архив
ЦГИА – Центральный государственный исторический архив

СОДЕРЖАНИЕ

Вместо введения или от автора. 6
В.А.Байбуртян. Талантливый историк и достойный интеллигент.....10
О.Е. Петрунина. В.А Дилоян «Исследователь вопросов освобождения Армении».....13

ГЛАВА I
ДЕЯТЕЛЬНОСТЬ ПРОФЕССОРА ВАЛЬТЕРА АРТАШЕСОВИЧА ДИЛОЯНА В 1950-1980 гг

А. Жизнь и начало научно-педагогической деятельности (краткий очерк).....15
Б. Дорога к пикам науки 18
1) История и деятельность Лазарянов в мировоззрении В.А. Дилояна 18
2) В.А. Дилоян и вопросы истории Армении XIX века 34
В. Монография В.А. Дилояна «Восточная Армения в первой трети XIX века и армяно-русские отношения» как исследование переходного идеологического периода 42

ГЛАВА II
ИСТОРИЧЕСКАЯ ФИЛОСОФИЯ В.А. ДИЛОЯНА В ПОСТСОВЕТСКИЕ ГОДЫ

А. В.А. Дилоян и вопрос новой периодизации истории Армении……...78
Б. Новое истолкование вопросов истории Армении XVI-XIX В.А. Дилояном……....84
1) Освещение армянских освободительных движений XVI в. ……...84
2) Освещение армянских освободительных движений второй половины XVII в. – начала XVIII в.……..89
3) Вопрос присоеденения Восточной Армении к России в историчой концепции В.А. Дилояна ……103
4) Вопрос нахождения Восточной Армении в составе России в историческом мировоззрении В.А. Дилояна (юридическо-политическое и социально-экономическое состояние)……..108
5) В.А. Дилоян как переводчик и редактор……114
Заключение (на арм. яз.)……118
Заключение (на рус. яз.)……120
Summary……122
Хронологический список опубликованных трудов В.А. Дилояна……124
Литература о жизни и опубликованных трудах В.А. Дилояна……137
Сокращения……138

CONTENTS

Instead of an introduction or from the author……6
V.A. Bayburtian. Talented historian and worthy intellectual...10
O.E. Petrunin. V.A Diloyan «Researcher of the Issues of the Liberation of Armenia»……13

CHAPTER I

ACTIVITY OF PROFESSOR VALTER ARTASHESOVICH DILOYAN IN 1950-1980

A. Life and the beginning of scientific and pedagogical activity (short outline)……15
B. The road to the peaks of science……18
1) The history and activities of the Lazaryans in the worldview of V.A. Diloyan……18
2) V.A. Diloyan and questions of the history of Armenia of the 19th century……34
C. Monograph V.A. Diloyan «Eastern Armenia in the first third of the XIX century and the Armenian-Russian relations» as a study of the transitional ideological period……42

CHAPTER II

A. V.A. Diloyan and the issue of a new periodization of the history of Armenia……78
B. A New Interpretation of the Issues of Armenian History XVI-XIX V.A. Diloyan……84
1) Coverage of the Armenian liberation movements of the XVI century. ……84
2) Coverage of the Armenian liberation movements of the second half of the XVII century. - beginning of the XVIII century……89

3) The issue of accession of Eastern Armenia to Russia in the historical concept of V.A. Diloyan.....103
4) The question of finding Eastern Armenia as part of Russia in the historical worldview of V.A. Diloyan (legal-political and socio-economic status).....108
5) V.A. Diloyan as a translator and editor.....114
Conclusion (in Armenian).....118
Conclusion (in Russian).....120
Conclusion.....122
Chronological list of published works of V.A. Diloyan.....124
Literature about the life and published works of V.A. Diloyan.....137
Abbreviations.....138

LIMUSH PRINTHOUSE

Չափսը՝ 60x84 1/16, թուղթ օֆսեթ N 1:
Ծավալ՝ 9 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 150:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ ՍՊԸ»-ի տպարանում:
ք.Երևան, Դ.Մայյան 45:
հեռ.՝ 094-58-22-99, E-mail: info@limush.am